# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 26 (1274) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 22,2006
VOLUME 26, NO. 26 (1274) SATURDAY, JULY 22, 2006

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

## «ԵԹԷ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՕՇԻ ՄԸ ՏԱԿ ՀԵՏԱՊՆԴՈՒԷՐ»

### ՀՆՉԱԿԵԱՆ 20-ՆԵՐՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 91-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Այս տարի իր լրումին հասաւ Հնչակեան 20 առաքելատիպ առաջնորդներուն, նահատակութեան 91-րդ տարեդարձը: Անոնց գաղափարական մեծ ընտանիքը, Հնչակեան Մայր Կուսակցութիւնը, կը խոնարհի անոնց խնկելի, այլապէս անթառամ յիշատակին առջեւ:

Հնչակեան 20 ռահվիրաներու կեանքի օրինակը, որպէս սրբազան աւանդ՝ իր մէջ կը խտացնէ մարդկային ազնուագոյն սկզբունքները, որոնք, որպէս անմար փարոս, լուսաւորեցին, կը լուսաւորեն եւ միշտ պիտի լուսաւորեն, զիրենք յաջորդած «քսան հազարներու» կեանքի ուղին: .. «Մեզ քսաններս կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի», ըսին անոնք:

Անոնք ամբողջապէս իրենց ազգին նուիրուած մաքրամաքուր հայորդիներ, սիրեցին իրենց ազգն ու հայրենիքը անսահմանափակ աղապատանքով:

Իրենց ազգի ու հայրենիքի դարաւոր, միշտ երազ մնացած երազներու իրականացումը դարձուցին իրենց կեանքի բացարձակ երազը: Մինչեւ իրենց վերջին շունչը, կախաղաններու վրայ, հայ ազգի դարաւոր ցաւը սրտերնուն, գտնուեցան անոր կողքին, մնացին հաւատարիմ իրենց մեծ երազին, քաջալերեցին, լիցքաւորեցին ու հաստատ, յուսադրեցին զայն, մօտաւոր ապագայի անխուսափելի այլ փառաւոր յաղթանակով. «Հոն ուր կախաղաններն են ծնում, Ազատութիւնն է ման գալիս, հոն ուր մեռելներն են ննջում՝ Յարութիւնն է ման գալիս»:

Բաւ էր, որ հայը անվերջ հալածուէր իր դարաւոր հայրենիքին մէջ: Անարգուէր, անպատուուէր, հարստահարուէր, եւ խտրականանար օրէնքի առջեւ: Խոշտանգուէր: Հաւաքաբար սպանդի ենթարկուէր: Վերջին հաշւով, ազգովին ենթակայ դառնար բնաջնջման սպառնալիքի...:

Այդ զողգոթան դարձաւ իր կեանքի դաժան բաժինը, որովհետեւ, համաձայն Օսմանեան լուծին՝ հայը կը նկատուէր «կեաւուր», «այլախոհ», «ապերախտ», «ըմբոստ», «անջատողական» թող որ, Փարամազ պիտի ըսէր այդ բոլորը, իր ինքնապաշտպանողական ելոյթին մէջ. «Դուք մեր կենսաhիւթով ապրեցաք դարեր շարունակ...» ցոյց տալով հայուն դարաւոր ծառայասիրութիւնները հանդէպ օսմանեան կայսրութեան:

Անշուշտ, թուրքը գիտէր այդ իրողութիւնը, Հայուն նուիրուածութիւնն ու կառուցողական տաղանդը, որոնք ի սպաս դրուեցան երկրի յառաջդիմութեան: Թուրքը սակայն զինք վարձատրեց գերագոյն վատութեամբ: Իթթիհատ կը ստէր երբ կը կատարէր այդ մեղադրանքները: Ան պարզապէս կը ծածկէր իր սարքած բանթուրք կայսրութիւն մը հիմնելու ծրագիրը: Հայաստանի ֆիզիքական ներկայութիւնը կը խոչընդոտէր մինչեւ ծայրագոյն Արեւելք տարածուելու սահուն ճանապարհները: Ցեղասպանութիւնն ու Հայաստանի բնաջնջումը նախապայմաններ դարձան այդ ծրագրի կենսագործման ճամբուն, Սելանիկի Իթթիհատական 1911-ի համաժողովի բանաձեւած, «Հայաստան՝ առանց հայութեան» կարգախօսի տակ:

Իրենց ազգի բնաջնջումը կանխարգիլելու եւ անոր՝ «մարդավայել ապրելուն եւ արտադրելուն համար», 20-ները, յանուն ազգի ու հայրենիքի, անտեսելով ամէն անձնական հանգստութիւն, ֆիզիքական ապահովութիւն, սէր ու գուրգուրանք՝ նախաձեռնեցին Իթթիհատի պարագլուխները զգետնելու կոչուած, Հնչակեան 7-րդ համագումարի որոշումին -գործադրութեան. «...կանգնիլ միմիայն իր սկզբունքներէն բխող ոչ-օրինական (Իլլէկալ) գետնի վրայ եւ այդպէսով մղել կուսակցական պայքար մինչեւ որ աւելի նպաստաւոր քաղաքական ու տնտեսական պայմաններ ստեղծուին»: Մեծ էին անոնք, նաեւ, իրենց համամարդկային գաղափարախօսութեամբ:

Անոնք, համամարդկային եւ ընկերվարական մաքրամաքուր ու մարդկային կեանքը բարեշրջող սկզբունքներով տոգորուած՝ աշխատեցան սերտ կապեր հաստատել կայսրութեան մէջ ապրող ընչազուրկ, ճնշուած ու անիրաւուած՝ թուրք, եզիտի, քիւրտ, ասորի եւ այլ ժողովրդական խաւերու հետ եւ պայքարիլ անոնց իրաւունքներուն պաշտպանութեան համար: Փարամազ, իր ինքնապաշտպանողական ելոյթին մէջ պիտի ակնարկէր. «Ես Տիգրանակերտի կողմերը իմ գաղափարներս հաւասար սիրով ու եռանդով տարածած եմ՝ ինչպէս հայուն, այդպէս եւ թուրքին ու քիւրտին, ասորիին ու արաբին»:

Իրաւամբ, անոնք մեծ էին, նաեւ, իրենց համամարդկային տեսիլքներով:

Ճիշդ էր Խուրշիտ Պէյ, երբ 20-ներու դատավարութեան ընթացքին, իր եզրափակիչ խօսքին աւարտին կ'ըսէր, «թէ ինչեր չէին կրնար ընել ձեզի պէս խանդավառ մարդիկ, եթէ երջանկութեան տեսլականը ընդհանուր դրօշի մը տակ հետապնդուէր»: Հնչակեան 20-ները, տառօրէն պայքարեցան ճնշուած մարդկութեան ազատագրութեան համար. «Պայքարիլ՝ տառապող աշխատաւորութեան յաղթանակին համար», պիտի ըսէին անոնք: 20-ները, սատար հանդիսացան ազգերու միջեւ եղբայրական կապերու հաստատման եւ

Շար.ը էջ 18

## «ՄԵԾ ՈՒԹՆԵԱԿԻ» ԵՐԿԻՐՆԵՐԸ ԿՈՉ ԸՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԻԼ 2006 ԹՈՒԱԿԱՆԻՆ

*Սան Փիթըրսպուրկ մէջ անցեալ շաբաթավերջին կայացած «Մեծ Ութնեակի» գագաթի ժողովին, անդրադարձ եղաւ նաեւ ղարաբաղեան հակամարտութեան եւ Լեռնային Ղարաբաղի հարցը տեղ գտաւ ժողովի ընդունուած եզրափակիչ յայտարարութեան մէջ:*

*«Մենք հաստատեցինք, որ Ութնեակը կ'աջակցի ԵԱՀԿ Մինսկին Խումբի (Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու) միջնորդական ջանքերուն, եւ ընդգծեցինք 2006 թուականի ընթացքին հակամարտութեան խաղաղ կարգաւորման սկզբունքներու շուրջ արագ համաձայնութեան գալու անհրաժեշտութիւնը: Մենք կոչ կ'ընենք Ատրպէյճանին եւ Հայաստանին՝ քաղաքական կամք ցուցաբերել, հասնիլ պայմանաւորուածութեան եւ սեփական ժողովուրդներուն նախապատրաստել խաղաղութեան, այլ ոչ թէ պատերազմի»,-ըսուած է յայտարարութեան՝ ղարաբաղեան հակամարտութեան վերաբերող հատուածին մէջ:*

*Միւս կողմէ, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտին յայտարարեց է, որ Ռուսաստան պատրաստ է հանդէս գալ որպէս Լեռնային Ղարաբաղի հարցով Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ձեռք ձգուած համաձայնութեան կատարման երաշխաւոր:*

*«Փոխզիջման պէտք է հասնին այդ երկիրներու ժողովուրդները, իսկ Ռուսաստանը՝ գործընկերներու հետ միասին, պատրաստ է հանդէս գալ որպէս այդ պայմանաւորուածութիւններու կատարման երաշխաւոր», - Կիրակի, Յուլիս 16-ին «Մեծ Ութնեակի» գագաթի ժողովի առթիւ կայացած մամլոյ ասուլիսի ընթացքին ըսաւ Վլադիմիր Պուտին:*

*Ռուսաստանի նախագահը շեշտեց, որ «Մեծ Ութնեակի» պետութիւններու մեծ մասը «այս կամ այն չափով կը փորձէ աջակցիլ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման»:*

*«Գործընթացին ներգրաւուած են, մասնաւորապէս, Ֆրանսայի նախագահ Շիրակը եւ Միացեալ Նահանգներու առաջնորդ Ճորճ Պուշը», - ըսած է Պուտին:*

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌԱՒ ԼԻԲԱՆԱՆ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԸ ՄԱՏՆՈՒԻ



*Պէյրութի հարաւային շրջանները Իսրայէլեան օդային ռմբակոծումներու թիրախ*

*Յուլիս 12-էն սկսեալ Իսրայէլի բանակին կողմէ Լիբանանի դէմ շղթայազերծուած պատերազմին պատճառաւ մեծ դժուարութիւններ կը դիմագրաւեն նաեւ Լիբանան բնակող եւ կամ հոն գտնուող հայութիւնը:*

*Օդային, ծովային եւ ցամաքային ռմբակոծումները չեն խնայեր Լիբանանի ոչ մէկ շրջան եւ հետեւաբար հայութեան եւս կը սպառնայ մեծ վտանգ՝ ոչ միայն ապահովութեան առումով, այլ նաեւ տնտեսական եւ ընկերային գետնի վրայ, նկատելով որ ամբողջ երկիրը կը գտնուի շրջափակման տակ:*

*Մտավախութիւն կայ նաեւ, որ նոր արտահոսք մը սկսի Լիբանանէն դէպի այլ երկիրներ՝ առաւել տկարացնելով Հայ գաղութը:*

*Առայժմ հայ զոհեր չկան եւ հայկական հաստատութիւնները վնասուած չեն, սակայն շատեր որոնք Հայաստանէն եւ այլ երկիրներէն այցելութեամբ կը գտնուէին Լիբանան, դժուարութիւն ունին վերադառնալու իրենց երկիրները:*

*Լիբանանի հայկական կազմակերպութիւնները յայտարարած են թէ, պատրաստ են ընդունելու երկրի հարաւային շրջաններէն Պէյրութ ժամանող գաղթականները,*

Շար.ը էջ 18

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ՝ 98 C

Այժմ այն ժամանակահատուածն է, երբ օդի ջերմաստիճանը օր օրի բարձրանում է, եւ ըստ օդերեւութաբանների «բայղուշութեան», շուտով կարող է անցնել 40 աստիճանի նիշը: Բնական է, որ այդ պայմաններում մարդիկ տենչում են արձակուրդ, ցանկալի է զով լեռներում կամ ջրից ոչ հեռու: Եւ պատահական չէ, որ բնութեան ռիթմերով Վարդավառը, երբ բոլորն իրար ջրում են, այս տարի ընկնում է Յուլիսի 23-ի վրայ. հենց այդ պահն է ամենայարմարը սառը ջրով եւ ուրախ խաղ ու կատակով շոգը հոգեբանօրէն կոտրելու համար: Սակայն ե՛ւ աշխարհաքաղաքական, ե՛ւ ներքաղաքական զարգացումները ընթանում են այնպիսի ուղով, որ մեր պետական ու քաղաքական այրերը այդ օրը ո՛չ ջրուելու եւ ո՛չ էլ կատակելու սիրտ չեն ունենալու, քանզի Վարդավառին քաղաքական ջերմաստիճանը հասնելու է եռման կէտին: Ու քանի որ հայոց քաղաքամայր Երեւանում ջուրը եռում է 98 աստիճանի պարագայում, ուստի պայմանականօրէն կարող ենք ասել, որ շատ շուտով քաղաքական ջերմաչափը Հայաստանում ցոյց է տալու 98 աստիճան:

Բնականաբար, հարց է ծագում, թէ այս դրամատիկ աշխարհաքաղաքական իրավիճակում ինչ է անում Ռոբերդ Քոչարեանը: Եւ պարզւում է՝ նա մեկնել է արձակուրդ՝ միաժամանակ արձակուրդ ուղարկելով եւ արտգործնախարար Վարդան Օսկանեանին: Իսկ ինչպէս ցոյց է տալիս փորձը եւ ժողովրդական բանահիւսութիւնը, «Թարս» պահին ՀՀ Նախագահի արձակուրդները նախանշում են նրա կողմից որոշակի մտածմունքների կարճատեւ շրջան (ինչում Ռոբերդ Քոչարեանն ակնյայտօրէն ընդօրինակում է «աւագ գործընկեր» Վլադիմիր Պուտինին), եւ այդպիսի արձակուրդներին սովորաբար յաջորդում են բաւականին կտրուկ ներքաղաքական ու մասնաւորապէս կադրային քայլերը: Եւ այդ քայլերից մէկը արդէն իսկ ուրուագծւում է. Սերժ Սարգսեանը, չսպասելով ՀՀԿ-ի՝ Յուլիսի 22-ին կայանալիք համագումարին, շտապեց դառնալ հանրապետական, ու եթէ նա վայր չդնի իր նախարարական լիազօրութիւնները, ապա Ռոբերդ Քոչարեանից միանգամայն սպասելի է նրա պաշտօնանկութիւնը: Դրա համար դեռ ամիսներ առաջ (հաւանաբար՝ հենց այսօրուայ համար) Ռոբերդ Քոչարեանը ստեղծել էր նախապէս՝ ցուցադրաբար փաստացի պատժելով իր աշխատակազմի ղեկավար Արտաշէս Թումանեանին կուսակցութիւն ստեղծելու համար, իսկ հետագայում արգելելով Աղուան Յովսէփեանին զբաղուել կուսակցական շինարարութեամբ:

«Հսկաների պայքարի» միւս առանձնայատկութիւնն այն է, որ ակնյայտ կրիմինալի սրման ֆոնի վրայ իշխանական քարոզչամեքենայի մի մասը առաջ է տանում այն թէզը, որ Հայաստանի ամբողջ կրիմինալը այժմ կուտակւում է ՀՀԿ-ի եւ Սերժ Սարգսեանի հովանու ներքոյ: Անշուշտ, եթէ ՀՀ Նախագահը սկսում է պայքար այդպիսի «բոբոլի» դէմ, ապա նա կարող է ակնկալել ամերիկացիների, ռուսների ու եւրոպացիների աջակցութիւնը, ու դա չեն կարող չհասկանալ եւ «զոհաբերման ենթակայ» ճամբարի ներկայացուցիչները: Ուստի դրանով կարելի է բացատրել, թէ ինչու կրկին սկսեցին վերակենդանացնել «Տէց-ի կռուգի» փոխհրաձգութեան քրէական գործի պատմութիւնը, իսկ Նուբարաշէնի կլանի գործողութիւններն ընդդէմ «Չորրորդ իշխանութիւն» թերթի թղթակցի ոմանց համար բառիս բուն իմաստով նուէր են դարձել: Պարզ է, որ Սերժ Սարգսեանն ու հանրապետականները ձգտելու են ի ցոյց անել նաեւ այն, որ կրիմինալի առումով Ռոբերդ Քոչարեանի յենարաններն էլ, մեղմ ասած, սուրբ չեն: Այսինքն, պատկերաւոր ասած, համաշխարհային «պոլիտբիւրոյի»՝ կոռուպցիայի եւ կրիմինալի դէմ յայտարարուած հնգամեակի շրջանակներում Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի ճամբարները ձգտելու են փոխադարձաբար իրար «սկացնել» կրիմինալի մասին վկայող նիւթերի կոյտերով, ու թերեւս երկուսն էլ հասցնեն ստանալ հաւասարաչափ ոչ հրապուրիչ տեսք: Սակայն եթէ ենթադրենք, որ բանը չի հասնի երկուսին էլ սրբող-տանող «Նարնջագոյն» գործընթացի, ապա ռեսուրսային առումով Ռոբերդ Քոչարեանն ունի ակնյայտ առաւելութիւն, եւ եթէ դրան գումարենք «Հոկտեմբերի 27»-ից յետոյ դրսեւորած «հարուածը պահելու» եւ «դադարն ապահովելու» ունակութիւնը, ապա սխալուած չենք լինի, եթէ պնդենք, որ Ռոբերդ Քոչարեանը կ՚օգտագործի թէկուզեւ ամենաչնչին շանսը՝ մնալ մինչեւ իր նախագահական ժամկէտի աւարտը:

Ամենեւին պատահական չպէտք է համարել եւ այն, որ հենց հիմա յանկարծ հրապարակուեց Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը 98 թուականի Յունուարի 7-8-ի անվտանգութեան խորհրդի ընդլայնուած նիստում, ուր նա ղարաբաղեան կարգաւորման առնչութեամբ արել էր մի շարք մռայլ կանխատեսումներ: Այդ կանխատեսումների շուրջ կէսը, եւ աւելին, արդէն կեանքի են կոչուել, ինչը, անշուշտ, կ՚օգտագործեն այն ուժերը, որոնք երկու ձեռքով կողմ են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկած շուտափոյթ կարգաւորման տարբերակին: Ճիշդ է, դժուար է ասել, թէ ինչքանով անձամբ ինքը՝ յոյժ զգուշաւոր Լեւոն Տէր-Պետրոսեանը, համաձայնել է, որ իր անունը քաղաքականապէս կրկին շրջանառուի, սակայն պարզ է, որ ՀՀ առաջին Նախագահի 8 տարուայ վաղեմութեան ոչ հրապարակային ելոյթի այժմեան «գաղտնազերծումը» գաղափարական նշանակութիւն ունի:

Այսպիսով՝ մթնոլորտը մեր երկրում գնալով շիկանում է: Եւ եթէ Վարդավառին սովորական հայերը իրար վրայ սովորական սառը ջուր են լցնելու, ապա քաղաքական այրերը, պատկերաւոր ասած, այդ ժողովրդական տօնը վերածելու են քաղաքական քարաբաղնիքի, ուր ամէն ինչ շիկացած է եւ եռում է: Թէ ինչով է այդ ամէնը յղի, երեւի թէ չի համարձակուի գուշակել անգամ գլխից ձեռք քաշած մասնագէտը: Բայց, ինչպէս ասում են, Աստուած էլ բեթարից ազատի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՋԵԱՆ
«ԻՐԱՒՈՒՆՔ»
7-18-05


ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ


# ՀՅԴ ԸՆԴԴԷՄ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹԻՒՆՆ ԸՆԴԴԷՄ ՀՅԴ-Ի, ԳՈՒՄԱՐԱԾ ՀՀԿ

Հանգստեան օրերին Արագածոտնի մարզի Ուջան գիւղում տեղի ունեցած իրադարձութիւնները մէկ բան են վկայում. Հայաստանի իշխանութեան մէջ եւ իշխանութեանը մօտ կանգնածների մէջ շատ են նրանք, որ յանուն սեփական շահի պատրաստ են ամէն ինչի: Դեռ չենք հասցրել մարսել Երեւանի կառուցապատման անուան տակ մարդկանց անօթեւան թողնելու «օպերացիան», այժմ հերթը հասել է մարզերին:

Ուջանցի ազատամարտիկ Տարօն Յակոբեանն է զոհը, նրա զբաղեցրած «Սասուն» պանդոկը՝ թիրախը: Տարօն Յակոբեանը ունի փաստաթղթեր, համաձայն որոնց իրաւունք ունի Ուջան գիւղի մօտակայ բարձունքներից մէկի գագաթին գտնուող պանդոկում ապրել՝ առանց բիզնես ծաւալելու իրաւունքի: Ինչը եւ անում է արդէն մի քանի տարի: Բայց ինչպէս ասուեց, պանդոկը եւ նրան յարակից մօտ 2000 քմ տարածքը բաւական գրաւիչ պատառ է եւ չի վրիպել, աւելի ճիշդ գրաւել է դաշնակցական Վարդգէս Յակոբեանին: Տարօն Յակոբեանի ընկերների հաւաստմամբ, դեռեւս 2002 թուականին Արագածոտնի դաշնակցական մարզպետ Հրայր Կարապետեանը հասել է նրան, որ պանդոկն ու տարածքը փաստաթղթերով դարձել են Վարդգէսի սեփականութիւնը: Ըստ նոյն մարդկանց, Հրայր Կարապետեանը անձնական շահագրգռուածութիւն էլ ունի, քանի որ պանդոկի աշխատելու պարագայում եկամուտներից իրեն եւս բաժին է հասնելու: Իսկ Տարօն Յակոբեանին այլ բան չէր մնում, քան դիմել դատախազութիւն: Դժուար է ասել՝ Արագածոտնի մարզի դատախազ Համլէտ Ջաքոեանի որոշման վրայ ազդե՞լ է ՀՅԴ-գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեան առայժմ լուռ հակամարտութիւնը, թէ ոչ, սակայն, Ջաքոեանը փաստի առթիւ քրէական գործ է յարուցել, որում շօշափւում է անշարժ գոյքի կադաստրի մարզային մասնաճիւղի ղեկավարի անունը:

Հաւանաբար անհանգստացած եւ մտահոգուած քրէական գործ յարուցելու փաստից, ՀՅԴ որոշել է անցնել ակտիվ գործողութիւնների: Նախ վճռաբեկ դատարանը որոշել է, որ դաշնակցականն է իրաւացի, իսկ անցած ուրբաթ՝ Յուլիսի 14-ին Աշտարակի ոստիկանութեան եւ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայութեան աշխատակիցների հոծ բազմութեամբ այցելել են պանդոկ՝ Տարօն Յակոբեանին եւ նրա ընտանիքի վտարելու նպատակով: Տարօն Յակոբեանին օգնութեան են եկել նրա ազատամարտիկ ընկերները եւ եղբայրները: Ի դէպ, Տարօն Յակոբեանը ունի չորս եղբայր, որոնցից երեքը, ինչպէս եւ ինքը ազատամարտիկ են: Ինչպէս հաւաստիացնում է Տարօն Յակոբեանի ընկեր, ազատամարտիկ Վարդան Մալխասեանը. «մենք հազիւ 15-20 հոգի կը լինէինք, նրանք 90-110»: Վարդան Մալխասեանը, ով ժամանակին բարձր պաշտօն է զբաղեցրել ոստիկանութիւնում, ասաց նաեւ, որ ոստիկաններն ու ԴԱՀԿ աշխատակիցներն ամէն ինչ անում էին, որ բանը հասնի կռուի. «Նրանք սադրում էին, քանի որ գիտէին, որ ծեծկռտուքի համար իրենց ոչինչ չի լինի: Եթէ մենք վստահ լինէինք, որ ոստիկաններին ու ԴԱՀԿ աշխատակիցներին կարգի հրաւիրենք, մեզ ոչ մի բան չի պատահի՝ նրանց իրենց տեղը կը դնէինք»:

Ազատամարտիկները փորձել են հարցը լուծել բացատրական աշխատանքների միջոցով, բայց ԴԱՀԿ եւ ոստիկանութեան ներկայացուցիչները հասել են իրենց նպատակին: Սկսուել է ծեծկռտուք, բնականաբար տուժել են ազատամարտիկները, նաեւ Տարօն Յակոբեանի կինը, գիւղից դէպքի վայր եկած մարդկանցից ոմանք: Վերջում ձերբակալուել են ազատամարտիկներից ութ հոգի. Տարօն Յակոբեանը, նրա կինը, նրա երեք եղբայրները, կոտրուել է չորրորդ եղբօր ձեռքը: «Ես եղել եմ Ղարաբաղում, տեսել եմ թուրքերի վայրենութիւնները, հայերի ցեղասպանութեան ժամանակ թուրքերի կատարած վայրագութիւնների մասին շատ եմ կարդացել, բայց ԴԱՀԿ նման ենիչերիներ ես չեմ տեսել: Նրանց մէջ մարդկային որեւէ յատկութիւն գոյութիւն չունի»: Գիւղացիներն ու Տարօնի ընկերները կրկին դիմել են դատախազութիւն, ներկայացնելով տուժածներին: Ձերբակալուածներին բաց են թողել, յաջորդ օրը ոստիկանութիւնը առանձնապէս քաղաքավարի եւ կիրթ չի եղել մէկ օրուայ իր «հիւրերի» հետ. Նրանց, այդ թւում եւ կանանց հետ խօսել են կոպիտ, հայհոյանքախառն արտայայտութիւններով, վիրաւորանքներով: Տարօն Յակոբեանի կողմնակիցները յայտարարում են, որ պանդոկը գրաւելու հարցում աչքի է ընկնում նաեւ հանրապետական պատգամաւոր Երեմ Կարապետեանի որդին՝ Աշտարակի ոստիկանապետ Կարօ Կարապետեանը:

«ԼՐԱԳԻՐ»
7-17-06


**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

## ՕՍԿԱՆԵԱՆԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ ԻՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանեանը լաւատես է, որ առաջիկայ համապետական ընտրութիւնները «այս անգամ կը լինեն նորմալ» եւ չի բացառում իր մասնակցութիւնը նախագահական ընտրութիւններին:*

*«Ես լաւատես եմ, որ մեր ժողովուրդը վճռական է, որ այս անգամ ընտրութիւնների լինեն նորմալ», - ասաց նա: - «Եթէ մենք խնդիրների ետեւից գնանք, խնդիրները ճիշդ ձեւակերպենք, ես կարծում եմ, որ դա կը նպաստի իսկապէս նորմալ ընտրութիւնների անցկացմանը»:*

*Օսկանեանը, ի պատասխան լրագրողներից մէկի հարցին, յամենայն դէպս, չբացառեց իր մասնակցութիւնը 2008-ի նախագահական ընտրութիւններին:*

*«Կարծում եմ, որ դեռեւս կարող եմ իմ մասնակցութիւնը բերել Հայաստանի գործընթացներում, պետականութեան կառուցման, զարգացման խնդիրներին: Բայց այդ մասնակցութիւնը ինչպիսի՞ դրսեւորումներ կարող է ունենալ, այս պահին ես չեմ կարող ասել: Եւ դրա մասին, կարող եմ ասել, որ չեմ էլ մտածել», - ասաց Օսկանեանը՝ յաւելելով. - «Ես այս պահին կենտրոնացել եմ իմ աշխատանքի վրայ: Իմ առաջ իսկապէս լուրջ խնդիրներ կան՝ Հայաստան - Սփիւռք խորհրդաժողովը, Լեռնային Ղարաբաղի հարցը, արտաքին քաղաքականութեանը վերաբերող հարցերը... Մի բան ինձ համար յստակ է. ուզում եմ ներգրաւուած լինել՝ բերելով իմ նպաստը, բայց դա ինչպիսի՞ դրսեւորում կ'ունենայ՝ ժամանակը ցոյց կը տայ»:*

*Նախարարը խօսեց նաեւ երկրորդ սերնդի ժողովրդավարական բարեփոխումների անհրաժեշտութեան մասին. - «Երկրորդ սերնդի քաղաքական ռեֆորմների մէջ պէտք է մտնենք. դրանք այն ռեֆորմներն են, որ առաջին հերթին կարող են խփել էլիտայի տնտեսական եւ քաղաքական շահերին: Ո՞ր քաղաքական ուժը ունենայ այդ համարձակութիւնը. խնդիրը սա է»:*

*Օսկանեանի կարծիքով, հայաստանեան տնտեսական բարեփոխումները «յաջողուած են»՝ տարածաշրջանում մենք «ամենալաւ վիճակում ենք». - «Մենք պէտք է յոյսը մեր ռեսուրսների վրայ դնենք եւ հնարաւորինս օգտագործենք թէ՛ մեր ներքին ռեսուսները, թէ՛ սփիւռքի ռեսուրսները, որի միայն 2-3 տոկոսն ենք օգտագործում, թէ՛ միջազգային ռեսուրսները»:*

## «ՄԵՂԱՒՈՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՃՈՆ ԷՎԱՆՍՆ Է»

*Յուլիսի 17-ին Երեւանում յայտարարութիւն է տարածել «Ժողովրդավարական Հայաստան» միաւորումը, որն ընթերցել է Մամուլի Ազգային Ակումբի ղեկավար Նարինէ Մկրտչեանը: Նա տեղեկացրեց, որ «Ժողովրդավարական Հայաստան» միաւորմանն անդամակցում են թէ ընդդիմադիր, թէ իշխանամէտ գործիչներ, ովքեր մտահոգ են Հայաստանի ժողովրդավարացման հեռանկարով: Բայց յատկապէս ովքեր են մտահոգ, յամենայն դէպս յայտարարութեան պահին ճշդել չյաջողուեց, քանի որ Նարինէ Մկրտչեանն ընթերցեց յայտարարութիւնը, պատասխանեց մէկ երկու հարցի եւ հեռացաւ, ասելով, որ յայտարարութեան առնչութեամբ նախաձեռնուած ստորագրահաւաքին եւ դրա արդիւնքին ԶԼՄ-ները կը տեղեկացուեն առաջին իսկ յստակ ցուցանիշներից յետոյ: Իսկ յայտարարութեան ու ստորագրահաւաքի հերոսը Հայաստանում ԱՄՆ դեսպան Ճոն Էվանսն է: «Ժողովրդավարական Հայաստան» միաւորումը Միաւորումը Նրա վրայ է դնում Հայաստանի ժողովրդավարացման գործում ԱՄՆ քաղաքականութեան ձախողման պատասխանատուութիւնը:*

*Յայտարարութեան հեղինակները փաստում են Հայաստանի տնտեսական, սոցիալական, քաղաքական համակարգերում արատաւոր երեւոյթները, կոռուպցիան, մարդու իրաւունքի խախտումը: Նրանց կարծիքով, այդ ամէնը հանգեցրեց նրան, որ կեղծուի 2005 թուականի Նոյեմբերի 27-ի Սահմանադրութեան փոփոխութեան հանրաքուէն:*

*«Այս ամէնը ցոյց է տալիս ժողովրդավարութեան տարածման, ազատութեան արժէքների կայացման Միացեալ Նահանգների հռչակած քաղաքականութեան ձախողումը Հայաստանում: Ձախողման ողջ պատասխանատուութիւնն ընկնում է Հայաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազօր դեսպան Ճոն Էվանսի, ԱՄՆ դեսպանատան, ամերիկեան հարկատուների միջոցներով Հայաստանում ժողովրդավարութեան զարգացմանը նպաստելուն կոչուած կազմակերպութիւնների վրայ», ասուած է յայտարարութեան մէջ: «Ժողովրդավարական Հայաստան» միաւորումը, պաշտպանելով Ճոն Էվանսի հետ կանչի որոշումը, կոչ է անում ԱՄՆ Սենատին արագացնել դեսպանի փոփոխութեան գործընթացը: Իսկ ամերիկահայ լոբբիին, «Ժողովրդավարական Հայաստան» միաւորումը կոչ է անում աջակցել, որ ԱՄՆ նոր դեսպանը հաւատարիմ լինի ժողովրդավարութեան, ազատութեան արժէքների տարածմանը՝ «յանուն Հայաստանի հզօրացման եւ ի շահ հայ-ամերիկեան յարաբերութեան բարելաւման»:*

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԴԱՐՁԱՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ

*Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը դարձաւ Հանրապետական Կուսակցութեան անդամ:*

*«Սերժ Սարգսեանի դիմումը բաւարարուած է՝ նա արդէն կուսակցութեան անդամ է», - «Ազատութիւն» ռադիոկայանին այսօր ասաց Հանրապետական Կուսակցութեան խօսնակ Արշակ Զաքարեանը:*

*Նրա վկայութեամբ, կուսակցութեան առաջիկայ համագումարը կ'որոշի, թէ ի՞նչ դիրք կ'զբաղեցնի Սերժ Սարգսեանը կուսակցութիւնում: Հանրապետական Կուսակցութեան համագումարը տեղի է ունենալու Յուլիսի 22-ին:*

*Վերլուծաբանները կարծիք են յայտնում, որ յաջորդ տարուայ խորհրդարանական ընտրութիւններում Հանրապետական Կուսակցութեան յաջողութեան դէպքում, Սերժ Սարգսեանը իր թեկնածութիւնը կ'առաջադրի 2008 թուականի նախագահական ընտրութիւններում:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՊԱՐՏԱԴՐՒՈՒՄ Է ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ԻՍԿ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆԸ ՄԻԱՒՈՐՈՒՄ



Վազգէն Մանուկեան ասուլիսի ընթացքին

*ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Խնդիրը բոլորովին այն չէ, թէ պաշտպանութեան նախարարը պէտք է լինի կուսակցական, թէ ոչ: Եւ ոչ էլ խնդիրն այն է, թէ ինչպէս պէտք է քուէարկի բանակը: Բանակը միշտ էլ քուէարկել է վերեւի հրահանգով: Յուլիսի 18-ին Փաստարկ ակումբում անդրադառնալով Սերժ Սարգսեանի հանրապետականացմանը այդ տեսակէտները հնչեցրեց ԱԺՄ նախագահ Վազգէն Մանուկեանը: Նրա կարծիքով, խնդիրը պետութեան ապագայի համար շատ աւելի խորն է ու ընդգրկուն:*

*«Սերժ Սարգսեանը յայտնի է, ոչ միայն նրանով, որ ինքը վերահսկում է բանակը, այլ յայտնի է բոլորին, որ Սերժ Սարգսեանը վերահսկում է տնտեսութեան եւ ֆինանսական հոսքերի մեծ մասը Հայաստանում: Եւ միանալով Անդրանիկ Մարգարեանի կուսակցութեան հետ, որը վերահսկում է ֆինանների եւ տնտեսութեան մնացած մասը, ստացւում է մի մոնստր կուսակցութիւն, որի տակ գտնւում է ամբողջ տնտեսութիւնը», ասում է Վազգէն Մանուկեանը:*

*Նրա խօսքով, այդ ճանապարհը Հայաստանին տանում է միակուսակցական համակարգի: «Միակուսակցականը, որ մենք ապրում էինք Խորհրդային Միութիւնում, կար մէկ կուսակցութիւն, բայց քչերն են յիշում, որ օրինակ Լեհաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում մի կուսակցութիւն չէր, կոմունիստական կուսակցութեան հետ նաեւ կային արբանեակ կուսակցութիւններ: Բայց նրանք ֆիկցիա էին, արտաքին աշխարհին ցոյց տալու համար, որ իբրեւ ժողովրդավարութեան սաղմեր կան, բայց իրականում մէկ կուսակցութիւն էր: Հիմա Հայաստանում կատարւում է այդ փորձը», նշում է ԱԺՄ նախագահը:*

*Նրա խօսքով, պատահական չէ, որ ընդդիմութիւնը խօսում է յեղափոխութեան եւ ալեկոծութեան մասին: Վազգէն Մանուկեանը կարծում է, որ այդ խօսակցութիւնները տեղի են ունենում այն պատճառով, «որ չի երեւում բուրգը ջարդելու ուրիշ ճանապարհ»:*

*«Ինչ կ'ուզենայի: Ես կ'ուզենայի, որ ընդդիմութեան մէջ գոնէ երկու-երեք, գաղափարական տեսակէտից, ուժեր ձեւաւորուէին, բայց ցաւօք սրտի ֆինանսներ են պէտք, որն ընդդիմութիւնը չունի, եւ այս ընտրութիւնների ժամանակ գնային մինչեւ վերջ պայքարելու, եթէ ոչ իշխանութիւն վերցնելու, ապա գոնէ իշխանութեան մէջ մեծ հատուած վերցնելու, որպէսզի իրենց ազդեցութիւնն ունենան հետագայ դէպքերի վրայ», ասում է Վազգէն Մանուկեանը:*

*Նա ասում է, որ ընդդիմութիւնը շատ խայտաբղէտ է, բայց այնուամենայնիւ կան լուրջ ուժեր, որոնց համախմբումը կարող է փոխել իրավիճակը: Վազգէն Մանուկեանը ընդդիմութեան այդ լուրջ ուժերի համախմբումը դեռ չի տեսնում, բայց նաեւ չի էլ բացառում: Նա գտնում է, որ կեանքն է դա պարտադրելու:*

## ԳԷՈՐԳ ՊՕՂՈՍԵԱՆ. «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՐԿԱՆԻՇՈՎ ԱՌԱՋԻՆԸ ՉԷ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց սոցիոլոգ Գէորգ Պօղոսեանը, Հայաստանում անցկացուած ծաւալուն սոցիոլոգիական հետազօտութեան արդիւնքները վկայում են, որ Հանրապետական Կուսակցութիւնը վարկանիշով առաջինը չէ:*

*«Նոյնիսկ այսօր Հանրապետականը՝ լինելով ուժեղ, հզօր, իշխանութեան գլխին կանգնած կուսակցութիւն, վարկանիշով առաջինը չէ: Երբեմն իշխանամէտ կամ իշխանութեան գլուխ կանգնած կուսակցութիւնը իր նկատմամբ մեծ թիւով հակադիր տրամադրութիւններ է հաւաքում, եւ շատ-շատերը կարող են ընտրութիւնների ժամանակ դէմ քուէարկել միայն նրա համար, որ սա իշխանական կուսակցութիւն է», - նշեց Գէորգ Պօղոսեանը:*

*ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալութեան (USAID) ֆինանսական օժանդակութեամբ Baltic Surveys / International Republican Institute եւ Gallup կազմակերպութիւնները Հայաստանում անկացրել են ծաւալուն սոցիոլոգիական հետազօտութիւն՝ բնակչութեան ընդհանուր տրամադրութիւնը պարզելու համար:*

*Անցած շաբաթ հրապարակուած արդիւնքներում ներառնուած չէին կուսակցութիւնների վարկանիշերի վերաբերեալ տուեալները: Դրանք, ըստ «Ազատութիւն» ռադիոկայանի տեղեկութիւնների, ներկայացուել են միայն հարցման մէջ ներառուած կուսակցութիւններին, ընդ որում՝ ամէն կուսակցութիւն տեղեկացուել է միայն իր վարկանիշի մասին:*

## ԼՈՒՐԵՐ

# ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱՒ ՊԱՔՈՒ - ՋԷՅՀԱՆ ՆԱՒԹԱՏԱՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Թուրքիայի Ջէյհան նաւահանգստում տեղի ունեցաւ Պաքու - Թբիլիսի - Ջէյհան նաւթատարի բացման հանդիսաւոր արարողութիւնը, որին ներկայ էին Թուրքիայի, Ատրպէյճանի եւ Վրաստանի բարձրագոյն ղեկավարները, ինչպէս նաեւ նախարարներ 30 երկրներից:*




Տեսարան մը Պաքու – Թբիլիսի – Ջէյհան նաւթատարի բացման արարողութենէն

*Թուրքիայի վարչապետ Ռէջեփ Էրդողանը խողովակաշարն անուանեց «21-րդ դարի Մետաքսի ճանապարհ»:*

*1770 կիլոմետրանոց նաւթամուղով, որը շրջանցում է Ռուսաստանը եւ Իրանը, կասպեան նաւթը հասցուելու է արեւմտեան շուկաներ:*

*«Սա պատմական պահ է, երբ փոխւում է աշխարհի էներգետիկ քարտէզը», - ասաց «Բրիթիշ փեթրոլեում»-ի գործադիր տնօրէն Ճոն Պրաունը:*

*Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Ջէյհանում կարծիք է յայտնել, թէ նաւթամուղը «նոր դարաշրջան է բացում տարածաշրջանի զարգացման պատմութեան մէջ»:*

*«Յաջորդ քայլը կը լինի այս խողովակաշարով ղազախստանեան նաւթի դուրս բերումը համաշխարհային շուկայ եւ ատրպէյճանական գազի արտահանումը Պաքու - Թբիլիսի - Էրզրում գազատարով», - ասաց Իլհամ Ալիեւը:*

*«Այս ծրագրի շնորհիւ Ատրպէյճանը կը դառնայ տնտեսապէս հզօր երկիր. օգտագործելով նաւթից ստացուելիք եկամուտները, մենք կը լուծենք մեր բոլոր սոցիալական խնդիրները», - նշեց Ատրպէյճանի նախագահը:*

*Խողովակաշարը, որի կառուցման համար ծախսուել է մօտ 4 միլիարդ դոլար, կարող է օրական 1 միլիոն տակառ նաւթ հասցնել Միջերկրական ծովի ափը: Ներկայումս, ինչպէս վկայում են արեւմտեան գործակալութիւնները, խողովակաշարով տեղափոխւում է 430 հազար տակառ նաւթ:*

# ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԵՒ ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ԵՆ ՅԱՅՏՆՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԵՒ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՈՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*Լրագրողական հանրութիւնը խորապէս մտահոգուած է, որ Հայաստանում խորհրդարանական ընտրութիւնների մօտենալուն զուգահեռ ուժեղանում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ ճնշումը եւ յաճախանում են սպառնալիքները նրանց հասցէին: Սրանք արւում են այն անձանց եւ ուժերի կողմից, ովքեր հիմքեր ունեն զգուշանալու քննադատութիւնից եւ իրենց գործունէութեան որոշ կողմերի բացայայտումներից:*

*Միայն վերջին մէկ շաբաթուայ ընթացքում երկու արտառոց դէպք է տեղի ունեցել. իր նկատմամբ հաշուեյարդարի նախազգուշացում է ստացել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ Էդիկ Բաղդասարեանը, մասնագիտական պարտականութիւնների կատարման համար յարձակման, ֆիզիկական բռնութեան եւ թալանի է ենթարկուել «Չորրորդ իշխանութիւն» թերթի ֆոտոլրագրող Գագիկ Շամշեանը: Դատախազութեան մարմիններին յղած իրենց դիմումներում մեր երկու գործընկերներն էլ նշել են իրենց լրագրողական գործունէութիւնից «դժգոհութեան» ենթադրեալ աղբիւրները: Ընդ որում, Գագիկ Շամշեանը կոնկրետ անուանել է նրանց, ովքեր սպառնացել են իրեն եւ յարձակւում գործել, սակայն, ըստ մեր ունեցած տեղեկութիւնների, վերջիններիս դէմ որեւէ միջոցառում չի ձեռնարկուել, աւելին՝ դիմումից յետոյ էլ լրագրողի նկատմամբ «պատժիչ գործողութիւնները» շարունակուել են:*

*Վերջին հանգամանքը վկայում է, որ երկրում ոչ միայն ահագնանում է կամայականութիւնների նախընտրական ալիքը, այլեւ՝ որ իրաւապահ մարմիններն ի վիճակի չեն ապահովելու ԶԼՄ-ների ներկայացուցիչների անվտանգութիւնն ու վնասազերծելու յանցագործներին: Աւելորդ չենք համարում յիշեցնել «Զանգուածային լրատուութեան մասին» ՀՀ օրէնքի այն դրոյթը, ըստ որի՝ «Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունէութեան ընթացքում, որպէս հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանւում է Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութեամբ», եւ որ՝ «Արգելւում է լրագրողի մասնագիտական օրինական գործունէութեանը խոչընդոտելը»: Սակայն օրէնսդրութիւնն ու տխուր իրականութիւնը չեն զուգակցւում. լրագրողների նկատմամբ յանցագործութիւնների գերակշիռ մեծամասնութիւնը, ներառեալ նրանց մասնագիտական գործունէութիւնը խոչընդոտելու քրէօրէն պատժելի արարքները, մնում են չբացայայտուած: Այս համատեքստում մեզ համար անընդունելի է «Ժամանակ Երեւան» թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի խափանման միջոցը փոխելու մի շարք կոչերի վերաբերեալ ՀՀ դատախազութեան որեւէ արձագանքի բացակայութիւնը: Ոչ այս, ոչ վերաբերեալ այլ դէպքերում մենք նպատակ չունենք խորանալու գործերի իրաւաբանական էութեան մէջ կամ կանխաւ գուշակելու հետաքննութեան արդիւնքները: Մեր մտահոգութիւնը հետեւանք է ԶԼՄ-ների եւ դրանց ներկայացուցիչների բնականոն գործունէութիւն ապահովելու, քաղաքական դրդապատճառներով առաջացած լարուածութեան, ձեւաւորուող իրավիճակի ու մեր կոչերի նկատմամբ իշխանութիւնների համարժէք, օրէնքի շրջանակներում արձագանքի բացակայութեան:*

*Մենք եւս մէկ անգամ կոչ ենք անում քննարկել Արման Բաբաջանեանի նկատմամբ խափանման միջոցը փոխելու հարցը, օպերատիւ հետաքննել եւ պատժել Գագիկ Շամշեանի նկատմամբ բռնութիւններ իրականացրած անձանց, մանրակրկիտ ուսումնասիրել Էդիկ Բաղդասարեանի հասցէին անանուն սպառնալիքներին առնչուող հանգամանքները: Այն մթնոլորտը, որում մի քանի ամիս յետոյ կ'անցնեն խորհրդարանական ընտրութիւնները, ամբողջովին կախուած է ամէն գնով դէպի իշխանութիւն մղուող խումբաններից իր քաղաքացիներին պաշտպանելու եւ ժողովրդավարական ինստիտուտների, մասնաւորապէս՝ մամուլի նկատմամբ յարգանք տածելու պետութեան պատրաստակամութիւնից:*

*Ստորագրողներ՝*

*Արամ Աբրահամեան («Առաւօտ» օրաթերթի գլխաւոր խմբագիր), Յակոբ Աւետիքեան («Ազգ» օրաթերթի գլխաւոր խմբագիր), Նիկոլ Փաշինեան («Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր), Սաթիկ Սէյրանեան («168 ժամ» թերթի գլխաւոր խմբագիր), Շողեր Մաթեւոսեան («Չորրորդ Իշխանութիւն» թերթի գլխաւոր խմբագիր), Յովհաննէս Գալաջեան («Իրաւունք» թերթի խմբագիր), Լիզա Ճաղարեան («Ժամանակ Երեւան» օրաթերթի պատասխանատու խմբագիր), Վասակ Դարբինեան («Տարեգիր» թերթի գլխաւոր խմբագիր), Բորիս Նաւասարդեան (Երեւանի Մամուլի Ակումբի նախագահ), Աշոտ Մելիքեան (Խօսքի Ազատութեան Պաշտպանութեան Կոմիտէի նախագահ), Վարդան Յարութիւնեան (Իրաւունքի եւ Ազատութեան Կենտրոնի նախագահ), Աւետիք Իշխանեան (Հայաստանի Հելսինկեան Կոմիտէի նախագահ)*

*17 .07. 2006 թ.*

# ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*2006թ. Յունիսի սկզբներից Ատրպէյճանի հետ Լեռնային Ղարաբաղի սահմանակից տարածքներում տեղ են գտել հրդեհների դէպքեր: Ստեղծուած իրավիճակը լուրջ անհանգստութեան առարկայ է դարձել Ղարաբաղի իշխանութիւնների համար, քանի որ ԼՂՀ եւ նրա բնակչութեան անվտանգութեան համար իրական սպառնալիք է ստեղծուել:*

*Հրդեհների պատճառները եւ հանգամանքները պարզելու նպատակով ԼՂՀ-ում ստեղծուել է յատուկ յանձնաժողով, որի մէջ ընդգրկուել են անվտանգութեան հարցերով պատասխանատու նախարարութիւնների եւ գերատեսչութիւնների ներկայացուցիչներ: Հրդեհները տեղափակելու եւ դրանց տարածումը կանխարգելելու գործում ներգրաւուել են ԼՂՀ հակահրդեհային ծառայութեան եւ արտակարգ իրավիճակների վարչութեան ստորաբաժանումները, ինչպէս նաեւ տեղական վարչակազմերի ղեկավարները եւ բնակչութիւնը: Արտակարգ իրավիճակները կանխելու նպատակով բոլոր համայնքներում կազմակերպուել է շուրջօրեայ հերթապահութիւն:*

*Այնուամենայնիւ այդ շրջաններում շարունակուող հրդեհների պատճառով իրավիճակը վատթարանում է, ինչը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան գիւղատնտեսութեան եւ պարենային անվտանգութեան համար յղի է տեւական անբարենպաստ հետեւանքներով: Ատրպէյճանի հետ սահմանային գօտում կտրուկ աճել են հրդեհների դէպքերը եւ այրուող հացահատիկային դաշտերի տարածքը:*

*ԼՂՀ յատուկ յանձնաժողովի կողմից տարուած աշխատանքի արդիւնքում պարզուել են անհերքելի տուեալներ, որոնք վկայում են, որ հրդեհների պատճառը ատրպէյճանական կողմի կանխամտածուած թշնամական գործողութիւններն են: Պաշտօնական Պաքուն նպատակ ունի քայքայել Լեռնային Ղարաբաղի տնտեսութիւնը եւ նրան զրկել առաջանցիկ տնտեսական զարգացման հնարաւորութիւնից: Իրենց գործողութիւնները քողածածկելու նպատակով հենց սկզբից ինչպէս տեղական, այնպէս էլ օտարերկրեայ զանգուածային լրատուամիջոցներում Ատրպէյճանը ակտիվ քարոզչութիւն է ծաւալել՝ փորձելով մեղքը բարդել ղարաբաղեան կողմի վրայ, ինչը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ժողովրդի դէմ քարոզչական-հոգեբանական պատերազմի շարունակութիւնն է եւ սեփական ագրեսիան քողարկելու անյաջող փորձ:*

*Կը ցանկանայինք յիշեցնել, որ դեռեւս 2001թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանութիւնները ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջոցով ատրպէյճանական կողմին առաջարկել էին հակամարտութեան կողմերի միջեւ վստահութեան հաստատմանն ուղղուած միջոցառումների փաթեթ, մասնաւորապէս, համագործակցութիւն է առաջարկուել սահմանամերձ շրջաններում արոտավայրերի եւ գիւղատնտեսական հանդակների հրդեհները կանխելու նպատակով: Ցաւօք, պաշտօնական Ստեփանակերտի նախաձեռնութիւնը այն ժամանակ աջակցութիւն չի գտել Պաքւում եւ անհրաժեշտ ուշադրութեան չի արժանացել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից:*

*Բացի այդ, դեռեւս ս.թ. Յունիսի 15-ին ԼՂՀ Արտաքին գործերի նախարարութիւնը դիմել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենեակ՝ Ատրպէյճանի հետ սահմանային գօտում ճգնաժամ-դիտարկում անցկացնելու պահանջով՝ տեղում իրավիճակը գնահատելու եւ ատրպէյճանական կողմի մտացածին մեղադրանքներին վերջ դնելու համար:*

*Միջազգային հանրութեան եւ յատկապէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ուշադրութիւնը հրաւիրում ենք այն հանգամանքի վրայ, որ Ատրպէյճանի թշնամական գործողութիւնների դէմ միջոցներ չձեռնարկելու դէպքում հանրապետութեան անվտանգութեան ապահովման համար պաշտօնական Ստեփանակերտը իրեն իրաւունք կը վերապահի ձեռնարկել պատասխան համարժէք գործողութիւններ:*

# ՔՍԱՆՆԵՐԸ ՄԻՇՏ ՄԵԶԻ ՀԵՏ ԵՆ

«Մեզ քսաններս կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետւին մեզի»:

*****

«Յոն ուր կախաղաններն են ճօճում, ազատութիւնն է մօտ գալիս:
Յոն ուր մեռելներն են ննջում, յարութիւնն է մօտալուտ»:

*****

«Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ոչ»:



***ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ***

*Ահաւոր, գեղեցիկ եւ հաւատաւոր խօսքեր են ասոնք, արտասանուած մարդոց կողմէ, որոնք արհամարհեցին մահը, սիրեցին գաղափարը, եւ քալեցին իրենց ժողովուրդի ազատագրութեան ճամբէն, անվախ, հպարտ եւ ճակատաբաց:*

*Գրեթէ անիրական բան մը կայ իրենց վերաբերմունքին մէջ, երբ կ'առաջնորդուին դէպի կախաղան: Տարիներով եղած են կուսակցական, տեսած են իրենց ժողովուրդի փրկութիւնը ազատագրական սրբազան պայքարի մը մէջ, նախատեսած են գալիք ահաւոր ոճիրը որ կը պատրաստուէր, եւ ընդդիմութեան դրօշ պարզած օրուայ անարգ իշխանութեանց, Իթթիհատ-ժէօն Թուրք կառավարութեան դէմ, մարդիկ որոնք Սուլթանը տապալելով, իշխանութիւնը ձեռք առած էին խաբուսիկ լոզունգներով:*

*1908-ն էր: Իթթիհատական կուսակցութիւնը կը տապալէր Սուլթան Համիտի կառավարութիւնը եւ կը հաստատէր Սահմանադրութիւն մը, որ միշտ չակերտաւոր մնաց Ս.Դ.Հ.Կ.ին համար:*

*Ահա թէ ի՞նչ կ'ըսէ Փարամազ այս սահմանադրութեան մասին, արտասանուած կուսակցութեան 6-րդ համագումարին, 1909 Թուականին, տեղի ունեցած Պոլսոյ մէջ.*

*«Ընկերներ, պէտք չէ խաբուիլ ժէօն Թուրքերու այսօրուայ մեղրածորան խօսքերէն, խօսքեր կ'ըլլան հայ յեղափոխութիւնը եւ մեր կուսակցութիւնը քնացնելու համար, եւ անոնց ուժը տկարացնելու համար: Ժէօն Թուրքերը իրենց օսմանականութիւնը, այսինքն փանթուրքիզմի գաղափարը երբեք չեն լքած, եւ աւելի վտանգաւոր են հայութեան համար քան Սուլթան Համիտը: Լրիւ հաւատալ անոնց խօսքերուն եւ զանոնք ուժաւորել, պիտի նշանակէ մենք մեր ձեռքով հարուածել հայութիւնը: Եթէ բոլոր հոսանքները քնանան, հնչակեանութիւնը չի կրնար ուշադիր չհետեւիլ անոնց քայլերուն, եւ հարկին չպայքարիլ հայութեան եւ Թուրքիոյ այլազգի աշխատաւորութեան շահերուն համար»:*

*Արդարեւ, նոյն տարին, 1909 Թուականին, 30,000 անմեղ հայեր կը ջարդուէին Ատանայի մէջ: Իսկ նոյն այդ ժէօն-Թուրքերը, 1911ին, Սելանիկ գումարած իրենց համագումարին, կ'որոշէին «ջնջել ոչ-Թուրքերու լեզուն եւ Թրքացնել այդ տարրերը, եւ եթէ կարելի չըլլայ, զէնքով բնաջնջել»:*

*Բացի Փարամազէն, հնչակեան բազմաթիւ այլ ղեկավարներ Սապահ-Գիւլեան, Ոստանիկ, Մուրատ, Սիւնի եւ ուրիշներ հակադրուեցան Իթթիհատի փրոբականտին, եւ ուզեցին գործակցիլ ընդդիմադիր Իթթիլաֆ կուսակցութեան հետ: Իսկ պաշտօնապէս, Իթթիհատի դէմ պայքար յայտարարուեցաւ 1913ի, Քէօսթէնճէի 7րդ Հնչակեան համագումարի ընթացքին: Դժբախտաբար սակայն, հայ ժողովուրդը եւ այլ քաղաքական հոսանքներ խաբուեցան Իթթիհատի խոստումներէն, եւ հայ ազատագրական պայքարը, դադարէ մը ետք, յանգեցաւ 1915ի Եղեռնին: Արդարեւ, 1908-1915 շրջանը կարելի է նկատել հայ քաղաքական մտքի «օրօր եւ անհոգութիւն»:*

*1915ի դէպքերը ծանօթ են բոլորին: Ահաւոր Ցեղասպանութեան մը ազդանշանը տրուեցաւ նոյն այդ կուսակցութեան կողմէ, որ կը խոստանար «Հաւասարութիւն, Եղբայրութիւն եւ Ազատութիւն» Թուրքիոյ քաղաքացիներուն:*

*1915 Յունիս 15ին, արագ դատավարութենէ մը ետք, կախաղան կը հանուէին Հնչակեան Քսան ղեկավարներ որոնք մասնակցած էին Քէօսթէնճէի մէջ գումարուած 7րդ համագումարին, դեռ երկու տարիներ առաջ, եւ ուր հայ ժողովուրդին կը թելադրուէր չհաւատալ Իթթիհատական կառավարութեան խոստումներուն: Ահա հոն են անոնք, քսան խրոխտ եւ բարձր գլուխներ, հպարտ ճակատով, արհամարհելով մահը, անցնելու համար հայ ազատագրական պատմութեան զոհերու պանթէոնէն ներս:*

*Եւ հիմա կրկին կարդացէք սկիզբը դրուած անոնց խօսքերը: Քսաններու տեղ քսան հազարներ պիտի գան: Ներքին Նախարար Թալէաթ մէկ հատ հայ պիտի պահէր, ան ալ Թանգարան դնելու համար: Այսօր հայ ժողովուրդը ներկայ է, կենսունակ, ստեղծագործող, մանաւանդ պայքարող: Հայ ժողովուրդը բնաջնջելու ճիգերը վստահ ձախողութեան մատնուած եւ Տօքթ. Պէննէին կուսակցութիւնը կը մնայ հայ ժողովուրդի արդար դատին անխորտակելի ամրոցներէն մէկը:*

*Կարդացէք նաեւ Փարամազի խօսքերը: Կախաղաններու եւ մեռելներուն անպայման պիտի յաջորդեն ազատութիւնն ու յարութիւնը:*

*Այսպիսի մարդիկ էին կախաղան բարձրացող հերոսները: Որքան ուսանելի բան կայ մեզի, իրենց յաջորդող սերունդներուն համար, անոնց կեանքերէն ու պատգամներէն: Գաղափարական նոր սերունդներուն համար ներշնչումի, պայքարի եւ ազգի ծառայութեան նուիրումի հրաշալի խօսքեր կան անոնց պատգամներուն մէջ:*

***

*Աւելի քան 90 տարիներ անցած են 20ներու զոհաբերութենէն ասդին: Հայ ժողովուրդը տակաւին չէ գտած իր ներքին խաղաղութիւնը եւ Փարամազի խօսքերով՝ «Դուք հոն Արեւելքի մէջ, պիտի տեսնէք սոցիալիստական Հայաստանը» տակաւին կը մնայ երազ: Այո, հայ ժողովուրդը վերապրեցաւ համայնավար կարգերուն, հոն իր գոյութիւնը պահպանելէ ետք, եւ 1991էն ասդին, կը գտնուի ձեւական անկախութեան մը գոյավիճակին մէջ, որ փոխանակ օրհնութիւն, խաղաղ եւ ստեղծագործ կեանքի շրջան մը հանդիսանալու, տակաւին կը մնայ, ժողովուրդի մեծամասնութեան, ընկերային արդարութեան մը բացակայութեան, արտագաղթի եւ քափիթալիստական ամենէն անգութ եւ տգեղ իրաւակարգի մը մէջ, մանաւանդ քաղաքական ճակատագրի անորոշութեան մը մէջ: Երկրի իշխանութեան տիրացած մարդիկ իրենց սեփական շահերու հետապնդումէն զատ ուրիշ մտահոգութիւն ցոյց չեն տար: Անդին, մեր պատմութեան ամենէն պանծալի էջերէն մէկը, Ղարաբաղեան ազատագրական պայքարի պտուղները վտանգի ենթարկուած են նոյն այդ ապիկար իշխանութեանց քաղաքական խակութեան եւ թերացումներուն պատճառաւ: Ներքնապէս տկար, ժողովուրդի մեծամասնութեան կողմէ անտեսուած, միջազգային ճնշումներու դիմադրելի ու անկարող իշխանութիւն մը նոյնիսկ չի համարձակիր իր սեփական ժողովուրդին յայտնելու իր կնքած համաձայնութեանց ամբողջ տարողութիւնն ու ողբերգութիւնը, եւ ինչ որ արիւնով ձեռքբերուած է, քաղաքական չիլ հաշիւներու զոհ կ'երթայ:*

*Հարց է սակայն թէ մինչեւ ո՞ւր այս իշխանութիւնը կրնայ խաբել իր ժողովուրդը, լաւ կ'ըլլայ որ նոյն այդ իշխանութիւնը ուշի ուշով անդրադառնայ 20-ներու պատգամներուն, եւ ունկնդրէ իր սեփական ժողովուրդի հաւաքական տրամադրութեան քաղաքական որեւէ լուրջ քայլ առնելէ առաջ: Պատմութիւնը, մանաւանդ մեզի նման տանջուած ժողովուրդի մը պատմութիւնը, անցեալին երբեք չէ ներած դաւաճաններուն, ներկայիս ալ, վստահ ենք, ան ի վիճակի է չափելու, կշռադատելու, մանաւանդ դիմադրելու որեւէ քայլի որ իր գոյութեան կրնայ վնասել, եւ իր պայքարով շահած յաղթանակը քաղաքական լղրճուկ հաշիւներու զոհ դարձնել:*

*Ահա այս իմաստով է նաեւ որ Քսանները միշտ մեզի հետ են, եւ մենք կը մնանք հաշուետու անոնց պատգամներուն:*

*Յարգանք Քսաններու խնկելի յիշատակին:*

INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY

I AM A PIECE OF PAPER
BUT EVEN MORE

1. I am an idea.
2. I accumulate money.
3. I am a promise for the future.
4. I can help educate your children.
5. I can guarantee the continuity of business.
6. I provide cash if death cut breadwinners income.
7. I am property that increases in value from year to year.
8. I lend money when you need it. With no questions asked.
9. I am tangible evidence that a man is a good husband and father.
10. I bring dignity, peace of mind, and security to the later years of life.
11. I am a declaration of financial independence, a charter of economic freedom.
12. I am the only thing that father can buy on the installment plan the mother does not have to finish paying for.
13. I am the financial guardian angel of the HOME.
14. **I am your insurance policy.**



MARONIAN

Blue Cross of California

A.B.A. INSURANCE SERVICES

Blue Shield of California

TEL: 818 **500-9585** — E-mail: BMaronian@aol.com
805 E. Broadway, Glendale, CA 91205 www.ABAinsuranceServices.com

# ՔՍԱՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՏԱՄՔՆ ՈՒ ԱՒԱՆԴԸ

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Եթէ խումբ մը մարդոց հարց տրուի թէ ինչպէ՞ս կրնան փաստել որ իրենք գոյութիւն ունին, հաւանաբար գրեթէ բոլորը վկայակոչեն իրենց ֆիզիքական գոյութիւնը, թէ իրենք միս ու ոսկոր են, շնչող էակներ են, կ'ապրին ու հետեւաբար գոյութիւն ունին: Եթէ մօտ 400 տարիներ առաջ, ֆրանսացի Ռընէ Տեքարթ այսօրինակ պատասխան մը տուած ըլլար այս հարցին, ապա այսօր ոեւէ մէկը ծանօթ պիտի չըլլար իր անուան ու հռչակին: Բայց իր նշանաւոր խօսքով «կը մտածեմ, ուրեմն գոյութիւն ունիմ», ան մարդ էակը բարձրացած կ'ուզէր տեսնել պարզ շնչող էակի (ինչպէս անասունները) վիճակէն դէպի մտածող էակի վիճակ, եւ ատոր համար անմահացուց իր անունը:



Խումբ մը Հնչակեաններ Մեղրիի Փարամազի յուշարձանի շուրջ

Հետեւաբար, մարդ արարածը եթէ իր գոյութիւնը պիտի արժեւորէ, ատիկա պիտի ըլլայ մտածմունքի ճամբով: Սակայն եւ այնպէս, եթէ անձի մը մտածմունքները պիտի սահմանափակուին իր առօրեայով ու այս աշխարհի վրայ իր ապրելիք տարիներով, միլիարաւորներու նման, ան ալ անհետք պիտի մեկնի այս աշխարհէն: Բայց երբ իր մտածմունքները դուրս գան անձնականէն ու ներառեն իր շրջապատի մարդոց գոյավիճակը, ինչպէս նաեւ գալիք սերունդներու գոյավիճակը, ապա ան քայլ մը առաջ գացած կ'ըլլայ դէպի անմահութիւն:

Քսաններու պարագլուխ Փարամազ կրնար մնալ իր ծննդավայր Մեղրիի մէջ, զբաղուիլ իր առօրեայով, շատ հաւանաբար ապրէր ու վայելէր աւելի երկար կեանք մը եւ անհետ ու անյիշատակ մեկնէր այս աշխարհէն: Նոյնը պիտի ըլլար պարագան իր 19 մարտընկերներէն ամէն մէկուն: Սակայն բոլորն ալ գիտակցեցան, որ եթէ իսկապէս պիտի արժեւորեն իրենց կեանքերը, ապա դուրս գալով անձնականի սահմաններէն, պէտք է մտածեն ու գործեն իրենց ազգին ու հայրենիքին համար, մարդկութեան համար: Անոնցմէ մէկուն՝ Վանիկի բառերով, պէտք է «գործել յանուն մարդկային երջանկութեան: Պայքարիլ որ մարդը ապրի ամենազարգացած միջոցներով: Այս է կեանքի վերջնական նպատակը»: Իրենց այս մտածողութեան, այս հաւատամքին արդիւնք է, որ այսօր իրենց նահատակութենէն 91 տարիներ ետք, տակաւին կը յիշենք զիրենք, կը մեծարենք զիրենք, ու կը ներշնչուինք իրենց օրինակով:

Քսանները մեզի թողուցին նաեւ հիանալի աւանդ մը: Երբ ակնարկ մը կը նետենք անոնց ծննդավայրերուն վրայ, կը տեսնենք որ անոնք կու գային Մեղրիէն, Մուշէն, Սամսոնէն, Պիթլիսէն, Արաբկիրէն, Քիլիսէն, Պոլիսէն, Ակնէն, Խարբերդէն, Զմշկածագէն, Տենիզլիէն, Կեսարիայէն, Պարտիզակէն, Վանէն, Շապին Գարահիսարէն եւ նոյնիսկ Աղեքսանդրիայէն: Իրենց հայրենիքի ազատագրութեան ու իրենց ազգակիցներուն բարօր կեանքի պայմաններ ապահովելու վեհ գաղափարն էր, որ քով քովի կը բերէր ու կը միացնէր զանազան շրջաններու ծնունդ այս հայորդիները, յանուն այդ միասնական ընդհանուր նպատակի: Հայու մասնիկները գիտակցութիւնը կ'ունենային միասնականօրէն պայքարելու յանուն ամբողջի, յանուն ազգի:

Քսաններու այս աւանդին կրակէ վերամկրտութեան ականատես դարձանք մեր օրերուն, երբ Արցախեան ազատամարտի ամենաճակատագրական օրերուն, Պաշտպանութեան Նախարար Վազգէն Սարգսեան հեռատեսիլով կոչ կ'ուղղէր ժողովուրդին, որ Հայաստանի ամէն մէկ մարզին մօտ 15 կամաւորներ ներկայանան իրեն, կազմելու համար Մահապարտներու 500 հոգինոց ջոկատ որ պիտի նետուէր մարտի ամենաթէժ շրջաններուն մէջ ու անձնուիրաբար պայքարէր յանուն ազգի: 48 ժամուայ ընթացքին իր սպասածէն մի քանի հարիւրով աւելի մարտիկներ կ'անսային պայքարի կոչին ու յաջորդող մի քանի ամիսներու ընթացքին կը թէքէին պատերազմի նժարը յանուն հայութեան:

Ամերիկայի Նախագահներէն Ճոն Քենըտի ըսած է, թէ «ազգ մը ինքզինք կը բարձրացնէ ոչ միայն այն մարդոցմով որոնց ծնունդ կու տայ, այլ նաեւ անոնցմով՝ որոնց յիշատակը կ'ոգեկոչէ եւ յարգանքի տուրք կը մատուցանէ»:

Քսաններու հաւատամքը մնաց անխախտ, նոյնիսկ երբ կախաղանի պարանը կ'անցուէր իրենց վիզերուն: Մեր պարտաւորութիւնն է անմար պահել իրենց յիշատակը, իրենց հաւատամքին ու աւանդին տարածումովը մեր ժողովուրդի զաւակներուն մէջ: Մեզ նման փոքր ազգերու հզօրութիւնը կը կայանայ մեծաղոյն թիւով ազգայիններու այդ հաւատամքի ընկալման եւ այդ աւանդի կիրարկման մէջ:

Massis Weekly on the Internet
www.massisweekly.com

ՊԱՏԿԵՐՆԵՐ

# ՔՍԱՆՆԵՐՈՒ ՅԱՃԱԽԱՆՔԸ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆՍ ՊԱՍՏԱՌԻՆ...

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Պատմութենէն, պատմական էջերու արիւնոտ հեւքէն եւ պատմութիւն կերտած հերոսներու աներկրային ոգեղէն եւ ժայռակուռ կամքէն փոխանցուած պատկերներ կան, որոնք զարդարելով մեր մանկութեան երեւակայութեան պաստառը, կը լուսաւորեն մեր ազգային ուղին, կը շնչաւորեն մեր կեանքին ժամանակակից էջը եւ կ'ոգեւորեն մեր ապրումներու ներկայ ընթածիրը...:

Մանկութենէս, երեւակայութեանս պաստառին անվանելի յաճախանքը կը կազմեն քսանները՝ որոնք ամէն Յունիս 15ին, կը վերայայտնուէին Պոլսոյ Սուլթան Պայազիտի հրապարակին վրայ մահասիւներէ կախուած ուրուապատկերներով...: Մահը արհամարհած եւ բոցավառ աչքերով վաղուան Այգաբացին յառած հեռահա'ս, հերոսաբի'բ նայուածքներով...: Անմահութեան օթեւանին մէջ յաւերժօրէն ապրող լուսապսակով...:

Երեւակայութեանս պաստառին հակած գլուխներով պարանի օղակին մէջ խեղդուած վիզերով պատկերները, խոստովանիմ որ, մանկութեանս յաճախանքին ամենատխուր, ամենասարսափելի, ուրուականները եղած են...: Մահուա՜ն, նահատակութեան ամենէն բիրտ, ամենէն անողոք, ամենէն անմարդկայինը թուած է կախաղանի վրայ մահը, մարդկային խեղդուած, անշնչացած մարմիններու ճօճումը...: Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, տասը, չէ, այլ՝ քսան գլուխներ... եւ ինչ գլուխներ... իրենց ապրած խաւար ժամանակներուն եւ բռնութեան դաժան պայմաններուն մէջ ամբողջ ազգի մը համար փրկութեան ուղի հարթող, մարդկութեան համար ազատագրութեան ճանապարհ բացող եւ վաղուան յաղթանակի տեսիլքով ապրող լուսապայծառ գլուխներ...: Գլուխներ, որոնք անսամօրէն զիրենք գլխատող թուրքերու աշխատաւոր ընդհանրութեան ընկերային բարօրութեան համար եւս կը խոկային, կ'երազէին ու կը պայքարէին...:

- Միամի՞տ եմ արդեօք, հաւատալու չափ, որ օր մը Սուլթան Պայազիտի հրապարակին վրայ կը բարձրանան Քսաններու քսան յուշարձանները՝ Թուրքիոյ Ազատութեան համար մարտնչած եւ նահատակուած հայ հերոսներու իբր խորհրդանիշը...:

Ամենատխուր եւ ամենասարսափելի ուրուականներու յաճախանքը մանկական երեւակայութեանս պաստառին, տարիներ ետք, գլխ համակած էր արիութեան, գիտակցական մահի իմացութեան, ազգի ու հայրենիքի փրկութեան համար ֆետայական անձնազոհութեան գաղափարներով...: Մանաւանդ երբ սկսած էին անդրադառնալ, թէ մեր ժողովուրդի գոյապահպանման ճառագայթող խորհուրդը եւ պատմութեան առաջնորդող ոգին՝ «իմացեալ մահի» դաւանանքն էր եղած՝ Հայկէն մինչեւ Վարդան, Սասունցի Դաւիթէն Դաւիթ Բէկ, Անդրանիկէն մինչեւ Գէորգ Չաւուշ, Ժիրայր-Մուրատէն մինչեւ Քսանները, Սարդարապատէն մինչեւ Արցախի նորօրեայ դիմադրող հայերը...

Անոնց՝ հողին նոյնացած ազատատենչ հոգին ֆետայական ճախրանքով եւ հերոսական սխրանքով զանգուածներու առջեւէն, անցած էր Գումգափուի, Պապ Ալիի հրապարակներէն՝ վառելով, յեղափոխութեան եւ ըմբոստութեան առաջին բռնութիւնը խարանող խարոյկները...: Յեղափոխութեան առաջին կրակներէն կրակ ու ոգի առած հայ հայդուկները՝ տուն ու ընտանիք, զաւակ ու կին մոռցած ու լքած՝ բարձրացեր էին լեռ ու վանք, իջեր էին ձոր ու հովիտ, մտեր էին ծերպ ու քարայր՝ հողին սրբութիւնն ու խորհուրդը աղարտող, պատիւ, բարոյականութիւն եւ ազգային արժանապատուութիւն սրբապղծող սուլթանի կամակատար թուրք փաշաներէ առաջնորդուած տգէտ ու ցեղամոլ խուժաններուն դէմ ծառանալու համար: Հայ արիւնաքամ հողին, հայ լեռներու աստուածամերձ ոգիներուն, հայ դաշտի ու արտի քրտնաջան արդար ու անիրաւուած մշակներուն եւ Հայ պատմութեան խորքէն հասնող բարկաճայթ «Ոչ»ը պոռալու համար օսմանեան դարաւոր լուծին եւ սուլթանեան արիւնարբու բռնութեան դէմ...:

Հայ մարդուն բազմիցս խոցուած ու ոտնակոխուած արժանապատուութիւնը վերականգնելու համար, հայ ֆետային խստակեացութեամբ շնչեց լեռներու դաժան քամիները, պառկեցաւ լեռնալանջերու բաց երկնքին տակ. կրակեց թշնամի վոհմակներու վրայ. ինկաւ յաճախ թշնամի գնդակներէն՝ զէնքի հետ ուխտեալ պսակադրութեան նարօտը ճակտին...:

Ու ինչու չեմ գիտեր, մանկութենէս ի վեր, հայ ֆետայիներու զոհաբերութեան խորախորհուրդ պատկերը, սրբազան նահատակու-

Շար.ը էջ 18

Mark Your Calander

Festival
ARMENIAN INDEPENDENCE DAY

Sunday September 24, 2006
Verdugo Park, Glendale

Հայաստանի Անկախութեան Փառատօն

Կիրակի, Սեպտեմբեր 24, 2006
Կլէնտէյլի Վըրտուկօ Բարքին մէջ

# ՀԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ

Õ.Խ. Փարամազ եղած է նաեւ տաղանդաւոր հրապարակագիր: Ստորեւ կը հրատարակենք իր հանրայայտ յօդուածը՝ »Հայի Պահանջը«, տպուած «Հնչակ»ի 1914 Մայիսի թիւին մէջ: Յօդուածին մէջ տեղ գտած միտքերը խրոխտ են ու խիզախ, կուռ եւ առնական... ինչպէս էր ի՛նքը՝ Փարամազը:


Անմահ Փարամազ իր տիկնոջ հետ

***ՓԱՐԱՄԱԶ***

*Նորից հիասթափուեց հայը:*

*Նորից յուսախաբութիւնը նրա դարաւոր վշտերի պատմութեան մի օղակը դարձաւ:*

*Պալքանեան պատերազմը իր յետեւից բերաւ Ռումելիի ազատումը Ստամպոլի դարեւոր լծից: Անջատուեց Մակեդոնիան, անջատուեց Եգիպտոսը եւ լեռնական Ալպանեան ստացաւ ինքնուրոյն գահը եւրոպացի Թագաւորով: Կատարուեց այն, ինչ որ պատմական բնա-անհրաժեշտութեամբ պիտի գար բախտը որոշելու այն կառավարութեան, որի միակ ձգտումն է եղել եւ է իր հպատակներից ճորտեր ստեղծել, իր եաթաղանի տակ «ռայա»-ների պարտակատար, հլու հօտեր պատրաստել, եւ միջոցը այդ ձգտման՝ աւեր, կոտորած, զուլում:*

*Ազատուեց Ռումելիի ազգաբնակչութիւնը, իսկ «Ատանաները»՝ հայի մարտիրոսագրութեան ապոթէո՛զը, դարձեալ մնաց կայուն, անշարժ վիճակի մէջ:*

*Եւ նորից նոյն վի՜շտը, նոյն գալարումները:*

*Դեռ երէկ էր, հայ ֆետային հրաժեշտ տալով Մարտիկի, Ջաքարեանի... ըմբոստ ոգիներին, զէնքը ձգեց, «Սահմանադրութեան» հիւրիյէթ, ատալէթ, մուսավաթ, ուխուվէթ ստուերանկարի տակ դաշտը իջաւ, մշակոյթի գործիքները առաւ, իր քանդուած տունը, իր անթեղուած օճախը վերշինելու, կեանքի հրճուանքը ճաշակելու:*

*Դեռ երէկ էր, հայը՝ տանջուած համիտեան ռեժիմից, փարեց «Սահմանադրութեան» եւ մոռացութեան տալով հրէշային խժդժութիւնները, նուիրուեց երկրի վերաշինութեան, վերծնութեան շինարար գործին:*

*Սխալուե՞ց հայը, սխալուեց արդեօ՞ք յանդուգն ֆետային, երբ «Սահմանադրութիւն»ից յետոյ զէնքը վայր դրեց քայքայուած երկիրը վերամշակելու մտքով:*

*Մեր առջեւն է պատմութիւնը՝ ժահրոտ, մռայլ, դժոխային, հայի այսօրուան պատմութիւնը-շարունակութիւնը, ճիշդ յար եւ նմանը նախկինի, իր դարաւոր վշտերի, իր հոգու փլուզումների իր աւերի ու կոտորածի:*

*Այո, սխալուեց հայը պատմական անորակելի սխալով, սխալուեց հայ ֆետային, երբ ոգեւորութեան ազդեցութեան տակ կարողացաւ ինքնիրեն հաւատացնել, թէ օսմանեան տիրապետութեան տակ, տիրապետութիւն տարուած նեղ, ցած ու գծուծ շովինիզմով եւ իսլամական անհամբերատար աշխարհայեացքով, կարող է պաշտպանուել բաղկացուցիչ ազգերի շահը՝ տնտեսական, հոգեկան, մտաւոր:*

*Սխալուեց հայը՝ երբ «Միդհատեան Սահմանադրութեան« մէջ տեսաւ իր վշտի, իր նեղութեան ու ուժասպառման վերջակէտը, այն «Սահմանադրութեան», որը իր էութեամբ մի գրգռիչ ազդակ է տիրող պետութեան աստուածապետական՝ Ջիլլը-Ուլահութեան, ձգտումներին եւ հպատակ ժողովուրդների ստորադասման՝ Էմանէթ-Ուլլահի վիճակի փոխ-յարաբերութեան մէջ բռնօրէն պահելու համար:*

*Վեց տարուան իր գոյութեան ընթացքում, նա՝ «Սահմանադրութիւն»ը իր ներքին տրամասութեան պատճառով ոչ մի ընդունակութիւն, ոչ մի տրամադրութիւն ցոյց չտուեց մասնադրելու ժողովուրդների ձգտման համապատասխան ղեկավար ուժեր, վարչական մեքենան առաջ տանելու համապատասխան կառավարիչներ: Ընդհակառակը՝ կանգնած շովէն ու մոլեռանդ հասկացողութեան վրայ, նրա վարչական առաջնորդները, սկսած փտածութեան օճախ Բ. Դրան եպարքոսից մինչեւ գիւղի յետին միւտիրը, պետութիւնը կազմող տարրերի մէջ իրար յօշոտելու, իրար ծուէն-ծուէն անելու սերմերը ցանեցին, նրանց կենազրկելու ճիգ ու գործունէութիւնները ունեցան: Ատանան, Հաուրանը, Սանասն մեր առջեւն են՝ «Սահմանադրութեան» այդ ողջակէզները:*

*Քաւութեան նոխազներ Թուրք ազգայնամոլութեան: Զոհը Էնվէրի, զոհը Թալաաթի, զոհը Հագգը եւ այլ եպարքոս, նախարար փաշաների, պէյերի:*

*Եւ ի զուր չասաց սահմանադրական Ալի Քեմալ-Թրքութեան գաղափարաբանը, խոէչոլոգը. «Իսլամ Թուրքը գաղափարական միացումի գործիքն է, նա կը տրորէ կամքերը, վերջ կը դնէ ազգութիւններին, նրանց կը շաղախի եւ կը դնի հաւասարութեան մակարդակի վրայ»:*

*Այլեւս ի՞նչ բացատրութիւն: Պապիկեանի արիւնով գրուած տեղեկագիրը սրանց Փոսթ Աքրիփթիւմն է:*

*Տարուած սոյն երեւակայական յղացումներով, ազգայնամոլական հակապատմական տենչերով, այս վեց տարուան ընթացքում նա՝ «չէրիթական Սահմանադրութիւն»ը անատակ եղաւ գծելու եւ գործադրելու մի օրէնք, որ նպաստաւոր պայմաններ տար ազգաբնակչութեան՝ իր պատուի, իր մալ ու միւլքի տէրը դառնալու, իր հանդի մէջ ու ծածկի տակ ապահովութիւն տեսնելու, իր հոգեկան վայելքները ճաշակելու: Ընդհակառակը, տարուած Միլլէթը-Հաքըմէի ցաւագար երազանքով, հէքմէթի-հիւքմէթի մտայնութեան որոճումներով, համիտական, եւ առաւել անբարոյ նախատալից ռեժիմով, մանաւանդ հայութեան համար, չէրիաթական տրամադրութիւններ ստեղծագործեց ու գործադրեց ազգերի կենսունակութիւնը քամելու, քաղաքակրթութեան, յառաջդիմութեան, բարեկաւութեան ազդակները տրորելու, «հաւասարութեան մակարդակի վրայ դնելու»: Օրէնքը «Օսմանլիութեան Սահմանադրութեան» ձեռքին մի գործիք դարձաւ սահմանադրական ազգերը ջնջելու: «Հայերին միայն մնում է պահանջել ու գանգատիլ, իսկ մեր գործն է ու պիտի լինի նրա խնդիրները մերժել ու իրեն էլ հարուածել-: Այսպէս է ասում Պիթլիսի դատարանապետը իրեն դիմող բողոքարկու հային: Այսպէս է խօսում օրէնքն հսկողը, օրէնք բացատրողը օրէնքի հայրը:*

*Պէտք է իրեն էլ հարուածեն...:*

*Եւ օրէնքը խլում է հայի հողը, հայի աղջիկը, հայի ազգութեան ստորոգելիները՝ դպրոց, եկեղեցի, մամուլ, այն էլ այսօր, այն հենց այսօր, երբ արտաքին ճնշումների տակ ստիպուած ստորագրում է Հայաստանի բարենորոգումները:*

*«Հայաստանի բարենորոգումներ»... զաւեշն է դա այն շարան-շարան կոտորածի, թալանի, հրդեհումի, առեւանգման, հողազրկութեան, որը հայ իրականութեան պատմութեան մէջ իր բոսոր արիւնով արձանագրուած է՝ Հայի Մարտիրոսագրութիւն վերտառութեամբ եւ որի դերակատարն է Թուրք բռնապետութիւնը եւրոպական շահամոլ կառավարութիւնների ռեժիսէօրութեան տակ:*

*«Հայկական բարենորոգում»... դա վաւերագրութիւնն է տիրապետող տարրի անսանձ գործողութեան իրաւասութեան, իր նախճիրների մէջ անպատասխանատու մնալու: Դա օսմանեան կառավարութեան իրերի դրութիւնից մի կերպ ձերբազատուելն է: Դա բաժան-բաժանում է հայի Հայրենիքի Հայաստանի յօշոտումը Հայկական Հարցի:*

*Սակայն Հայկական Հարցը մնում է հարց, քանի նա հային չի տուել իր բաղձանքները, իր պահանջի գէթ նուազագոյն չափը, որը կարողանար երաշխաւորել նրա կայքի, գոյքի, անձի անձեռնմխելիութիւնը, նրա աշխատանքի ապահովութիւնը: Հայկական Հարցը մնում է հարց, քանի որ նա՝ հայը, դուրս չեկաւ «ռայա»ի ամօթապարտ կացութիւնից տեղական ինքնավարութիւն, գէթ եւրոպական կոնտրոլ ստանալով: Եւ այնքան ժամանակ նա հարց կը մնայ - որպէս եւ դրացի ու շահագրգռուող պետութիւնների համար - երբ թէկուզ մի հայ էլ մնայ Հայաստանի մէջ իր ներկայ վիճակով, իսկ այս վիճակից ազատուիլը, Հայկական Հարցի վճիռը միայն եւ միայն կը վճռուի հայի հաւաքական եւ դրական ուժովը՝ յեղափոխութեամբ:*

*«Ապագան պատկանում է այն դասակարգին, որը ինքն է ստեղծում իր հաստատութիւնները», այսպէս ասաց Վանդէրվէլդ, եւ մենք աւելացնում ենք՝ եւ այն ազգերին, որոնք կենսունակութիւնն ունին ստեղծելու իրենց հաստատութիւնները:*

*Անառարկելի է, որ հայը իր հաստատութիւնները ստեղծելու կենսունակութիւն ունի: Նրա լեզուն, գրականութիւնը, սէրը դէպի շինարար ձգտումը, հայրենիքի տենչը, ազգութեան օղակապը, դասակարգային գիտակցութիւնը, ընդօրինական ճկունութիւնը, նորատեցութեան ժխտումը, - սրանք այն գործօններն են, որոնք տանջանքով կռուած, արիւնով զօդուած՝ կազմել են հայի Մեծ Կամքը՝ նրա հաստատութիւնների ամբողջութիւնը: Հայը գիտէ իր վիշտը արտայայտել փիլիսոփայօրէն, իր ուրախութիւնը՝ բանաստեղծօրէն: Նա շինել է Մհերի դիւցազներգութիւնը, հիւսել է Արտաւազդը շղթաների կրող դարբինների բարոյավէպը, ծառացել է երեսուն տարի Համիտի եւ նրա ռեժիմի դէմ, -յատկութիւններ, որոնք նոյնիսկ a priori ասել են տալիս մեզ*

*Շար.ը էջ 18*

**100-ԱՄԵԱԿ**
**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ**
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ**

Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ
Մշակութային Յանձնախումբը
Սիրով կը հրաւիրէ գրասէր հասարակութիւնը
Ներկայ գտնուելու
Դասախօսական Երեկոյի մը
Նիւթ՝

**Մեսրոպեան Գիւտի Փառաբանութիւն**
**եւ Պահանջատիրութիւն**
Կը խօսի՝
Բանաստեղծ, Գրող, Մանկավարժ
**Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան**
(Ֆրանսայէն)

**Տեղի կ'ունենայ 21 Յուլիս, Ուրբաթ,**
**երեկոյեան ժամը 8:00ին**
Կլէնտէյլի Կեդրոնական Գրադարանը
222 E. Harvard Street, Glendale

Հիւրասիրութիւն
Մուտքը Ազատ

ԴԱՄԱՍԿՈՍ

# ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

*Մ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ*

*Ինչպէս ամէն տարի այս տարի եւս Դամասկոսի մէջ յատուկ աւանդութեամբ եւ արժանավայել շուքով նշուեցաւ Քսան Կախաղաններու 91րդ ամեակը:*

*Նախագահութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանի, Կիրակի, 2 Յուլիսին, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ բակին մէջ, Հնչակեան 20 նահատակներուն նուիրուած յուշարձանին առջեւ կատարուեցաւ յատուկ հոգեհանգստեան պաշտօն՝ Քսան Անմահներու անթառամ յիշատակին: Ներկայ էին Հ.Մ.Մ.ի հիմնադիր մարմնի անդամներ:*



Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեան ելոյթի պահուն

*Յետ հոգեհանգստեան արարողութեան, Հ.Մ.Մ. ակումբէն ներս տեղի ունեցաւ երդման արարողութիւն, որու ընթացքին խումբ մը նորագիրներ ներգրաւուեցան Հնչակեան շարքերէն ներս:*

*Հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանի եւ կազմակերպութեամբ Սուրիոյ Հարաւային Շրջանի Վարիչ Մարմնի, նոյն օրը երեկոյեան Հ.Մ.Մ.ի շրջափակին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հանդիսութիւն, որուն ներկայ գտնուեցան Արժ. Տ. Աբգար Քհնյ. Քեահքճեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Տէր եւ Տիկ. Ընկ. Տօքթ. Թորոս Թուխմանեան, Հայաստանի դեսպանատան ներկայացուցիչը, Ազ-*



Ընկ. Շաւարշ Ակինեան ելոյթի պահուն

*գային Իշխանութեանց անդամներ, գաղութիս մէջ գործող տարբեր միութիւններու ներկայացուցիչներ եւ հոծ թիւով ընկեր-ընկերուհիներ:*

*Օրուան հանդիսավարը՝ Ընկհ. Մայտա Գույումճեան հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան, յոտընկայս, լռութեամբ յարգելու քսաններու եւ բիւրաւոր նահատակներու յիշատակը, որմէ ետք Սուրիական եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութենէն ետք սկսաւ հանդիսութիւնը: Բացման խօսքը կատարեց Ընկհ. Մայտա Գույումճեան: Ան իր ելոյթին մէջ անդրադարձաւ քսաններու առաքելութեան կարեւորութեան: Ան ընդգծեց որ անոնք փարոս հանդիսացան իրենց փառապանծ կուսակցութեան յետագայ ճանպարհին:*

*Յանուն Հ.Մ.Մ.ի Հիմնադիրներու Մարմնի խօսքը փոխանցեց ընկ. Շաւարշ Ակինեան եւ ըսաւ. «Առաջին յեղափոխական կուսակցութիւնը եղաւ հայութեան մէջ որ օրին քօղազերցեծ Երիտասարդ Թուրքերու ցեղամոլ եւ հայատեաց նկարագիրը: Եւ ոչ միայն կանխատեսեց մեր ժողովուրդի դէմ ծրագրուած ցեղասպանութիւնը, այլեւ անողոք պայքար ձեռնարկեց Երիտասարդ Թուրքերու իշխանութեան դէմ, զգաստութեան կոչեց հայութիւնը: Առաջին յեղափոխական Փարամազի կուսակցութիւնը եղաւ միակը հայութեան մէջ որ օրին քօղազերցեծ Երիտասարդ Թուրքերու ցեղամոլ եւ հայատեաց նկարագիրը: Եւ ոչ միայն կանխատեսեց մեր ժողովուրդի դէմ ծրագրուած ցեղասպանութիւնը այլեւ անողոքի պայքար ձեռնարկեց երիտասարդ Թուրքերու իշխանութեան դէմ, զգաստութեան կոչեց հայութիւնը աւելին իթթիհատ կուսակցութիւնը իր ազգայնամոլ գաղափարներով սեպեց հասարակական չարիք կայսրութեան հպատակ բոլոր ազգաբնակչութեանց, հայ, յոյն, արաբ, քիւր, պուլկար, ասորի ջանաց այս բոլորը մէկտեղել հասարակաց դրօշի տակ:Առաջին յեղափոխական Փարամազի կուսակցութիւնը եղաւ միակը հայութեան մէջ որ օրին քօղազերցեծ Երիտասարդ Թուրքերու ցեղամոլ եւ հայատեաց նկարագիրը: Եւ ոչ միայն կանխատեսեց մեր ժողովուրդի դէմ ծրագրուած ցեղասպանութիւնը այլեւ անողոքի պայքար ձեռնարկեց երիտասարդ Թուրքերու իշխանութեան դէմ, զգաստութեան կոչեց հայութիւնը աւելին իթթիհատ կուսակցութիւնը իր ազգայնամոլ գաղափարներով սեպեց հասարակական չարիք կայսրութեան հպատակ բոլոր ազգաբնակչութեանց, հայ, յոյն, արաբ, քիւր, պուլկար, ասորի ջանաց այս բոլորը մէկտեղել հասարակաց դրօշի տակ»: Ան աւարտելով իր ելոյթը եզրափակեց ըսելով. «Այսօր Քսաններու 91-րդ տարելիցի ոգեկոչման կը վերանորոգենք մեր ուխտը, կ'ուխտենք մնալ հաւատարիմ մեր կուսակցութեան, կ'ուխտենք աշխատիլ վասն մեր իրաւունքներու տէր ստացման, կ'ուխտենք քալել անսայթաք Քսաններու գտած ուղիէն արժանանալու համար իրենց յաջորդները ըլլալու պատիւին, թող անթառամ մնայ անոնց յիշատակը»:*

*Գործադրուեցաւ պատշաճ գեղարուեստական յայտագիր: Ապա Ելոյթ ունեցաւ Տիկ. Թալին Մլքիկեան, որ ապրումով ասմունքեց Տօքթ. Պէննէի «Հնչակեան Նահատակնե-*

*Շար.ը էջ 17*

# Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԲԺԻՇԿ ԹՈՐՈՍ ԹՈՒԽՄԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

*Հնադարեան ցեղախումբերու փաղանգին մէջ աստիճանաւորում ունեցող ազգ մը, աւելի քան 2000 ամեայ հայոց պատմութիւն ունեցող ժողովուրդ մը, իր գոյատեւման պատմութեան ամբողջ ընթացքին չէ վայելած խաղաղութիւն անուանուած պատմական իմաստաւորում ունեցող ընթացքը: Աւելին Օսմանեան կայսրութեան ստեղծման օրէն ի վեր ունեցած է ազգային դեր խնդիր մը՝ Հայկական Դատ: Հայ ժողովուրդը իր հողային եւ ազգային ինքնուրոյնութեան եւ գերիշխանութեան համար տառապած է հարիւրաւոր դարեր շարունակ, մինչեւ հասունցաւ այն պահը որ ծնեցան քաղաքական տիտաններ որոնք օգտագործելով միջազգային պահը որոշեցին հիմնել առաջին հայկական յեղափոխական կուսակցութիւնը որու նպատակը պիտի ըլլար հայ ժողովուրդին, հայ գիւղացուն, հայ բանուորին ապահովել պատուաւոր կենցաղ, ազատ շնչելու եւ ազատ գործելու հեռանկարով: Ուստի արտերկրի մէջ, Ժնեւ, 1887 Թ. հիմնեցին առաջին հայկական քաղաքական կուսակցութիւնը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:*



Ընկ. Տօքթ. Թորոս Թուխմանեան

*Անոնք տէր կենալով իրենց հաւատացած գաղափարախօսութեան, որոշեցին Հայկական Դատի հարցը լուծել քաղաքական եւ յեղափոխական միջոցներով: Երկար է սխրագործութիւններու պատմութիւնը, որուն պիտի չանդրադառնամ, այլ պիտի բաւարարուիմ ազգային ազատագրական գործունէութեան ամենաեռուն ժամանակաընթացքի այն փաստին, որ Քսան Հնչակեան հերոս ռահվիրաներու կախաղանացումն էր 15 Յունիս 1915 Թուին Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ ուր 91 տարիներ առաջ հայ ազգային ազատագրական պայքարի ճամբուն վրայ իրենց հերոսական եւ անբերկուն կեցուածքին համար խեղդեցին ազատութեան ձայնը: 91 տարիներ առաջ Հնչակեան Քսան ընտրանի ազգային յեղափոխական անվեհեր գործիչներ կը բարձրանային կախաղան իրենց մտասեւեռումը ունենալով քաղաքականապէս անկախ եւ ժողովրդավար ամբողջական հայրենիք մը:*

*Կախաղան բարձրացուած Քսան Յեղափոխականները միայն իրենց պատկանած կուսակցութեան համար չէ որ նահատակուեցան, այլ համայն հայութեան ազգային ու ընկերային ազատագրութեան ի խնդիր: Ճիշդ է որ 1915 Յունիս 15ի վաղ առաւօտեան կախաղանի ցողափայտերուն վրայ մարտիրոսացողները բացառապէս Հնչակեան Կուսակցութեան առաջնորդներ էին, սակայն Օսմանեան զինուորական գերագոյն դատարանի կողմէ անոնց դէմ արձակուած վճիռի բովանդակութիւնը «Անկախ Հայաստանի մը ստեղծման համար գործողութիւն տանիլն էր», եւ սա մեծագոյն փաստերէն մէկն է որ անոնք Հայոց ազգային ազատագրական պայքարի պատմութեան մէջ նուիրուեցան ամբողջ ժողովուրդին: Քսանները սոսկական մարդիկ չէին անոնք Ազգային Հերոսներ կոչուելու արժանաւորներ են որովհետեւ միայն Հնչակեանութեան յաղթանակին համար չմարտնչեցան, այլ զոհուեցան Հայրենիքի ազատութեան համար, զոհուեցան հայ ժողովուրդի ազատ անկախ ինքնիշխան ապրելու իրաւունքի պաշտպանութեան ի խնդիր, անոնք ժողովուրդը չառաջնորդեցին հատուածական նեղ ճամբով, այլ համայն հայութեան միացեալ ազատ անկախ հայրենիքի կերտման սրբազան ճանապարհացոյցը եղան, յօժ գիտակցելով միասնական ուժերու հզօրութեանն ու աննկունութեան էութիւնը:*

*Քսան կախաղան բարձրացող աննահանջ ընկերները չմեռան, անոնք մնացին եւ կը մնան հայոց պատմութիւնը կերտող հերոսները, անոնք անսասան հիմը հանդիսացան Հնչակեան գաղափարախօսութեան յաւերժութեան եւ անժամանցելիութեան, անոնք այն վիմանման կոճղն էին որու վրայ ճիւղաւորուեցաւ ու բազմացաւ հայման Հնչակեան կուսակցական ծառը:*

*Յունսի 15, 1915 Թուականը մեզի համար ուխտի վերանորոգման առիթ մըն է քանի դեռ ունինք չլուծուած ազգային դատ մը, քանի դեր Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն դուրս կը գտնուին պապենական հողերու մեծ մասը: Ձէ իրականացած տակաւին հայ ժողովուրդի գերագոյն եւ սրբազան երազը՝ միացեալ տեսնելու Հայաստանը: Պահանջատիրութիւնը կազմակերպութեան մը կամ հատուածի մը առանձին գործը չէ, այլ ազգի մը բոլոր հատուածներո ներդաշնակ, կազմակերպուած աշխատանքներու համադրման արդիւնքն է: Այսօր իրականութիւն դարձած է անմահն Փարամազի խօսքերը, արտասանուած Օսմանցի դահիճներուն դէմ «Մօտ ապագային արեւելքի հորիզոնին վրայ պիտի ողջունենք ծնունդը անկախ Հայաստանի»: Այո, Հայաստանն անկախ է այսօր ու լիիրաւ անդամէ եւ ունի իր պատշաճ տեղը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ընտանիքին մէջ:*

*Երբ նայինք տարբեր ազգերու եւ ժողովուրդներու ազգային ազատագրական պայքարի պատմութեան, այնտեղ չենք տեսներ «Կուսակցական հերոս» հասկացողութիւնը, այլ կան տարբեր կուսակցութիւններու պատկանող ազգային հերոսներ, քանզի անոնք ազգին ազատութեան համար զոհուած են:*

*Փառք տալով հանդերձ «Քսանները» ծնող ու մեծարող Հնչակեան Կուսակցութեան, հայութիւնը եւ առաջին հերթին անոր անկախ Հայրենիքը պէտք է համապատասխան գնահատանքի, արժեւորման ու պատիւի արժանացնէն զանոնց, որոնք մահուան կամաւորներ էին, որովհետեւ դարձան վահան՝ կանխելու համար Հայութեան դէմ նիւթուած դաւը: Ցուցաբերեցին այնպիսի խիզախութիւն մը, որ վայել էր միայն Ազգի ու Հայրենիքի շահերու պաշտպա-*

*Շար.ը էջ 17*

# Massis Weekly

**Volume 26, No. 26** **Saturday, July 22, 2006**


## G8 Leaders Urge Armenia, Azerbaijan To Cut Karabakh Deal



**Closing Meeting of G8 Summit**

ST. PETERSBURG -- The leaders of the Group of Eight (G8) wealthiest nations on Monday threw their weight behind international efforts to resolve the Nagorno-Karabakh conflict and urged Armenia and Azerbaijan to cut a framework peace deal this year.

"We call on Armenia and Azerbaijan to demonstrate the political will, reach agreement and prepare their publics for peace and not for war," they said in a joint statement issued at the end of their two-day meeting in the Russian city of Saint Petersburg.

The statement, as cited by the Russian Itar-Tass news agency, said the Karabakh conflict was on the agenda of the G8 summit. "We confirmed that the Group of Eight supports the mediation efforts of the co-chairs of the OSCE Minsk Group and stressed the need for agreeing on the basic principles of a peaceful settlement of the conflict as early as in 2006," it said.

However, the unresolved Karabakh dispute appears to have been overshadowed by other, more pressing international issues. Reports from Saint Petersburg indicated that the G8 leaders concentrated on mounting tensions in the Middle East, Iran's nuclear program, North Korea's missile tests and global trade.

Three of the G8 powers — France, Russia and the United States — have spearheaded international efforts to end the Karabakh conflict over the past decade, and are believed to have been very close to fulfilling their mission at the beginning of this year.

The American, French and Russian mediators stated earlier this month that further Armenian-Azerbaijani peace talks will be pointless unless Aliev and Kocharian display enough commitment to mutual compromise. The move suggested that both Russia and the West are unlikely to step up pressure on the conflicting parties.

Speaking in Saint Petersburg on Sunday, Russian President Vladimir Putin said Moscow will not seek to impose any solutions on either party. "We would like Armenia and Azerbaijan to find a mutually acceptable solution," he said, according to the Regnum news agency. "I can confirm our position: Russia will not be imposing a solution neither on Armenia, nor on Azerbaijan. Compromise has to be reached by the peoples of these countries."

The Minsk Group's U.S. co-chair, Matthew Bryza, likewise told RFE/RL on June 27 that Washington has no intention to "force people to agree." "You can't have a just and lasting settlement if it's just strong U.S. leverage forcing an agreement," said Bryza. "The sides have to decide that they've reached an agreement that they truly can embrace."

## LA Times Editorial

## Armenian Genocide: Speak No Evil?

The White House's cowardly and secretive refusal to call Turkey's genocide of Armenians by its proper name.
July 16, 2006

WHAT HAPPENS WHEN YOU refer to Turkey's 1915-1923 genocide of Armenians, accurately, as "genocide"? In Turkey, you face a possible three-year jail term, even if it wasn't you using the term but a character in your novel. In the United States, you just lose your job as ambassador to Armenia.

The novelist is Elif Shafak, who learned last week she will go on trial for defamation of the Turkish Republic. The former ambassador is John M. Evans, who was recalled from Yerevan in May after referring to the "Armenian genocide" in a speech before a group of Armenian Americans in February 2005. As one State Department bigwig told an Armenian newspaper: "Ambassadors serve the president, and they are obliged to follow his policy. President Bush's policy as regards the mass killings of Armenians is precise."

Precisely what purpose this policy serves is clear: avoid using the most truthful word in the English language to describe an eight-decade-old atrocity for fear of offending a crucial NATO ally. As Bush's proposed replacement for Evans, Richard Hoagland, put it last month during his confirmation hearing, "Instead of getting stuck in the past and vocabulary, I would like to see what we can do to bring different sides together."

Vocabulary may not be the president's best subject — Bush himself has poked fun at his frequent malapropisms — but he's shown he knows the meaning of the word "genocide." Campaigning for the White House in 2000, Bush told Armenian American groups that "the 20th century was marred by

**Continued on page 4**

## US State Department Responds To Inquiries From Congress Regarding Ambassador Evans' Premature Departure

Washington, DC – In response to a letter spearheaded by Representative Edward Markey (D-MA), and signed by 59 of his colleagues, expressing concern that Ambassador John M. Evans was being "required to vacate his position early for properly characterizing the Armenian Genocide," the State Department has revealed that allegations that Turkey played a role in Evans' departure are simply untrue.

The State Department letter also confirmed that "Ambassador Evans recently tendered his resignation as Ambassador to the Republic of Armenia, but currently remains in charge of the U.S. Embassy in Yerevan."

In addition, the letter stated that "the United States has never denied the tragic events of 1915," explaining that the events "should be determined through heartfelt dialogue, not through diplomatic or political proclamations."

"The Bush Administration has once again failed to answer the question of whether or not the early departure of U.S. Ambassador to Armenia John Evans is related to comments he made about the Armenian Genocide," Representative Markey said. "Moreover, the Bush Administration is continuing to duck when given the opportunity to properly recognize the Armenian Genocide."

## Editors, Civic Groups Decry Increased Pressure On Journalists By Armenian Authorities

YEREVAN -- The editors of Armenia's eight leading newspapers and leaders of several civic organizations expressed on Tuesday serious concern at what they see as growing pressure on journalists critical of the government.

In a joint statement, they pointed to the recent arrest and prosecution on charges of draft evasion of the editor of the "Zhamanak Yerevan" newspaper, the reported beating of a correspondent for another independent publication and threatening e-mails allegedly received by a prominent investigative journalist. They linked these cases with unfolding preparations by Armenia's main governing factions for next year's parliamentary elections.

"All of this is being done by those individuals and forces that have reason to beware criticism and revelation of some aspects of their activities," the statement said without naming anyone. It warned that failure by the Armenian government to protect press freedom would have negative implications for the freedom and fairness of the 2007 polls.

One of the statement's signatories, Boris Navasardian of the Yerevan Press Club, said the government has so far failed to respond adequately to instances of violence against local reporters. "This problem must have prompted a reaction from all government structures," Navasardian told RFE/RL. "Unfortunately, we haven't seen such reaction."

Another signatory, Avetik Ishkhanian of the Armenian Helsinki Committee, complained that ordinary Armenians have also been indifferent to attacks on the independent press. "After each incident there is hope that the public will react and become more active in defending its rights and freedom of speech in particular," he said. "But public reaction has been rather weak until now."

## Lebanon Evacuees Arrive In Armenia

## Armenia Condemns Israeli Attack On Lebanon



**UN Peacekeepers in South Lebanon removing mutilated bodies of innocent civilian victims of Israeli air assault**

BEIRUT/YEREVAN -- Some 200 Armenian nationals and dozens of other residents of Lebanon have been evacuated to Armenia since the start of Israel's devastating strikes against the war-torn nation, officials in Yerevan said on Tuesday.

According to the Armenian Foreign Ministry, just over a hundred of them were airlifted to Yerevan from the Syrian city of Aleppo on board an Armenian passenger jet early in the morning.

"The Armenian consulate in Aleppo was directly involved in the effort, accompanying this group of people from the Lebanese border to Aleppo yesterday," a ministry spokesman, Vladimir Karapetian, told RFE/RL. "Then the group headed to Armenia by air."

Karapetian said most of these evacuees are Lebanese citizens, many

**Continued on page 4**

# Opposition Leaders Unveil 'Pro-Democracy Movement'



Raffi Hovannisian and Vazgen Manukian

YEREVAN -- Two prominent opposition leaders have announced the launch of a broad-based "apolitical" movement which they say will strive for the democratization of Armenia's political system and try to boost the civic consciousness of its population.

The initiative was unveiled on Tuesday by Vazgen Manukian, a veteran oppositionist who headed the country's first post-Communist government in 1990-91. Manukian said he and former Foreign Minister Raffi Hovannisian helped to organize the "civic movement" in the hope of "returning power to people."

A senior member of Hovannisian's Zharangutyun (Heritage) party, Vartan Khachatrian, divulged more details on Wednesday, saying that the movement was launched on Saturday during a meeting in Yerevan of some 200 opposition activists, civil society representatives and even representatives of unspecified pro-government forces. He would not say whether there were other prominent oppositionists among the participants.

"This is not an [opposition] alliance that will aggressively campaign for regime change," he told RFE/RL. "Its agenda is much broader."

Khachatrian said the purpose of the movement is to "form and reinforce a civic base" that will allow for the protection of human and civil rights, judicial independence, freedom of speech and other ingredients of democracy. "The idea is to make courts as independent as possible by means of public pressure, to acquire media outlets or airtime which will allow us to trigger public reaction to the existing problems," he said.

The initiative seeks to address widespread popular apathy towards politicians and politics in general which Armenian opposition leaders say seriously hampers democratic change in Armenia. Manukian has repeatedly stated that the existing mainstream opposition lack popular support and must therefore widen its agenda, largely confined to regime change, that would attract other public actors.

According to Khachatrian, the purported pro-democracy movement will not be directly involved in next year's parliamentary elections. Opposition and especially pro-government forces have already begun preparations for the polls. Hovannisian, in particular, is reportedly looking to team up with other liberal opposition groups. Among his potential allies are Manukian's National Democratic Union, Aram Sarkisian's Hanrapetutyun (Republic) party as well as former parliament speaker Artur Baghdasarian's Orinats Yerkir.

# Metsamor Nuclear Plant Briefly Stopped In 'Safety Precaution'

YEREVAN -- The nuclear power station at Metsamor was reactivated on Saturday after a one-day emergency stoppage which officials attributed to dangerous voltage fluctuations on its internal power supply network.

Its director, Gagik Markosian, told RFE/RL that the plant's automated safety system cut off supplies of nuclear-generated energy to the national power grid and stopped its sole operating reactor on Friday morning. He said this occurred moments after the system detected volatility in an incoming transmission line supplying electricity to various Metsamor services.



Metsamor nuclear power station

"We can now say that our normal work regime has been restored," Markosian said, adding that Metsamor resumed supplies to the national power distribution network on Saturday afternoon.

Markosian also downplayed the accident's implications for the plant's safety, saying that it is the first emergency of its kind registered in the last three years. Metsamor's Soviet-designed light-water reactor was most recently brought to a halt and promptly reactivated in similar circumstances in April 2003. Armenian officials blamed that on unstable electricity supplies from neighboring Iran which allegedly caused voltage fluctuations on a power line connected to Metsamor.

Although Metsamor accounts for nearly 40 percent of electricity generated in Armenia, its brief stoppage did not lead to nationwide power shortages. Officials at the Armenian Energy Ministry say other major power plants made up for the shortfall by boosting their electricity supplies less than 30 minutes after Metsamor was disconnected from the distribution network.

## Armenia Ratifies Nuclear Test Ban Treaty

Armenia has ratified the Comprehensive Nuclear Test Ban Treaty, bringing to 133 the total number of countries who have endorsed the pact, the Vienna-based organization that administers the accord said Monday.

Armenia formally notified the United Nations on July 12 that it had thrown its full support behind the pact, which bans test explosions or any other nuclear explosions, the Comprehensive Test Ban Treaty Organization said in a statement.

In order to take effect, the treaty has to be signed and ratified by 44 states - listed in an annex – who participated in a 1996 disarmament conference and who at the time possessed nuclear power or research reactors. To date, only 34 have done so, the organization said. The holdouts include the United States, China, India, Pakistan, Israel and North Korea.

# OSCE Offices In Yerevan Co-organize Study Tour For Armenian Group On Fighting Human Trafficking

YEREVAN -- Representatives of Armenian non-governmental organizations Hope and Help and Democracy Today, the Ministry of Labour and Social Issues and the police participated in a study tour to Odessa, organized by the OSCE Office in Yerevan and the OSCE Project Co-ordinator in Ukraine.

The purpose of the trip was to exchange experience with NGOs providing assistance to trafficked victims and state units dealing with combating trafficking in Ukraine.

"In recent years, Ukrainian anti-trafficking actors have acquired a lot of experience which can be useful for the Armenian side," said Blanka Hancilova, Democratization Programme Manager at the OSCE Office in Yerevan.

"This study tour was a unique opportunity for the representatives of the two Armenian NGOs and government representatives to learn about the work of their Ukrainian colleagues. We hope that this knowledge will help further improve the conceptual and practical approaches of Armenian anti-trafficking units."

# Turkish Professor Elif Shafak Facing Trial Over Genocide-Related Book

ISTANBUL -- Elif Shafak, A University of Arizona assistant professor has been charged in Turkey with "insulting Turkishness" and could face a prison sentence.

Shafak, who is a Turkish citizen, said she will stand trial because of the words uttered by fictional Armenian characters in her novel "The Bastard of Istanbul" – a book she wrote while she was living in Tucson. In the book, an Armenian character refers to "Turkish butchers."

Shafak, 35, is on a one-year leave from her teaching post in the UA's department of Near Eastern studies. She said her book was released in Turkey on March 8 and already has sold more than 50,000 copies.

The charges against Shafak were filed under the controversial Article 301 of the Turkish Criminal Code. The European Union has frequently warned Turkey that its efforts to join the bloc could be hampered by Article 301, which sets out penalties for insulting the Turkish Republic, its officials, or "Turkishness," and has been used to bring charges against dozens of journalists, publishers and scholars.

No trial date has been set yet, Shafak said. Her case has been reported in the Turkish media but has not been confirmed by prosecutors or court officials.



Elif Shafak

Shafak said her book "questions two big taboos, one of them a political taboo – the Armenian Question - and the other a sexual taboo - incest. So it was not easy to digest for some people and it caused a lot of stir."

On a similar case, a Turkish prosecutor has launched an investigation into Armenian-Turkish journalist Hrant Dink for calling the World War I massacres of Armenians a genocide.

The probe may or may not lead to Hrant Dink being prosecuted for insulting "Turkishness," the Dogan News Agency reported.

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year) * $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Fax :** -------------------------

# Armenia's Internal Resources And The Diaspora

## Weighed Against The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline

**By Tatul Hakobyan**
**(Hetq Online)**

The official opening of the Baku-Tbilisi-Ceyhan (BTC) oil pipeline took place on July 13, 2006 at the Turkish Mediterranean port of Ceyhan. The ceremony was attended by the presidents of Turkey, Azerbaijan, and Georgia as well as by dignitaries from over thirty countries. "BTC is one of the greatest projects of the 21 st century," John Brown, CEO of British Petroleum – the main operator of the pipeline - said in his remarks. The Ceyhan ceremony was the most expensive such undertaking in the history of Turkey, at a cost of some $4 million. The pipeline construction was also very expensive, at of total of $4 billion. A message from the US president addressed to his Turkish counterpart Ahmet Sezer was read at the ceremony. George W. Bush called the BTC project implementation a "historic event".

The idea to build the BTC pipeline originated in the 1990s. On September 20, 1994, after three years of negotiations, the "Contract of the Century" was signed to exploit Azerbaijan's Chirag, Azeri, and Guneshli oilfields for 30 years, at an estimated capacity of 4 billion barrels (511 million tons). Three transport routes were discussed at the initial stage – the Georgian Baku-Supsa route (Supsa is a Georgian Black Sea port), the Russian route to the Black Sea port of Novorossiysk, and the Turkish route to the Ceyhan port.

However, the BCT was first of all a political project, and British and American companies backed by their governments hoped to transport the Caspian oil to Western markets bypassing the territories of Russia and Iran. It would have been possible, meanwhile, to transport the Caspian oil to the international market through the Baku-Novorossiysk pipeline, without building the BTC pipeline. It is no accident that, as experts note, politics will flow along with oil through the BTC pipeline. It would also have been possible to transport the oil through the shortest route – via Armenia – if the Nagorno Karabakh conflict had been settled. In that case, the total construction expenses would have amounted to $3 billion.

On November 18, 1999, the presidents of Turkey, Azerbaijan and Georgia signed in Istanbul a package of agreements related to the pipeline construction. In October 2000, the companies involved in the project led by British Petroleum signed a contract with the governments of Turkey, Azerbaijan, and Georgia on financing the construction of the pipeline. The construction began in September of 2002 and was just recently completed. The length of the pipeline is 1,767 km (1,096 miles), with 443 km passing through the territory of Azerbaijan, 248 km through Georgia, and 1,076 through the territory of Turkey.

Even according to the most optimistic calculations, Azerbaijan will be unable to fill the BTC pipeline on its own, and it will be necessary to persuade Kazakhstan to direct some of its oil to the BTC pipeline. On June 16, 2006, Kazakhstan officially joined the BTC project – Nursultan Nazarbayev and Ilham Aliyev signed an agreement on cooperation in transporting Kazakh oil to the West through the BTC pipeline via the Caspian Sea and the territory of Azerbaijan. The agreement provides for the creation of an Aktau-Baku infrastructure for transporting Kazakh oil through the Caspian Sea in tankers and pouring it into the BTC pipeline. At the initial stage, it is planned to transport 7.5 million tons of Kazakh oil, eventually increasing the volume to 25 million tons. Washington has welcomed the decision of Kazakhstan to join the BTC project.




**The leaders of Turkey, Azerbaijan, Georgia and British Petroleum Chairman inaugurating the new oil pipeline in front of a map depicting its route.**
**Careful study of the map shows that Armenia's Meghri region is attached to Azerbajian.**

Azerbaijani President Ilham Aliyev has great expectations from the pipeline and, evidently, is not in a hurry to settle the Karabakh conflict, considering that the exploitation of the pipeline will bring billions of oil-dollars, strengthening Azerbaijan's economy and its Army. In other words, it will force Armenia to its knees, if necessary - with a new war. It is also evident that in the coming two decades, Azerbaijan will be able to get between $100 and $150 billion dollars from the oil sales. But the question arises as to whether the Western companies who have invested billions of dollars into the Azerbaijani oil sector will allow Aliyev to embark on such adventurism. Even if they do, will Azerbaijan be able to force Armenia to its knees? These are questions that may have differing answers and interpretations. One thing is clear, however—Armenia is being left out of regional projects, is being isolated economically and politically, and is becoming an unattractive country.

Especially now, when the Baku-Tbilisi-Ceyhan pipeline is being exploited and Armenia is facing the challenge of not lagging behind Azerbaijan economically. What does Armenia have to offer instead, what does it have to set off against the pipeline? Most likely, in the coming years, the Baku-Tbilisi-Erzrum gas pipeline and the Kars-Akhalkalak-Tbilisi-Baku railroad bypassing Armenia will be called into existence. This means that our country is no longer a factor. Add to this the contradictions we have with our neighbors (it doesn't matter who is to blame). To the west, Armenia's border with Turkey is closed; to the east, the border with Azerbaijan is mine-strewn. Although the relations with the two other neighbors are normal, the southern neighbor, Iran has serious problems with the international community (besides, geo-politically, the Islamic republic cannot serve as a reliable link with the outside world), and to the north, the roads and the (Abkhazian) railway linking Armenia to the world come to an end in the territory of Georgia.

What does the Armenian government think about this? Last Friday I posed this question to the foreign minister. Vartan Oskanian believes that Armenia has great resources, and he mentioned three kinds: internal, Diasporan, and international. By noting the internal resources, the foreign minister meant economic and political reforms, the democratization processes in Armenia. "Second, the resource of the Diaspora. Today we only utilize one or two percent of this resource. Why? Because there are some problems with the trust toward the country, the illegalities and so on," Oskanian said. If the Armenian government succeeds in using the internal resources and the resources of the Diaspora correctly and in the best way, then the third, the international resource, will mount up. "In such an event, Armenia will become a more reliable partner and there will be a greater flow of investments. Of course, a lot has been done over the past years, but if you link your question with Baku-Tbilisi-Ceyhan, with Azerbaijan's great opportunities, we have no other resources than the ones I have mentioned," the foreign minister stressed.

However, if the resources the foreign minister describes are correctly utilized, it will only be possible to achieve some results, since though the human factor is important, it is not crucial. There exist deeper causes, as was noted above – complicated relations with our neighbors, geographical location, etc. If among our main resources are economic and political reforms, the democratization processes, why then has Armenia, instead of democracy, chosen a direct path to authoritarianism? Why then has it mortgaged Armenia's economy to Russia and a few local oligarchs under the guise of the free market? If Armenia adheres to political reforms, why then are elections always falsified, and why are the falsifications more obvious and more horrifying with every new election? There will be parliamentary elections in 2007 and presidential election in 2008. Do the events taking place in the political sphere in Armenia—for instance, the creation of new political parties with tens of thousands of members in the course of a few weeks dictated from the top of the power pyramid—attest to the adherence to democracy?

As for the resources of the Diaspora, in 1998, when the change in power took place, the current officials blamed the former administration, among other things, for not properly utilizing the potential of the Diaspora. More than eight years have passed since; has the aid from the Diaspora increased in volumes? Eight and a half years ago we were told that it was possible to get $500 million a year instead of $10 million. What has prevented the current authorities from getting the promised $500 million, getting by instead with the same amounts as before? Not to mention notorious cases like that of the Nazarian family, Diasporan philanthropists who were simply swindled.

And finally, international resources. If in the early 1990s Armenia aimed to become an "oasis of democracy" in the region and had surpassed at least three out of its four immediate neighbors – Azerbaijan, Georgia and Iran, today when one reads the annual reports by various international organizations it becomes clear that the oasis is disappearing from year to year. Today Armenia is even compared with Azerbaijan, where a sultanate-type regime is in place.

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

## Armenian Missionary Association Of America A Meaningful Graduation Gift



Gregory Nargizian

What would you give a child graduating Kindergarten? Fortunately, there are many options and we are blessed with many gifts. However, most will not last beyond the few days after graduation, especially when the recipient is a young child.

Steven and Karen Nargizian of Franklin Lakes, NJ surprised their son Gregory with a meaningful and unique gift – a child from Armenia, sponsored in his name, through the Armenian Missionary Association of America (AMAA). The picture and the profile of the child, beautifully framed, was presented to Gregory on his graduation from the Kindergarten of Hovnanian Armenian School of New Milford, NJ in June 2006. Gregory's excitement was great. He had received a gift of a long-lasting relationship with a brother in Armenia.

We congratulate little Gregory for his achievement, and his parents, Steven and Karen, for their thoughtful gesture.

You can do the same. You can help a needy child in lieu of a gift. The annual cost to sponsor a child in Armenia is only $250.00. This will not only save you the trouble of choosing a gift, but will also save a life. Please contact the AMAA at 31 W. Century Road, Paramus, NJ 07652 (Tel. 201.265.2607 – e-mail amaa@amaa.org) and make a loving commitment. It will be a gift with real meaning.

## Armenian Genocide: Speak No Evil?

Continued from page 1

wars of unimaginable brutality, mass murder and genocide" and that "history records that the Armenians were the first people of the last century to have endured these cruelties … If elected president, I would ensure that our nation properly recognizes the tragic suffering of the Armenian people."

It's one of the more blatant of Bush's broken campaign promises. Luckily, the Senate is showing signs of giving this rhetorical appeasement the rebuke it deserves. Half of the senators on the Foreign Relations Committee have demanded that the State Department give an official explanation for Evans' premature recall, and some have hinted that Hoagland's appointment could hang in the balance. They should block the nomination altogether until the ambassador-to-be dares to utter the g-word.

And the Bush administration should have the courage of its lack of conviction and explain forthrightly — not just to Armenian Americans but to all Americans who believe in calling evil by its proper name — why U.S. policy is being dictated by Ankara nationalists.






## Cogressman Adam Schiff Invites Constituents To Participate In A Discussion On The Genocide In Darfur



PASADENA -- Congressman Adam Schiff (D-CA) is inviting his constituents in the 29th Congressional District to participate in a discussion that will raise awareness about the Genocide in the Darfur region of Sudan. Congressman Schiff will participate in a local area gathering of individuals and the congregations of neighborhood churches where constituents will work together to develop ideas aimed at stopping the atrocities taking place in Darfur.

"Putting an end to the Genocide in Darfur is a moral imperative, and I hope my constituents will come provide their insight on we can step up our efforts to halt the bloodshed," Schiff said.

The meeting is open to the public and will take place at the First Presbyterian Church, 2775 Lincoln Ave. in Altadena on Sunday, July 23rd at 12:30 P.M. For more information please call Congressman Schiff District Office at 626-304-2727.

## Lebanon Evacuees Arrive In Armenia

Continued from page 1

of them of Armenian descent, as well as other foreigners. Less than half of them are citizens of Armenia, he added.

The Foreign Ministry estimates that there were approximately 1,200 Armenian nationals residing in Lebanon at least before the start of the Israeli military campaign a week ago. Prime Minister Andranik Markarian held on Thursday an emergency meeting with high-ranking government officials to discuss ways of organizing their repatriation. A government statement quoted Deputy Foreign Minister Gegham Gharibjanian as saying at the meeting that two Armenian diplomats have already been sent to Lebanon and Syria to assist in the effort.

The head of the Armenian government's civil aviation department, Artyom Movsesian, suggested that the Armavia national airline will have to carry out additional flights to Aleppo and Damascus to cope with a "large number of those willing to arrive in Armenia." Markarian agreed, saying that the government is ready to partly subsidize the extra flights, according to the statement.

"I wouldn't say there is a widespread desire [to escape to Armenia] at the moment," said Karapetian. "Nonetheless, our embassy there does receive such requests."

Markarian was also reported to instruct relevant government agencies to assist in the evacuation of Lebanese citizens of Armenian descent that are willing to take refuge in Armenia. There are an estimated 80,000 ethnic Armenians in Lebanon, and most of them live in the Christian districts of Beirut that have not been targeted by Israeli warplanes so far.

The government in Yerevan announced on Monday that it is ready to grant asylum to any Lebanese regardless of their ethnic origin. It said the Armenian diplomatic missions in Lebanon and Syria have been instructed to issue three-month entry visas and residency permits without delay and free of charge.

### Armenia Condemns Israeli Attack On Lebanon

Earlier, Armenia joined Arab nations and the European Union in condemning Israel for its military action against Lebanon that continued for a second week, heightening tensions in the Middle East.

While denouncing the abduction of two Israeli soldiers and the killing of eight others by the Hezbollah militia, the Armenian Foreign Ministry said Israel should stop its air strikes against civilian targets in Lebanon.

"Armenia condemns any violence whether it be abduction or use of force," the ministry said in a statement. "We particularly denounce the use of such disproportionate force intended solely to collectively punish civilians and damage infrastructure. This kind of reaction by Israel is particularly difficult to understand given the fact that the Lebanese government has clearly distanced itself from the abduction incident."

"We hope that there will be restraint in the region and also hope there will be an immediate ceasefire so that the issues can be addressed by peaceful means," added the statement.


HARUT DER-TAVITIAN
License #0B28270

EXCEL
HYE INSURANCE SERVICES

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

**ԳԱՂՈՒԹԱՅԻՆ**

# ՀՄՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՏԵԿՈՆ

*Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Փասատինայի Հ.Մ.Մ.եան տունը լեցուած էր հին եւ նոր Հ.Մ.Մ.ականներով, որոնք եկած էին նորոգելու իրենց ուխտը, մնալու հաւատարիմ եւ ծառայելու իրենց ութսունհինգ ամեայ ալեհեր բայց միշտ պատանի Հայ Մարմնամարզական Միութեան, որը մօտաւորապէս մէկ դար առաջ ծնունդ առաւ Սուրիոյ Հալէպ քաղաքին մէջ, ու շուտով արեւու նման լոյսը սփռեց ի սփիւռս աշխարհի, տալով պանդուխտ հայուն յոյս եւ կորով:*

*Տարիներ ետք այս փառապանծ միութիւնը նոյն թափով եւ հաստատուն քայլերով կը քալէ դէպի երկրորդ դար, իր կողքին ունենալով երիտասարդներու մղիչ ուժը:*

*Այս բոլորին փաստն էր Շաբաթ, 8 Յուլիսին, երեկոյեան կատարուած ձեռնարկը՝ որ կազմակերպուած էր Հ.Մ.Մ.ի Նորընտիր վարչութեան կողմէ, իր կողքին ունենալով Տիկնանց Օժանդակ Մարմինը: Գեղեցիկ երեկոյ մըն էր խրախճանքը, որ խանդավառեց երիտասարդ երգիչ՝ Հրաչ Պօղարեանը իր նուագախումբով: Ուրախութիւնը հասաւ իր գագաթնակէտին երբ սիրելի երգիչը իր գեղեցիկ ձայնով սրահը թնթացուց Ազգագրական եւ յեղափոխական երգերով: Տեսարանը յուզիչ էր երբ վեթերան ընկերներ նստած կը դիտէին նոր սերունդի պատանիները՝ որոնք ծնած եւ հասակ առած Ամերիկայի այս ափերուն կը մասնակցէին բոլոր երգերուն Հ.Մ.Մ.եան դրօշները բարձր ճօճելով:*



*Հ.Մ.Մ.-ի պասքեթպոլի խումբը ատենապետ Վարդան Քէօրէօղլեան հետ*



*Երգիչ՝ Հրաչ Պօղարեան կը ստեղծէ խանդավառ մթնոլորտ*

*Շատ ուրախ մթնոլորտի մէջ բեմ բարձրացան Կլէնտէյլի եւ Փասատինայի մասնաճիւղերու պասքեթպոլի խումբերը, ստանալու իրենց յաղթութեան բաժակը, որ տիրացան Ֆրեզնոյի Բան Արմենեան խաղերէն երկրորդ հանդիսանալով:*

*Օրուայ անակնկալն էր երբ ընկ. Վարդան Քէօրքէօղլեան՝ Հ.Մ.Մ.ի Վարչութեան ատենապետը ներկաներուն հրամցուց շատ լաւ պատրաստուած տեսաերիզ մը, ուր դիտեցինք աշխարհով մէկ տարածուած Հ.Մ.Մ.ականներու հրապարակային տողանցքներն ու ձեռնարկները:*

*Ապա հանդէս եկան «Կայծ» Երիտասարդական Միութեան տղաքը, Ռազմիկ Տէր Դաւիթեան, Ռաֆֆի Քէօրօղլեան եւ Գօգօ Մանուկեան, որոնք նմանապէս խանդավառեցին ներկաները:*

*Ժողովուրդը մնաց մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը եւ մեկնեցան դարձեալ հանդիպելու պայմանաւ:*

*Վարձքերնիդ կատար Տիկնանց Միութիւն:*

*Ապրիք Հ.Մ.Մ.ի Վարչութիւն*

*Կեցցէք Հ.Մ.Մ.ականներ:*


**Գրաւուած թուական**

Սեպտեմբեր 9-ը Շաբաթ Սեպտեմբեր 10-ը Կիրակի
Հայրենի մեծանուն երգիչ
**Համլէթ Գէորգեանի համերգները**
Glendale High School Auditorium-ի մէջ
Մանրամասնութիւններու համար հեռախօսել
Չաքրեան փիդեօ (818) 242-6928 Քաջ Նազար (818) 246-0125





مطعم الشرق

**WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT**

*"Where the East Meets the West"*

**MEDITERRANEAN - LEBANESE FOOD**

**BANQUET HALL**
**CATERING FOR ALL OCCASIONS**

**FAMILY ENTERTAINMENT**
**EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW**




NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

**CALL FOR RESERVATIONS**
**TEL 626-281-1006 626-587-1048**
**FAX 626-281-3641**

**910 E. MAIN ALHAMBRA, CA**




**BELLY DANCING**

PHOTO/CONCEPT-J/D-2005 TEL (6260 795-4493

## ՀԱՅ ԴՊՐՈՑ

# ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ


Միջնակարգի 8-րդ կարգի շրջանաւարտները


Նախակրթարանի 6-րդ կարգի շրջանաւարտները


Նախակրթարանի 5-րդ կարգի շրջանաւարտները


Մանկապարտէզի շրջանաւարտները

*Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանի նախակրթարանի եւ միջնակարգի վկայականներու բաշխման հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 25, 2006ին, Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիին մէջ:*

*Հոգաբարձութեան որոշումով, յաջորդ կրթական տարեշրջանէն սկսեալ, նախակրթարանէն շրջանաւարտ պիտի ըլլան 5րդ կարգի աշակերտները, իսկ 6րդ կարգը պիտի միանայ միջնակարգին: Ուստի, այս տարի վկայական կը ստանային 5րդ, 6րդ եւ 8րդ կարգերու աշակերտները:*

*75 շրջանաւարտներու, անոնց ծնողներուն եւ հիւրերուն համար, ընդարձակ եկեղեցին իսկ նեղ կու գար:*

*Շրջանաւարտներու մուտքով, ապա ազգային քայլերգներով եւ Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիի հովիւ՝ Վեր. Րաֆ Թովմասեանի օրհնութեան աղօթքով սկսաւ հանդէսը:*

*Առաջին խօսք առնողն էր Տօքթ. Հրայր Աթիքեան, հոգաբարձութեան ատենապետը: Ան շնորհակալութիւն յայտնեց պաշտօնէութեան եւ ուսուցչական կազմին՝ իրենց նուիրումին համար: Տօքթ. Աթիքեան իր խօսքին նիւթը առած էր Առակաց Գիրքի Ա. Գլուխէն՝ իմաստութիւն ունենալու կարեւորութեան մասին եւ Պօղոս Առաքեալի խօսքերէն՝ «հաւատք, յոյս, սէր եւ ասոնց մեծագոյնը սէրն է»: «Աշխարհի խաղաղութեան համար ասոնք կարեւոր են» ըսաւ Տօքթ. Աթիքեան եւ խորհուրդ տուաւ շրջանաւարտներուն որ ըլլան իմաստուն՝ իրենց շուրջը եւ աշխարհին սէր ու խաղաղութիւն բերելու: Ան նաեւ թելադրեց որ Մերտինեանը երկրորդականի հասցնելու երազին համար շրջանաւարտներն ալ մասնակից ըլլան:*

*Օրուան հիւր պատգամաբերն էր Պրն. Ճորճ Ֆիլիփս, զոր ներկայացուց Տիկ. Սանտրա Մաղաքեան: Պրն. Ֆիլիփս ծանօթ է համայնքին ու գաղութին իր ազգային, բարեսիրական ու եկեղեցական ծառայութիւններով: Անդամ է Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիին եւ պաշտօններ վարած անոր հոգաբարձութեան մէջ. եղած է AMAA-ի անդամ եւ փոխ նախագահ: AMAA-ի միջոցաւ բազմաթիւ բարեսիրական գործեր տարած է, որոնց շարքին՝ Մերտինեան Վարժարանի հիմնադրութեան աշխատանքները: Պրն. Ֆիլիփս կ'ըսէր շրջանաւարտներուն «կը ղրկուիք որպէս դեսպանները ձեր մշակոյթին ու սորվածներուն: Մերտինեանը երբ կը հիմնուէր, շատեր չհաւատացին անոր գոյութեան, բայց շնորհիւ Օր. Էլիզ Մերտինեանի նման անձերու՝ երազ մը իրականացաւ: Ասկէ մեկնած, իմ թելադրութիւններս են՝ ձեր ստացած ուղղութեան մէջ մի' վարանիք, մի' հետեւիք ամբոխին, դրական կեցուածք ունեցէք, եկեղեցիէն մի' հեռանաք, ունեցէք արժանապատուութիւն, եղէք ստեղծագործ, եղէք լաւ քաղաքացիներ, մի մոռնաք ձեր նախահայրերուն զոհողութիւնները. օգնեցէք հայութեան»: Ան վերջացուց իր խօսքը, ըսելով «Մենք գոյատեւեցինք եւ գերազանցեցինք: Գացէք եւ օրինակ եղէք ուրիշներուն եւ պիտի կարողանանք մեր առաքելութիւնը շարունակել Աստուծոյ հաւատալով եւ Անոր օգնութեամբ»:*

*Հուսկ տեղի ունեցաւ վկայականներու բաշխումը, սկսելով 5րդ կարգի երկու բաժիններով: Անոնք խմբական ելոյթ ունեցան արտասանելով Ուիլիըմ Սարոյեանի* I would Like To See *գրութիւնը: Արմէն Արսլանեան՝ հայերէնով եւ Դալար Պէքարօղլու՝ անգլերէնով ուղերձներ կարդացին: Ապա իրենց դաստիարակներուն՝ Պրն. Ռաֆֆի Ղազարեանի եւ Պրն. Արմօնտ Ղարախանեանի հրաւէրով, 30 աշակերտներ վկայական ստացան տնօրէնին՝ Պրն. Յովսէփ Ինճէճիքեանի ձեռքով:*

*6-րդ կարգի աշակերտները բեմ ելլելով արտասանեցին* A Prayer In Spring by Rober Frost, *ապա Անժէլ Ապաճեան՝ հայերէնով եւ Արմինէ Սանոսեան՝ անգլերէնով կարդացին իրենց ուղերձները: 6-րդ կարգի դաստիարակ, Տիկ. Աշխէն Իսբէնճեանի հրաւէրով եւ տնօրէնին ձեռամբ, 18 աւարտականները ստացան իրենց վկայականները:*

*8-րդ կարգի երկու բաժիններուն հերթն էր: Տիկ. Լինա Արսլանեան եւ Տիկ. Սանտրա Մաղաքեան՝ դաստիարակները, իրենց սրտի խօսքը յայտնեցին դպրոցին հրաժեշտ տուող աւարտականներուն: Գեղարուեստական բաժնին մէջ, դպրոցին երգչախումբը՝ ղեկավարութեամբ Տիկ. Վիկտորիա Աբրահամեան-Էլիասիի, ելոյթ ունեցաւ փունջ մը հայկական ժողովրդական երգերով, որուն յաջորդեց 8-րդ կարգի աւարտականներուն նկարներով սահիկներու ցուցադրութիւնը՝ պատրաստութեամբ Պրն. Արնօ Պապահէքեանի:*

*Ապա շրջանաւարտները ելոյթ ունեցան արտասանելով Յովհաննէս Շիրազի «Կտակս», Տիկ. Աշխէն Իսբէնճեանի կողմէ յատուկ համադրումով՝ այս անգամ զաւակին կողմէ ծնողքին ուղղուած:*

*Թալիա Պաճաքեան՝ հայերնով եւ Տիգրան Նալպանտեան՝ անգլերէնով, արտասանեցին իրենց սրտի խօսքերը՝ հրաժեշտի ուղերձները:*

*Հուսկ՝ Տնօրէնին եւ դաստիարակներուն ձեռքով, միջնակարգը աւարտող 27 աշակերտներ ստացան իրենց վկայականները:*

*Վկայականներու բաշխման արարողութենէն ետք, Պրն. Ինճէճիքեան իր խօսքին մէջ նախ շնորհաւորեց բոլոր շրջանաւատները, ապա շնորհակալութիւն յայտնեց Մերտինեան մեծ ընտանիքին, Հոգաբարձութեան, Ուսուցչական կազմին, պաշտօնէութեան, Ծնողա-Ուսուցչկան կազմին եւ Տիկնանց Օժանդակ Մարմնին: Յետոյ դառնալով 8րդ կարգի շրջանաւարտներուն, ըսաւ. «Պիտի մեկնիք ուրիշ դպրոցներ եւ ուր որ ալ ըլլաք, գիտցէք որ կը պատկանիք հայ ազգին՝ հպարտ եղէք, սորվեցէք անոր պատմութիւնը եւ ձեր հետ տարէք մեր հայրերուն հաւատքը»:*

*Հանդէսը վերջացաւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան հովիւ՝ Վեր. Յովսէփ Մաթոսեանի օրհնութեան աղօթքով:*

*Ի պատիւ 75 շրջանաւարտներուն, տեղի ունեցաւ ճաշկերոյթ խրախճանք Արարատ Տան Տէօքմէճեան սրահին մէջ, կազմակերպութեամբ Ծնողա-Ուսուցչական Կազմին: Տիկ. Էլօ Սահակեան-Դանիէլեան, ատենապետուհին, բարի գալուստի խօսքերով ելոյթ ունեցաեւ եւ Ծնողա-Ուսուցչական Կազմի տարեկան ձեռնարկներուն հասոյթէն 45,000 տոլարի չէք մը յանձնեց Հոգաբարձուեթան ատենապետին, տարեկան նպաստի գումարը հասցնելով 95,000 տոլարի:*

*Մանկապարտէզի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 17ին, դպրոցի սրահին մէջ: Ոսկեղէն համարնեով ու երգերով ելոյթ ունեցան շրջանաւարտ 30 փոքրիկները: Տնօրէնին հակիրճ խօսքէն ետք, կարմիր բաժինը ներկայացուց «Գոյնզգոյն Զուկը» անգլերէնով, իսկ դեղին բաժինը՝ «Կաթիլ մը Մեղրը» Յովհաննէս Թումանեանէն: Աւարտականները իրենց վկայականները ստացան տնօրէնին եւ երկու բաժիններու պատասխանատուներուն՝ Տիկ. Զեփիւռ Թալաթինեանի եւ Տիկ. Կարինէ Ապաճեանի ձեռքով:*

*Նախամանկապարտէզի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 8ին: Ճոխ յայտագրին մէջ փոքրիկները աղօթքներով, սաղմոսներով, հոգեւոր եւ այլ երգերով ելոյթ ունեցան: Ներկայացուեցաւ «Երկինքը Փուլ Կու Գայ» եւ փոքրերը ելոյթ ունեցան հայկական ու ամերիկեան պարերով:*

*Աստուծոյ Օգնութեամբ Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը յաջող տարի մը եւս բոլորեց իր կրթական եւ ազգային առաքելութեան մէջ: Մեր շնորհաւորութիւնները շրջանաւատներուն եւ իրենց ծնողներուն:*

# ՊՏՈՅՏ ՄԸ ԹԱՏԵՐԱԳԻՐ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՀԵՏ ԻՐ ԻՍԿ «ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ» ԹԱՏՐՈՆՈՒՄ

*ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ*
*(Տարուանկուածնախորդ թիւէն)*

*Զննմանուենք այն կովին, որը կծուելու յօժարակամութիւնից յետոյ, կոտոշներին ապաւինելով՝ խփում-թափում է ողջ կաթը... Բայց մնանք ցուլն այն, որի կենդանակերպը մեզանում դէմ դիմաց, երկակի կանգնած է Սարդարապատի յուշահամալիրում ու չի յոգնում, յոգնելու իրաւունքը չունի, ժամանակ էլ չունի, քանզի շրջապատուած է թշնամիներով ու շրջափակուած է նաեւ ինքն իրենով: Արարատները մերը չեն առայժմ, թէ չէ փրկութեան մի նոր կարօտախտով կը յայտնուենք գագաթներին եւ անգամ ազգովի: Մեզ չէր հասնի ճակատագրի ձեռքով սրուած «Սակուրի» երկսայր տապար-կացինը, կը խնայուէր մեր նոր արիւնը: Պէտք է ազատութիւն տալ սեփական եսին, բայց պէտք է նաեւ հսկել նրան: Միայն այդպէս կը զարգանայ մշակոյթը: Միայն այդպէս կը լինեն բարձրութեան վրայ թէ՛ հաւաքարարը, թէ՛ նախագահը: Այս երկուսին խղճով հաւասարեցնողը՝ գրողն է, արուեստագէտը: Թատերագրութիւնը թէեւ լայն սպառման գրականութիւն չէ, բայց իր տեսակի մէջ թագուհի է, թագաւոր ընտրելով բանաստեղծութիւնը: Արման Վարդանեանի երաժշտական իմացութիւնը զգալի է ըմբռնումներում: Նրա գեղարուեստական խօսքը լիցքաւորուած է ժխտման երաժշտականութեամբ, որը կերպարների լեզուն է երկարացնում, լեզուամտածողութիւնն է զտում, յղկում պատկերային արտայայտչամիջոցների ատաղձը: Իմաստասիրական համարձակութիւնը պարզ խօսքին տալիս է թեւեր ու մատնացոյց անում երկնքի ուղին: Դէպի այնտեղ, ուր փառաւոր ճախրն է, երկրային չուն ընդունող հանգրուանը: Արման Վարդանեանը եկել է ու գալիս է դեռ Գողոյից յետոյ, բայց Գողոյից առաջ անցնելու վճռականութեամբ լեցուն: Թէեւ գերխնդրին ծառայող վերնագիր-բառերը ծանր պարտականութիւն ունեն, այն էլ հոմանիշային միկջամտութեամբ: Արդարեւ չեն մնում գրադարանային շրջանակներում, ինչպէս Ուիլըմ Սարոյեանի Յոյսի գրականութիւնը: Վերացական հասկացողութիւնը դաւանանք դարձնելու ճանապարհն անցնում է բազում խոչընդոտների միջով: Մեր կարծիքով յաղթահարելի են բոլոր արգելքները՝ միաժամանակ, թէ յաջորդաբար: Մեր օրերում, երբ յոյսը առաջ է ընկնում սիրուց ու հաւատից, խաթարւում է կեանքի հաւասարակշռութիւնը: Անպայման անցեալն է գլուխ բարձրացնում: Վերյուշի կերպարանքով յառնած այդ անցեալանկատարը բացում է տուայտանքի դարպասները: Ոչ մի կերպար չի կարող խուսանաւել: Պիտի անցնի այդ քաւարանով: Լինի «Թոխոր» - կզաքիս, թէ «Սխացել» սնոտիապաշտ: Հեղինակային «Շաղամաթը» ոլորուած, հիւսուած, փորձուած առասան-հաստաթել է: Վայ նրան, ով ինքնասպան կը լինի դրանով: Էլ նաեւ չի սպառնայ «Մամլեկը» թէեւ բոլորն են մամլակ-մամլիչի տակ: Անգամ «Հրոտիցի» Աննան: Ի դէպի մի թեթեւ զուգահեռ կայ Վարդանեանի «Հրոտից»-ի եւ Կոկտոյի «Ձայն Մարդկային»-ի միջեւ: Երկուստեք ճակատագիր են պեղում, պայմանականօրէն միայնակ կին են, բախտից հալածուած: Սա է ապաշխարանքի թատրոնը, ուր կերպար-անհատը դատապարտուած է հասարակութեան մահացու անտարբերութիւնը քարշ տալով, տուայտելով սեփական Ես-ի սուրսայր կեռմաններում, կեանքը նորովի վերսկսելու մխիթարանք հնարելով ինքն իր համար ու վկայ բերելով սկզբում ընթերցողին, յետոյ միայն հանդիսատեսին: Վաղուայ պատգամախօսը միշտ ուշանում է, ժամանակին չի ժամանում, կամ էլ ընդհանրապէս չի գալիս: Տիեզերքի մեր բաժին-օժիտը հասցէ չունի արդէն, եթէ մենք մեծ խաղի վկայ մասնակիցը չենք, որովհետեւ.*

*«Տեղ մը, ուր կովերն իսկ դաշտերու մէջ պառկած են, հոն անօթի չկայ»:*

*Արդարեւ եւս մէկ հեղինակային փիլիսոփայութեան կարգախօս, որով առաջնորդւում է ապաշխարանքի գաղափարը: Ընկերվարական աստառի առակայութեամբ փաստւում է շատ կենսական մի համոզմունք, որ կուշտը երբեք ընդվզող չէ, ընդհակառակը՝ անօթին է ապստամբ, յեղափոխական, մարտիրոս... ժամանակից դուրս, տարածութիւնից էլ դուրս: Երրորդ տրամագծի որոնում: Յաղթանակը գաղափարական արշաւանքի կտրուկ վարման մէջ է թաքնուած: Արման Վարդանեանն ու նրա հերոս-հերոսուհիները գիտակցում են դա ծայրէ ի ծայր: Հեղինակի տրոհուած եսը ինքն իր դէմ էլ է պայքարում: Կերպարային տրամաբանութեան նոր աստիճանի հաստատումը՝ հակադրուելով դասական չափուած-ձեւուածքին, Անհեթեթի թատրոնի բնակիչներին ընձեռում է հրաժեշտի հնարաւորութիւն՝ դայակային գրականութիւնից: Ապաշխրանքի թատրոնը նոյնպէս տեղ է թողնում ոչնչապաշտութեան, բայց միաժամանակ պահպանում է գերարժեւորման տեսանկիւնը: Ուրեմն, կեցցէ համաշխարհային Մեծ Ոչինչը: Սա էլ իր հերթին սերում է սոփեստական փիլիսոփայութիւնից, որի ակունքներում դեռեւս պպզած է խելառշունչ Սոկրատեսը, երբ ասում էր, թէ ինքը մի բան գիտէ, որ ոչինչ չգիտէ: Բարեբախտաբար այս ոչնչապաշտութիւնը Նիհիլիզմ չէ: Կարելի է ինչ-որ բան փրկել: Վերջապէս ոչնչապաշտներին կարող են հակադրուել ամենինչապաշտները: Եթէ չափ ու սահման չկայ, սահմանադրութիւնը չի գործում, չկայ նաեւ քաղաքացիական պատասխանատուութեան զգացում: Կան լոկ շուկայական յարաբերութիւններ, նիւթապաշտութիւն, մարդատեացութիւն: Թէ ճա՞նճ ես՝ կորար քո թշնամի սարդի հետ միասին: Իսկ հասարակութիւնը վաղուց իր տեղում չէ: Հիմա էլ «ժամանակը դուրս է սայթաքել իր շաւղից»: Մարգարէ Շէքսպիր, որտե՞ղ ես, ողորմի քեզ ու կողքիդ մեռելներին:*

*Անվիճելիօրէն այս աշխարհն առաջին հերթին դաժան «խաղ» մըն է: Ով կը կարողանայ իր խաղը խաղալ եւ լաւ խաղալ, նա էլ դուրս կը գայ վերջնգիծ: Վագրը եթէ գիտակցի, որ ինքը պատկանում է կատուազգիների դասին, կը հրաժարուի այդ պատկանելիութիւնից, մանաւանդ, երբ մկնորսութիւն պարտադրուի նրան: Ուրեմն, հարկաւոր է զգոն լինել եւ անվերջ խուսափել «խպլիկներից»: Այս թեթեւսոլիկները, կեղծ յիմարները, խփնուածները եւ «իմաստուն» ապուշները գալիս են Դոստոյեւսկու մարգերից, որ դոյզն ինչ շունչ քաշեն, վերընձիւղուեն Արման Վարդանեանի «Խպլիկը» թատարախաղի որդեգրման շուաքի տակ... Առհասարակ, այս հեղինակի գործերը կարդալիս, եթէ համեմատութեան պահանջ է զգացւում, անկարող ես որեւէ միջակ մի գրողի յիշել: Անպայման համաշխարհային անուններ են մէջտեղ յայտնւում, որովհետեւ Արման Վարդանեանի չափանիշը դասականութեան արժէքն է, ոչ թէ տեղական նշանակութեան զօրավարժութիւնը: Հեղինակային համոզմունքներում հանդիպում ենք մէկ այլ կարգախօս-մեկնոյթի... «մէջէն ելլելիք բան մը»:*

*Փոքր, աւելորդ համարուող մարդու համաշխարհային ողբերգութիւնը պարտադիր եւ ամենուրեք ծնում է արժանի ընդվզում, բողոք, պայքար՝ փրկութեան աղերսի շարժառիթով: Փոքր հերոսի պարագան մեծ գրականութեան պատմութեան մէջ անվերջ արծարծուող գործընթացներից մէկն է: Շրջանցել չես կարող: Մեզանում էլ սա այն Գիգորականութիւնն է, որը գիտակցաբար բերեց Թումանեանը՝ հեքիաթներին համահունչ: Արման Վարդանեանի «փոքր» հայերը նոյնպէս գալիս են հոգեբանական թատրոնի ակունքներից ու տրոհուելով Անհեթեթի մամլեկի ներքոյ՝ վերածւում են մէկ այլ կենսագոյի: Կենցաղավարութեան, ուր հակադրութիւնները համադրութիւնների նման եւս դրուած են հեղինակային խոշորացոյցի տրամադրութեան շրջանակում: Խոշորացուած թերութիւնը, արատը, սխալը, վտանգը հասարակական աղէտի են հաւասար: Գտնուած է եւ մղւում է մի բարի «պատերազմ»: Զօրավարը իր «13 բանակների» զոհերին սրբեր չի հռչակում, յաղթանակն ու պարտութիւնը չի թմկահարում: Միայնակ, առանձին ապրող հեղինակ է, որովհետեւ «Թոխորը» թատերախաղի կայծակը մէջտեղ է շպրտում համընդհանուր մի կարգախօս. «Ամէն մարդ առանձին կը ծնի եւ առանձին կը մեռնի: Հետեւաբար՝ առանձին պէտք է ապրի»: Կզաքիսի չափ գիշատիչ է երկրորդ Ես-ը որ առաջին վարագոյր-պատից յետոյ կատարուող անցուդարձով արագացնում է միւս երեք պատերի համանուագ փլուզումը: Առաջանում է մէկ ամայի տարածք, որի ժամանակը մահացու վիրաւոր է: Ի՞նչ անել: Կերտել մի նոր ժամանակ՝ նոր տարածութեան հովանաւորչութեամբ: Որոնման տենդը պսակւում է յաջողութեամբ այն դէպքում, երբ գիտես, որ գտնելու բան կայ: Իսկ Անհեթեթի/իմա՝ Ապաշխարանքի/ բեմահարթակում շատ կան ծուարած կորուստներ: Կորցնողը միշտ էլ հետք է թողնում: Արման Վարդանեան թատերագրի*

*Շար.ը էջ 19*

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ**
**(աստուածաբանական համալսարանը)**
**ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2006 – 2007 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ԸՆԴ ՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ**

Գէորգեան հոգեւոր ճեմարան կարող են ընդունուել ՀՀ եւ արտասահմանեան երկրների մինչեւ 21 տարեկան քաղաքացիներ, որոնք ունեն միջնակարգ (կամ աւելի բարձր ) կրթութիւն եւ զաւակն են Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու,եւ որոնք յաջողութեամբ կը յանձնեն ընդունելութեան քննութիւնները հետեւեալ առարկաներից.
Հայոց լեզու (գրաւոր, հարցարան)
Հայ գրականութիւն (բանաւոր)
Հայ ժողովրդի պատմութիւն (բանաւոր)
Երաժշտութիւն (ձայնային տուեալների ստուգում)
Օտար լեզու(հարցազրոյց)
Դիմումները տրւում են Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի տեսչի անունով ներկայացնելով ներքոյիշեալ փաստաթղթերը.
Դիմում
Ինքնակենսագրութիւն
Միջնակարգ (կամ աւելի բարձր ) կրթութեան վկայական
Բնութագիր
Տեղեկանք բնակավայրից
Տեղեկանք առողջութեան մասին (086 ձեւ)
Տեղեկանք թեմի առաջնորդից կամ շրջանի քահանայից
Երկու լուսանկար 3 x 4 չափի
Զինուորական հաշուառման գրքոյկ
Անձնագրի պատճէն
Մկրտութեան վկայական
Փաստաթղթերը ներկայացնել անձամբ:
Դիմումներն ընդունւում են ամէն օր, բացի կիրակի օրերից, Յուլիսի 10-ից մինչեւ Օգոստոսի 20-ը, ժամը 10 -15-ը:
Քննութիւնները՝ Օգոստոսի 25-ից:
Գէորգեան հոգեւոր ճեմարանը 2005 թ. Մարտի 18-ին ՀՀ ԿԳ նախարարութեան N 322 լիցենզիայով ճանաչուել է որպէս աստուածաբանական համալսարան:
Մեր հասցէն՝ ք. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, հեռ. 51-71-80

**ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ**

# ՄԵՆՔ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

*ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ*

Երիտասարդութիւնը ուեւէ ժողովուրդի հայելին է ու անոր ապագան:

Այս համոզումը ունենալով, պարտաւոր ենք մասնաւոր հոգածութիւն ցուցաբերել հայ երիտասարդութեան հանդէպ, աւելի մօտէն հետքրքրուելին անոր հոգեմտաւոր զարգացումին ու ըլլանք ուշադիր անոր սայթաքումներուն ու թերութիւններուն հանդէպ:

Երիտասարդութիւնը մեր վաղուան օրն է: Իբրեւ կառուցող ու ստեղծագործ ժողովուրդ, մեր ժառանգորդներուն ու աւանդութիւններուն հաւատարիմ մնալու ու զանոնք պահպանելու համար պարտաւոր ենք մեր պատասխանատուութիւններուն կատարման մէջ պատրաստել վաղուան նուիրեալ ու հետեւողական երիտասարդութիւնը: Մեր պարտականութիւնն է հայ երիտասարդին մօտ բարձր պահել ազգային ու համամարդկային աւանդութութիւններու պահպանման գիտակցութիւնը: Հայ երիտասարդը պիտի դառնայ արժանաւոր հերթափոխը ազգային ու հայրենական սրբութիւններու պաշտպանութեան:

Մեր պարտականութիւնն է ժամանակակից սերունդներուն փոխանցել հայապահպանման, Հայ դատի ու պահանջատիրութեան, ազգային վերամիաւորման ու ամբողջական Հայաստանի գաղափարը: Յառաջիկայ տասնամեակներուն ազգային վերոյիշեալ դրոյթներով պաշտպանութիւնը իսկական խոյանք մը պիտի դառնայ համաշխարհայնացման համայնակուլ դաւերուն դէմ: Մենք կ՚ապրինք վաղուան համար ու կը նախապատրաստուինք գալիք պայքարներուն նախատեսութեամբ: Եթէ կը փափաքինք այսօրուան ծաղկող սերունդներուն հոգեմտաւոր դաստիարակութեան վրայ տեսնել երաշխիքը ապագայի յաղթանակներուն, ուրեմն պարտաւոր ենք մեր ազգային առօրեային մէջ գործունէութեան աւելի ընդարձակ ոլորտներ ստեղծել հայ երիտասարդին առջեւ: Եթէ մեր աճած ցողունները սլացիկ են, եթէ հասկերը ծարաւի են լոյսի ու գիտութեան, կը նշանակէ, թէ պայծառ է մեր ազգային հորիզոնը: Սա կը նշանակէ, թէ ազգային ու հայրենական ապագային վաղուան հիմերը տոկուն են, այլապէս...:

Երիտասարդութիւնը յեղափոխական ուժ է, պայմանաւ որ զինք օժտենք յառաջադէմ ու ազգային գաղափարախօսութեամբ: Երիտասարդութիւնը կրանիտեայ վահան է, պայմանաւ որ ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրութիւնը կոփենք անոր հոգիին ու նկարագիրին մէջ: Երիտասարդութիւնը մղիչ ուժ է, եթէ յաջողինք անոր անոր գոյութեան տալ իմաստ, ազգային պարտքի ու պարտաւորութեան գիտակցութիւն:

Այս ըսելով չենք փափաքիր թիւը տպաւորութիւն ստեղծել: Աննկատ չենք ու գոհունակութիւն կը պատճառէ մեզի տեսնել հայ գաղափարական երիտասարդին ընկերային առօրեան: Բայց անհրաժեշտ է ընդլայնել ու ընդարձակել անոնց թիւը: Հայ երիտասարդը անհրաժեշտ է հեռու պահել հոգեկան ու բարոյական խաթարումի մթնոլորտէն: Կը գիտակցինք, թէ դժուար է ապրիլ միջավայրերու մէջ ու չկրել անոր ազդեցութիւնը մեր վրայ: Սակայն, որքան ուրախալի պիտի ըլլար մեր երիտասարդ սերունդը պատուաստել բարոյական այլասերումի ու ֆիզիքական հիւծումի դէմ, զինք անեղծ պահել ապականութիւններու ճահիճէն... կը գիտակցինք: Այս բոլորը կը կարօտի ամէնօրեայ հոգածութեան եւ զոհողութեան: Հոս է որ կը ծագի ղեկավարին դերակատարութիւնը՝ երիտասարդին պատուաստելու համոզմունք դարձած նշանաբանը, որ ինք կառուցողն է իր ազգի ապագային, իրականացնողը իր նախորդներուն ազգային եւ հայրենական ձգտումներուն:

Գուրգուրանք երիտասարդութեան վրայ: Փորձենք դաստիարակել զինք, բովանդակութեամբ իմաստաւորել մինչեւ իսկ անոր առօրեայ ժամանցներն ու ընկերային խրախճանքները: Դաստիարակութեան այս առողջ մթնոլորտին մէջ է, որ հայ պատանին պիտի հարստացնէ իր վեհ ու բարի զգացումները, ազնիւ ու մաքուր խղճմտութիւնը, զոհողութեան ոգին ու մանաւանդ ձգտումը դէպի ճշմարիտը եւ արդարը: Ջենք միտիր երիտասարդութիւնը զրկել հաճոյալի ժամանցներէ, բայց պիտի չարտօնենք, որ երիտասարդութիւնը անձնատուր դառնայ հաճոյալի ժամանցներու, մոռնայ յինքզինք, մինչեւ իսկ սկզբունքայնութիւն: Այս իսկ պատճառաւ, աւելի մօտէն հետեւինք երիտասարդութեան քայլերուն: Ակումբներն ու ակումբային հաւաքները ծառայեցնենք մեր կառուցողական ծրագիրներուն իրականացման:

Մեր երիտասարդութիւնը այսօր կը գտնուի որոնումի մէջ: Երիտասարդական բազմաթիւ շարժումներ կը ծաւալին այսօր աշխարհի վրայ: Նոր սերունդներ, ըլլալով ժամակակից քաղաքկրթութեան ու մարդկութեան հոգեկան, մտային ու ֆիզիքական պահանջներուն համարձակ արտայայտիչը, անհանդուրժելի կը գտնեն ընկերային ներկայ փոխյարաբերութիւններու դրութիւնը: Բարեբախտութիւն է, որ հայ երիտասարդութեան մօտ տակաւին կը գերակշռէ զգաստութիւնը: Այսուհանդերձ, որոնումը կը մնայ որոնում: Այս բոլորին մէջ հայ երիտասարդութիւնը կը փնտռէ իր տեղը: Մեր պարտականութիւնն է ժամանակակից ընկալումներու հետ համահունչ հայ երիտասարդը առաջնորդել ճիշդ ուղիով:

Այն գաղափարաբանութիւնը, որով պարտաւոր ենք զրահել հայ երիտասարդը, փոփոխութիւններու ու պատահականութեան հետեւանք չէ:

Ժամանակակից երիտասարդութիւնը հերոս սերունդ է: Հերոս, որովհետեւ յաղթահարելով ամէն տեսակի դժուարութիւն, վճարելով Սփիւռքի մէջ հայապահպանութեան ծանր տուրքը, կը շարունակէ կառչած մնալ իր ազգային աւանդութիւններուն, լեզուին ու մշակոյթին, իր անցեալի պատմութեան, կը խանդավառուի տարածութեամբ փոքր, բայց խորքով ու արտամներով հարուստ իր հայրենիք, կը հաւատայ ու հետամուտ է Հայ Դատի ու պահանջատիրութեան պայքարին. այս է գոյութեան խորհուրդը հայրենիքէն դուրս ապրող ամբողջ հայութեան:

Արտասահմանի մէջ հայապահպանութեան գլխաւոր ազդակ-

Շար.ը էջ 19

# ԴԱՐՈՒՍ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԸ
# ԾՈՒԼՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է

*ՎԱՐԴԱՆ ԱՒ. ՔՀՆՑ. ՏԻՒԼԿԷՐԵԱՆ*

Մարդ երջանիկ ու յաղթական է, երբ իր մաքառումները հոգեկան են ու կը մղուին ճշմարտութեան ճանապարհին վրայ:

Ճշմարտապէս կը հաւատայ, թէ գաղափարական մղումներէ զսպանակուած ջանքերն են, որ կը դիւրացնեն ու կը բիւրեղացնեն ազնուաշունչ նպատակները ու կը վերածեն զանոնք՝ սուրբ ու մնայուն յաղթութիւններու:

Ի՞նչ պիտի ըսէինք այն մարզիկին մասին, որ մրցանակներ շահելու հետապնդումով կը վազէ եւ յաղթակէտին չհասած՝ յուսահատ կանգ կ՚առնէ, ապազինուած իր ներքին ուժերէն:

Մարդկային կեանքը չի շեղիր առաքինութեան ճանապարհէն, եթէ հաւատարմօրէն հետեւինք մայր բնութեան զգաստացուցիչ դասերուն:

Ծոյլին ամէնօրեայ աղօթքն է ոչ թէ Հայր Մերը, այլ հետեւեալ աղերսը երկինքէն:

– Ով Աստուած, շնորհակալ եմ որ տուիր ինծի երեսուն եւ վեց հաստարմատ ակռաներ, ո՜րքան երախտապարտ պիտի ըլլայի, եթէ շնորհէիր ուտելիքն ալ, որ քաղցէ չտառապէի:

Մշակը, որ կը նետէ սերմը ոռոգուած ածուներուն մէջ ճառագայթող ժպիտ մը ունի աչքերուն մէջ եւ վստահ է, թէ իր յոգնատանջ աշխատանքը պիտի բեղմնաւորէ իր ակնկալութիւնը խստաշունչ ձմրան սառնամանիքներէն ետք:

Գիտէ, թէ սերմը հիւրընկալ ծոցին մէջ պիտի մնայ քօղարկուած ամբողջ ձմեռը եւ գարնան կենսապարգեւ շողերուն հետ, երկրին կուրծքը պատռելով, պիտի ցցէ իր վտիտ ու խոստումնալից ծիլերը:

Սերմին ու սերմնացանի յաղթանակն է այս ոսկեվառ հասկին երեւումը, որ լիովին բաւարարութիւն կու տայ մշակին ակնկալութեան:

Այս աննշան ցորենահատիկը, որ արեւին կիզիչ ճառագայթներուն ներքեւ լուսաճաճանչ գոյն կը ստանայ, դաստիարակիչ օրինակ մըն է, որ կը պայծառացնէ մեր հոգեկան երկինքը: Ի՞նչ է պատճառը, որ դարուս մարդը յաջողեցաւ իր նիւթական եւ մարմնական բոլոր պահանջներուն լիակատար գոհացում տալ, բայց ձախողեցաւ նուաճել մնայուն երջանկութիւնը:

Ինչո՞ւ բրգացած հարստութեան կատարը թառած նիւթապաշտը, չի կրնար մեծաբերան յայտարարել Աւետարանի մեծահարուստին նման եւ ըսել՝ Երջանիկ եմ:

Գրեթէ ամէն մարդ, որ յագեցած չէ անիրաւ շահերու կուտակումէն, դժգոհ է ամէն բանի պակասէն եւ չի գոհանար մինչեւ անգամ իր ունեցած աւելորդին յորդութենէն:

Անդնդային պարապութիւն մը կը ներգզան իրենց էութեան ընդերքներուն մէջ եւ չեն գիտեր, ինչով լեցնել այդ պարապութիւնը:

Կը կարծէին, թէ պարկերը դրամով լեցնելով եւ չքաւորութիւնը իրենց կեանքէն տարագրելով, պիտի տիրանան մշտնջենական խաղաղութիւն:

Հիասթափուած են աշխարհի բոլոր երեւելի դրամատէրները եւ յուսալքուած՝ իրենց ապրած վշտալի կեանքէն: Ոմանք անձնասպանութեամբ գտած են իրենց յաւիտենական անդորրը եւ շատերը հիւանդ՝ ծերութեան ստուերներուն մէջ, կը

Շար.ը էջ 19

St. Gregory Armenian Apostolic Church - *Pasadena*

**Free**

**S.A.T. & Gollege Prep Classes**
**4 Week Sessions**
**Beginning July 17, 2006**

**Free**

**Computer Classes for Adults**

**For more information and sign ups, please call the Church Office: (626) 449-1523**

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցի Փասատինա**

**Ձրի**
**Համալսարանի Նախապատրաստական Դասընթացքներ**
**4 Շաբաթուայ Շրջաններ**
**Յուլիս 17, 2006-էն սկսեալ**

**Ձրի**
**Համակարգիչի Դասընթացքներ չափահասներուն համար**

**Տեղեկութիւններու համար հեռաձայնել եկեղեցւոյս գրասենեակ (626) 449–1523**

# Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԲԺԻՇԿ ԹՈՐՈՍ ԹՈՒԽՄԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Շարունակուած էջ 8-էն

նութեան անսակարկ նուիրեալներուն: Այնպիսիներուն, որոնք համարձակութիւնը ունեցան պահանջելու «Ազգային արիական քաղաքականութիւն»: Ահա եւ մեր՝ Հնչակեաններուս այժմէական պահանջքը, յանդուգն պահանջքը որն է «Ազգային Միասնական Քաղաքական Ռազմավարութիւն» այս է մեր դիրքորոշումը եւ համոզումը հասնելու եւ իրականացնելու հայոց Ազգային Գերագոյն Շահերու յաջողութեան յանուն արժանապատիւ Հայաստանի պետականութեան գոյակցութեան: Մենք կը նկատենք որ անիկա իւրաքանչիւր քաղաքական կուսակցութեան իր վսեմ գաղափարախօսութեան, անխուսափելի անհրաժեշտութիւն է, Ազգային Համախոհութիւնը, Միաբանութիւնը, եւ Միասնականութիւնը համազգային հիմնախնդիրներու շուրջ, հեռու հատուածամոլական տենչանքներէ: Ըստ երեւոյթին ուժգին չէր հնչած Զարենցեան հրահունչ պատգամը «Ով Հայ ժողովուրդ, քու փրկութիւնդ քու միասնականութեանդ մէջն է»: Անսակարկ ու աննախապայման այդ միասնականութիւնը հրամայական է այսօր աւելի քան երբեք, յաջողութեամբ կարենալ դիմագրաւելու համար հայութեան առջեւ ծառացող մարտահրաւէրները: Այսօր, Հայկական Դատի, հայոց ցեղասպանութեան հարցի կապակցութեամբ մերթ ընդ մերթ ծագող հայ-թուրք պատմաբաններու ժողովները այն չեն եթէ ոչ միջազգային դաւադրական գործելաոճեր, որոնց դէմ պայքարի եւ մեր իրաւունքներու պաշտպանութեան միակ ուղին համազգային կեցուածքով, անխզելի միասնականութեամբ եւ համակից մարտավարութեամբ հետապնդելն է մեր պահանջատիրութեան ու պայքարին ի խնդիր, առաջին հերթին հայոց Ցեղասպանութեան ճանաչման: Այդ միասնականութեան շաղախի շօշափելի իրականութեան փաստը նախընտրաբար կը վերապահուի առաջին հերթին Հայաստանի իշխող կառավարութիւններուն, անկախ իրենց գաղափարա-քաղաքական ուղղութիւններէն:

Այսօր մենք ազգովին զգաստանալու, սթափելու կարիքը ունինք: Հայրենիքի վերելքով եւ Ազգային Գերագոյն Շահերու իրագործմամբ մտահոգ բոլոր հայ քաղաքական ուժերը, Սփիւռք թէ Հայաստան միասնական մարտավարութեան մը մշակման համար անհրաժեշտ է վեր մնալ կուսակցական նեղ հաշիւներէն կարենալ դիմագրաւելու համար միջազգային այն բոլոր քաղաքական դաւադրութիւններուն, որոնք կը ծառայեցուին միայն ու միայն հզօր եւ տիրակալ պետութիւններու շահերուն, ոտնակոխելով ամէն տեսակի համամարդկային իրաւունքներու արժանիքներ, ճզմելով բոլոր տեսակի ազգային ինքնորշման իրաւունքները: Ու այս բոլոր միջազգային քաղաքական ապճարարութիւնները կիրագործուին ազատութիւն, ժողովրդավարութիւն, դեմոկրասիա եւ մարդու իրաւունքներ լոզունքներու հովանոցին տակ, որուն զոհ կ'երթան ընդհանրապէս փոքր պետութիւններ եւ ժողովուրդներ ինչպիսին է նաեւ մեր չակերտեալ «անկախ» Հայաստանը ու արիւնով ազատագրուած Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչման հարցը, որը խաղաքարթ մըն է հզօր պետութիւններու ձեռքին:

Հայաստան, որպէս համայն հայ ժողովուրդի հայրենիք, պարտաւորուած է գոյատեւել՝ նոր աշխարհայեացքի, անսկզբունային, նիւթապաշտ քաղաքականութեան յորձանուտին մէջ: Ահա այս մտահոգութիւնը մեկնակէտ ընդունած ւ յանուն հզօր ու բարգաւաճ հայրենիքի ապագայի կերտման, այսօր, աւելի քան երէկ առաջնահերթ կը համարենք Հայաստան-Սփիւռք լիարժէք, եւ լիիրաւ համագործակցութիւնը: Մենք կը գնահատենք անցնող 15 տարիներու ընթացքին հայրենի ղեկավարութեան կատարած աշխատանքները եւ ձեռք բերուած յաջողութիւնները, սակայն շինիչ քննադատութիւններով կը քննադատենք նաեւ տնտեսական եւ սոցիալական ներքին քաղաքականութեան տեղքայլը: Մենք կ'ակնկալենք որ Հայաստանի իշխանութիւնները սփիւռքի նկատմամբ այլամերժ չըլլան, անոնք իրենց քաղաքական մտածողութեան հետ միասին համարդրուին սփիւռքեան քաղաքական մտածողութեան որովհետեւ Սփիւռքը Հայաստանին համար հզօր ուժ մըն է որուն ազդեցութեան եւ հնարաւորութիւններուն մասին, հայրենի ղեկավարութիւնը անցնող տարիներու ընթացքին լրջօրէն զգացին:

Հասունացած է պահը որ Սփիւռք-Հայրենիք համագործակցութեան լոզունքները եւ տարուած թղթածրարային ճիգերը, դուրս գան յայտարարութիւններու, համաժողովներու եւ համագումարներու սահմաններէն թեւակոխելու համար գործնական դաշտ, գործնական գետնի վրայ: Պահն է այսօր որ հայ ժողովուրդի ղեկավար նկատուողները ի Սփիւռք եւ ի Հայաստան, ինքնամփոփուին ու անգամ մը համար լրջօրէն ինքնագիտակցին, տեսնեն իրողութիւններն ու մեզ շրջապատող ահազանգները, եւ դուրս գալով աթոռամոլական ու նեղ կուսակցական գձուձ հաշիւներէն, կարողանան ճիշդ գնահատելով միջազգային ընհանուր դրութիւնը, ազգային քաղաքական հասունութիւն ցուցաբերեն, փորձեն ճիշդ կողմնորոշուիլ մեր ազգային գերագոյն շահերը յուզող հարցերու նկատմամբ:

Ներքին տնտեսական քաղաքականութիւնը հիմնուած է մոնոփոլիստական գափիթալիզմի հիման վրայ: Անհատներ, օգտագործելով ու չահագործելով սեփականաշնորհման պետական օրէնքը, տարբեր միջոցներով տիրացան պետութեան բոլոր տնտեսական հիմնարկներուն: Այդ անձիք իրենք են որ կ'իշխեն Ազգային Ժողովին, կառավարութեան, ուստի եւ ժողովուրդին վրայ, իրենց ձեռքին մէջ պահելով երկրի ղեկը: Դժբախտաբար կառավարութեան ընդունած հակակոռուպցիոն որոշումները չեն բարձրանար թուղթի սահմաններէն վեր:

Գալով մշակութային, կրթական, գիտական քաղաքականութեան, դժբախտաբար նշեմ որ անոնք լքուած են պատահականութեան ու ժամանակի քմահաճոյքին:

Իսկ ներքին քաղաքական դաշտը անկայուն է եւ ալեկոծ: Երկու միլիոննոց փոքր Հայաստանին մէջ գոյութիւն ունի պետականօրէն գրանցուած աւելի քան 65 կուսակցութիւն: Կ'ենթադրեմ սխալած չեմ ըլլար եթէ ըսեմ, 90% տոկոսը անհատական կուսակցութիւններն են: Ցաւով կրնամ յայտարարել այն թէ՝ ներկայիս Հայաստանի տարբեր խաւերու պատկանող ժողովուրդի քաղաքական մտածելակերպը հետեւեալն է.

Ա) Ժողովուրդը կորսնցուցած է իր վստահութիւնը երկրի ներկայ ղեկավարներու նկատմամբ:

Բ) Ժողովուրդը կորսնցուցած է իր հաւատքը երկրի ապագայ ղեկավարներու նկատմամբ:

Գ) Եւ ամենավտանգաւորը՝ ժողովուրդը կորսնցուցած է իր յոյսը հայրենիքի ապագայի նկատմամբ:

Այս բոլորը ժողովուրդին դրած են անտարբերութեան հոգեվիճակին մէջ, որու պատճառով շատ դիւրութեամբ կը դիմեն արտագաղթի: Ուստի եւ Հայրենիքի հայաթափման:

Մեր բոլոր հայրենասիրական ճառերը, ազգասիրական ծրագիրները, Ղարաբաղի հարցին եւ Հայկական Դատի լուծման հեռանկարները, Սփիւռք-Հայրենիք համագումարները եւայլն, եւայլն այս բոլորը կ'իմաստազրկուին ու կը յանձնուին քամու քմահաճոյքին, եթէ Հայաստանէն ժողովրդային արտագաղթը, ուղեղներու արտահոսքը այս թափով շարունակուի: Մեզի համար համոզիչ չէ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ տրուած արհեստական բացատրութիւներն ու պատճառաբանութիւնները: Արտագաղթի իսկական պատճառը ընկերային ու սոցիալական հիմք ունի, Հայաստանի ժողվուրդքը ինք իր հղի վրայ որբացած կը զգայ: Հայրենի ժողովուրդի մօտաւորապէս 70-80% տոկոսը սոցիալական հիմնախնդիրներէն անապահով վիճակի մէջ է: Այս տհաճ իրականութիւնները որ ես ցաւով կ'արտայայտեմ, վստահ եմ որ իւրաքանչիւր ազգայինի համար դարձեալ խոր ցաւ է իր կրծքին վրայ ծանրացած ու ան կը մտածէ ի՞նչ կրնանք ընել, ինչ պէտք է ընենք:

Այո՛, այս է մեկնակէտը: Սփիւռքը եւ հայրենի իշխանութիւնները միատեղ պէտք է դիմագրաւեն բոլոր ազգավնաս եւ հայրենակործան դժուարութիւնները: Պահն է արդէն որ Սփիւռքի քաղաքական միտքը իր մասնակցութիւնը բերէ հայրենաշինութեան գործընթացին մէջ:

Այսօր, հայրենիքի վերելքով մտահոգ բոլոր քաղաքական ուժերը վեր մնալու կուսակցական նեղ հաշիւներէն, պարտաւորուած են համազգային գիտակցութեամբ կառուցելու ժողովրդավար ու զերիշխան պետականութիւն:

Այժմէական լուծում պահանջող խնդիրներէն մէկը՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռանկիւնի ուժադծերու ուղղութեամբ, Ազգային Գերագոյն Շահերու նկատմամբ միասնական մարտավարութեան հասնելու գերխնդիրն է:

Սփիւռքի ներուժը հզօր է համաշխարհային մաշտապով, Հայաստանի աշխարհագրական դիրքը հզօր է միջազգային մարտավարական մաշտապներով, հայազգի գիտական, մշակութային, գրական ուղեղները հզօր են համաշխարհային առումով, ուրեմն ինչն է՞ անհրաժեշտ եթէ ոչ ազգային զգաստութիւնը, հաւաքական պատասխանատուութեան զգացումը, դժուարութիւնները յաղթահարելու վճռակամութիւնը եւ Փարամազի թելադրուած «Արիական քաղաքականութեան» կիրառումը:

Այս առումով, մենք պատրաստ ենք ձեռք երկարելու բոլոր անոնց, որոնք արժանավայել ձեւով պատրաստ են գործակցելու ու միասնաբար պայքարելու յանուն հայ ժողովուրդի, յանուն Հայաստանի, յանուն մեր ազատագրուած Արցախի, յանուն ազատագրուելիք արեւմտահայաստանի հողերու ու յանուն հայկական դատի յաղթարշաւին:

Մեր շուրջ կատարուող քաղաքական անցուդարձները, անոնք ըլլան միջազգային, շրջանային թէ ազգային մակարդակներու վրայ, մեզմէ իւրաքանչիւրէս կ'ակնկալեն, նախ, զգօնութիւն, ապա սկզբունքայնութիւն ու խիզախ նուիրուածութիւն: Այսինքն այն արժէքներով որոնցմով գործեցին եւ նահատակուեցան Քսանները, որոնք այժմէական են նաեւ այսօր:

Բիւր յարգանք անմահն Քսաններուն:

# ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 8-էն

րուն» քերթուածը: Իսկ Հալէպէն շնորհալի սամունքող Ջանի Նազարեան արտասանեց Սիամանթոյի «Յաղթանակ Մը» քերթուածը: Ընկ. Ռաֆֆի Մահտեսեան երգեհոնի վրայ կատարեց երաժշտական կտոր մը՝ նուիրուած Քսաններուն: Ընկ. Յովսէփ Յատուկեան ընկերակցութեամբ ընկ. Ռաֆֆի Մահտեսեանի, մեկնաբանեց երեք ազգային երգեր «Ջի Ցոզնելը Հայը», «Հայրենիքիս Ջուրը», «Հնչակեան Ենք Մենք» որոնք ոգեւորեցին ներկաները: Գաղութիս շնորհալի ասմունքող Տիկ. Անուշ Մարաշլեան յուզումով արտասանեց Գառնիկ Ադդարեանի «Պայազիտ» բանաստեղծութիւնը:

Ընկհ. Մայտա բեմ հրաւիրեց օրուայ պատգամախօսը՝ Հալէպէն յատկապէս հրաւիրուած ծանօթ մտաւորական հասարակական գործիչ, Ս.Դ.Հ.Կ. կեդր. վարչութեան անդամ ընկ. Տօքթ. Թորոս Թուխմանեանը փոխանցելու օրուան պատգամը, որուն խօսքը կու տանք առանձին:

Քսաններու ոգեկոչման հանդիսութեան գեղարուեստական բաժինը ճոխացուց ընկ. Գօզօ Բամպուքեան փունջ մը հայրենասիրական երգերով ընկերակցութեամբ ընկ. Ռաֆֆի Մահտեսեան, որ մեծ խանդավառութիւն եւ ոգեւորութիւն ստեղծեց ներկաներուն մօտ:

Եզրափակիչ խօսքը կատարեց Թեմիս բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանը: Ան ընդգծեց Քսաններու նահատակութեան ազգային իմաստն ու կարեւորութիւնը, կարճ տպաւորիչ եւ զգացական խօսքերով պատմեց իր տուած այցելութիւնը Սուլթան Պայազիտի հրապարակը ու Շիշլիի գերեզմանատունը: Ապա՝ «Պահպանիչ»ով եզրափակեց իր խօսքը:

Հանդիսութիւնը փակուեցաւ Ս.Դ.Հ.Կ. քայլերգի երգեցողութեամբ:

Ազգային գաղափարական վերանորոգ տրամադրութեամբ ներկաները բաժնուեցան հանդիսութենէն:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

# «ԵԹԷ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՕՇԻ ՄԸ ՏԱԿ ՀԵՏԱՊՆԴՈՒԷՐ»

*Շարունակուած էջ 1-էն*

սերտացման, «Գործնլյանուն մարդկային երջանկութեան, մէկ խօսքով՝պայքարիլ որ մարդը ապրի ամենազարգացած միջոցներով», պիտի շեշտէր Վանիկ: Համամարդկային այդ սկզբունքը՝ «պայման է, որով հայ ազգը կրնայ իր ազգային անհատական գոյութիւնը ապահովել», պիտի բանաձեւէր Քէօսէեաններ:

Ճիշդ է, այդ սրբազան առաքելութեան վարձատրութիւնը, ափսո՜ս, հանդիսացաւ, Սուլթան Պայազիտի վրայ բարձրացած քսան կախաղաններ, որոնց վրայ, թող որ անշնչացան անոնց կենսավառ մարմինները, բայց, մնացին՝ անոնց պատգամները, որոնք ոչինչ կը զիջին իրենց այժմէականութենէն:

Անարգ մատնութիւն մը ճախողութեան մատնեց 20-ներու ծրագիրը: Ձերբակալուեցան անոնք: Ամբաստանուեցան անջատողականութեամբ, անկախ Հայաստան հիմնելու «դաւադրութեամբ»: Բարձրացան կախաղան, արի ոգիով. «Տէր հայր, տո՛ւր այս չոր թաշկինակը իմ մօրս, ըսէ՛ անոր, որ անիկա երբեք թրջուած չէ արցունքով», եւ նուիրումով, իրենց նահատակութեամբ երաշխաւորուած վաղուան կենսավառ, հզօր ու ստեղծագործ՝ «Արեւելքի հորիզոնին վրայ բարձրացող սոցիալիստական հայաստանի» հաւատքը իրենց ներսիդին:

20-ները իրենց նահատակութեամբ ՝ լոյս սփռեցին հայ ժողովուրդի վերահաս կեանքի եղեռական եւ ապա յետագայ, լուսաւոր ու յաղթական զարգացումներու վրայ:

Մարտիրոսացան անոնք, բայց այս անգամ, իրենց վարձատրութիւնը եղաւ հայ ժողովուրդի ու հայրենիքի վերածնունդը:

Եղեռնեան 1,5 միլիոն նահատակներուն արձանագրած համազգային ողբերգութեան յաջորդեց կազմաւորումը՝ Սարտարապատով գոյառած Հայաստանի Ա.. Հանրապետութիւնը: Երկու տարի ետք, երկնումը՝ Սոցիալիստական Հայաստանի: Ութ տասնամեակներ վերջ, քանդակուեցաւ՝ մերօրեայ Ազատ Անկախ Հայաստանի Հանրապետութեան խոյանքը: Ազատագրուեցաւ՝ արծուասիրտ, հայուն պարծանք՝ Արցախը: Այդ կերտումները կը հանդիսանան մեր 20-ներուն մարգարէացման ապացոյցները. «Դուք վաղը պիտի տեսնէք Արեւելքի հորիզոնին վրայ Սոցիալիստական Հայաստան» ինչպէս կանխագուշակեց մեծն Փարամազ:

Ներկայիս, 20-ներու նահատակութենէն 91 տարիներ ետք, ըլլայ մեր հայրենիքը, եւ ըլլայ աշխարհի մարդկութիւնը, կը դիմագրաւեն ներքին եւ արտաքին բիւրաւոր տագնապներ:

Անկախ այն հանգամանքէն, որ մերօրեայ հայրենիքը մնայուն սպառնալիքի տակ կը գտնուի արտաքին ճակատի վրայ, ապահովական տեսակէտէն, եւ աւելի քան երբեք կարիքն ունի ազգային ամրակուռ ներքին միասնականութեամբ դիմագրաւելու համար զանիկա՝ տակաւ կը շեշտէ իր ներքին պառակտուածութիւնը, որ հիմնական պատճառներէն մին եղաւ 91 տարիներ առաջ, մեծ Եղեռնին:

Միջազգային թատերաբեմէն ներս, տակաւ կ՛արմատաւորուի իրարանհանդուրժողութիւնը աշխարհի ժողովուրդներու միջեւ, կը խորանան թշնամութիւնները եւ կը տարածուին համայնքային ատելութիւնները, միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի տակաւ ընդհանրացող արդիական տեսութեան ներքեւ: Տէրութիւններ կը սպառազինուին մարդկային զանգուածային կորուստներ պատճառելու կոչուած անհակակշռելի կորիզային զէնքերով: Իրողութիւն է, որ վտանգուած է աշխարհի խաղաղութիւնը:

20-ներու դատավարութեան Նախագահի, 20-ներու նուիրուած իր գնահատական խօսքի աւարտին կատարած բնորոշումը «[illegible]եթէ երջանկութեան տեսլականը ընդհանուր դրօշի մը տակ հետապնդուէր» բանաձեւում մըն էր, որ կը մնայ այն ճշմարիտ ուղին, որ մարդկութիւնը պիտի առաջնորդէ ապահով, արդար ու երջանկաբեր նաւահանգիստ:

Փա՜ռք 20-ներուն:

# ՔՍԱՆՆԵՐՈՒ ՅԱՃԱԽԱՆՔԸ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆՍ ՊԱՍՏԱՌԻՆ...

*Շարունակուած էջ 6-էն*

*թեան վսեմաշունչ պահը երեւակայութեանս պաստառին վրայ, գծուած է Սուլթան Պայազիտի հրապարակին վրայ բարձրացած Քսան մահասիւներու՝ հայութեան ապագան կռահող եւ վաղուան Մեծ Յաղթանակի ոտնաձայները լսող մարգարէներու՝ ողբերգական վախճանի մարմինս փշաքաղող եւ հոգիս սարսռացնող տխուր եղերական տեսարանով...:*

*- Ինչո՞ւ սակայն, այսքան ուշացաւ կամ այսքան պէ՞տք է ուշանար-, ես ինծի հարց կու տամ, - ազգային խղճմտանքէս բարձրացող ձայներուն անսալով, Հայաստանի համար զոհուած հայ ֆետայիներու խորհրդանիշ Քսաններու յուշարձան-կոթողը Երեւանի թէ Մեղրիի մէջ...:*

***

*Անոնք մահը դիմագրաւող հոգեկան եւ ֆիզիքական արիութեամբ եւ ֆետայական անձնուրացութեամբ բարձրացեր էին հայ աշխարհի անկոխ լեռնալանջերը եւ Ազգային Ազատագրական Պայքարի պատմութեան էջերը հարստացուցած էին Սասնոյ եւ մանաւանդ Զէյթունի հերոսամարտի պանծալի յաղթանակով...: Ու եթէ ազգային ազատագրական պայքարի վաւերական պատմութիւնը պիտի գրուի օր մը, անպայման Զէյթունի յաղթանակը պիտի կազմէ անոր արիւնոտ էջերուն դափնեպսակը...: Բայց տակաւին չէ գրուած արժանավայել խորութեամբ Զէյթունի Սարդարապատը կանխած Յաղթանակի երգը, որուն կշռոյթը խեղդուած կը մնայ կախաղաններու կատարին...: Ուրիշ խեղդուած ձայնով երգերու նման...:*

*1915 Յունիս 15ին, այսինքն 91 տարիներ առաջ, - Անոնք, Սուլթան Պայազիտի մահաշուք հրապարակին վրայ կախաղաններուն բարձունքին ճօճուած քսան գլուխները չէի՞ն, որ Ատանայի կոտորածէն շատ առաջ, քաղաքական իրապաշտութեան եւ հոտառութեան վկայութիւնը խաղալու, խորաթափանցօրէն վերլուծելով «երիտասարդ Թուրքեր»ու սահմանադրական կեղծիքը, մերկացնելով իրենց ոճրածին ծրագրին՝ ցեղասպանութեան՝ բոլոր ծալքերը, ոչ միայն իրենք ֆետայական զէնքը վար չդնելով կուիւ մղած էին, այլեւ հայութիւնը կոչած էին ընդհանուր զօրահաւաքի որպէս նախապատրաստութիւն հայութեան դիւցազնական ինքնապաշտպանութեան, Սարդարապատէն առաջ, Սարդարապատին օրինակով...:*

*- Ե՞րբ արդեօք պատմական այս Մեծ Ճշմարտութիւնը, - Սփիւռքի թէ հայրենիքի մէջ, - բարձրաձայն պիտի ըսուի ու գրուի, պատմութեան «սպիտակ բիծերը» լեցնելու պատմաբանի գիտական բարեխղճութեամբ թէ հայ գրագէտի խղճմտանքով...:*

# ԼԻԲԱՆԱՆ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԸ ՄԱՏՆՈՒԻ

*Շարունակուած էջ 1-էն*

*ապաստան տալով եւ օգնելով անոնց:*

*Յուլիս 18-ին Հայաստանի փոխ Արտաքին գործոց նախարար Գեղամ Ղարիբջանեան կառավարութեան նիստի ընթացին տեղեկացուց, որ ռմբակոծութիւնները սկսելէ ետք Լիբանանէն Սուրիոյ ճանապարհով Երեւան ժամանած է Հայաստանի 200 քաղաքացի:*

*Հայաստանի կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնած է նաեւ ընդունելու Լիբանանահայ գաղթականներ: Այս նպատակով յատուկ փոխադրամիջոցներ տրամադրուած են, որոնք շաբաթը երկու անգամ, Պէյրութէն-Հալէպ եւ ապա Երեւան պիտի տանին բոլոր անոնք, որոնք կը փափաքին Հայաստան տեղափոխուիլ: Խոստացուած է նաեւ պետական օժանդակութիւն:*

*Ղարիբջանեանի համաձայն ներկայիս Լիբանանի մէջ կայ մօտ 1200 Հայաստանի քաղաքացի, իսկ Լիբանանի հայութեան թիւը կը կազմէ 120 հազար:*

*Միւս կողմէ կը տեղեկացուի, որ Սիտնէյի հայկական պարախումբի 70 անդամները եւ անոնց 10 ծնողները, Երեւանէն եկած են Պէյրութ հոն երկու օր մնալէ ետք անցնելու համար Աւստրալիա: Սակայն, ռազմական գործողութիւններու եւ Պէյրութի միջազգային օդակայանի փակուելուն պատճառաւ, անոնք կը մնան բանտարկուած հիւրանոցի իրենց սենեակներուն մէջ:*

*Լիբանանի քաղաքական խիստ անապահով վիճակին պատճառով աւելի քան 100 հազար հոգի երկրէն դուրս ելած է: Այս առթիւ Հայաստանի կառավարութիւնը տեղեկացուցած է Սուրիոյ եւ Լիբանանի իր դեսպանատուներուն թէ երեք ամսուան կեցութեան վիզա պիտի շնորհուի բոլոր անոնց որոնք կը փափաքին ապաստանիլ Հայաստանի մէջ, առանց որեւէ էթնիք խտրականութեան:*

# ՀԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*թէ նա՝ հայը, պատրաստ է ու կարող է մեռնիլ իր հաստատութիւնները պահել-պահպանելու եւ զարգացնելու համար:*

*Եւ նա շատ է մեռել:*

*Իթթիհատ-գերմանական «բարենորոգումները» հայութիւնը բնաջնջելու նորագոյն այդ որոգայթները, նրա բնական ձգտման առարկան չեն: Նա իր ստեղծած հաստատութիւնները սրբագրել գիտէ իր արիւնով: Նա յեղափոխականացած յեղափոխական է:*

*... Բայց այս կենսունակութիւնները խեղդում են, նրա ստեղծագործած հաստատութիւնները հիմնայատակ են անում: Աւերածութեան կաղ Դեւը՝ զինուած փանիսլամիզմի եւ «տիրող-ազգի» ամէն ինչ սառցակոյտ դարձնող սեւեռեալ գաղափարով, ծուիկ-ծուիկ է անում այն հիմքը, որի վրայ ձեւուած, հիմնուած է հայի ստեղծած հաստատութիւնները - հայութիւնը: Քաղաքական նրբութիւնները զուգորդուած իսլամական կոշտութիւնների հետ եւ համհարզ ընդունած եւրոպական շահադիտական ներհակութիւնները, ծուծն են քամում այն մարտիրոսութեան խաչը շալկած ու Գողգոթայի բարձունքին կառչած հայութեանը:*

*Հայը մեռնում է կաթիլ-կաթիլ:*

*Բանականութիւնը, գոյութեան իրաւունքը, հրճուանքի եւ վայելքի ձայնը կոչ են անում ժողովրդի երաշխաւորներին ու իրենց հրամայական պահանջը շեշտում. «Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու եւ անէանալու, հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որ հայը ապրի»:*

*Ահա հայութեան պահանջը բխած է իրականութեան հրամայականից: Այս պահանջի դրական դիրքի պատուէրներիցն է որ մեզ պիտի տան այն դեմոկրատիք կերպերն ու դրութիւնները, որոնք միայն ընդունակ են երաշխաւորելու մեր կեանքի, կայքի, գոյքի եւ ազգովին ապրելու պայմանները: Եւ հայը իր միջոցները չպիտի խնայէ մինչեւ չստանայ իր բաղձանքների իրական արժէքը՝ հայաստանի տեղական ինքնավարութիւն լայն ռամկավար կարգերով:*

*Կրաւորական տենչերով չէ, որ հայը պիտի հասնի իր մարդավայել ապրելակերպին: Իթթիհատը՝ երկիրը ծախելուն շնորհիւ, միշտ էլ շահադիտական Եւրոպայի մէջ իր բարեկամները կ՛ունենայ, որոնք ընդունակ կը լինեն տալու միայն իթթիհատ-գերմանական բարենորոգումներ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ հայութեան դարաւոր կաղնին ճղաթափ անելու, օսմանցիացնելու դաւադիր նկրտումներ: Յանդուգն պահանջ եւ ոչ-կրաւորական աղերս-ահա մեր դիրքը:*

***

*Ինքնապաշտպանութեան խնդիր կայ դրուած մեր առջեւ, մեր լինել-չլինելու խնդիրը՝ ազգովին ապրելու խնդիրը: Քան երբեւիցէ այժմ է որ մենք պիտի ստեղծենք մեր ազգային առնական քաղաքականութիւնը հիմնուած գոյութեան կռուի երկաթէ օրէնքների վրայ, որի տրամադրութիւնն է հաւաքական ինքնապաշտպանութիւնը իր իրաւունքներով եւ միջոցներով: «Յարձակման դէմ դիմադրութիւնը ոչ միայն արդարանալի, այլեւ հարկադրական է: Անդիմադրութիւնը մեղանչում է թէ եսասիրութեան եւ թէ այլասիրութեան դէմ միանգամայն»: Այսպէս է ձեւակերպում Հերպըրթ Սփենսըր, տիեզերական բարոյագիտութեան այս հրամայականը, որուն ի պաշտպանութիւն ոչինչ ունինք ասելու, եթէ ոչ այն աւանդը, որը Իզմիրլեանը տուեց իր հօտին՝ Երուսաղէմ աքսոր ճանապարհուելու միջոցին՝*

*«Հոն ուր արդարութիւն չկայ, ամէն հաւատարմութիւն կեղծ է»:*

*Ազգային առնական քաղաքականութիւն՝ ահա մեր պահանջը: Յանդուգն պահանջ՝ ահա մեր դիրքը:*

*Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու ու անէանալու, հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որ հայ ապրի:*

# ՊՏՈՅՏ ՄԸ ԹԱՏԵՐԱԳԻՐ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 15-էն*

*հետքերը վստահաբար շարունակւում են դաշլիճում, ետ են գալիս բեմ, ապա կրկին հեռանում բոլորի միջով, ասել է, թէ կեանքի, ճշմարտութեան եւ ճանապարհի միջով... երկու թագաւորութիւնների (երկրային-նիւթապաշտական եւ երկնային-հոգեպաշտ) միաժամանակեայ տրոհումը չի ուշանում: Այդպէս պատիճից հեռանում է ընդեղէնը (լոբազգին): Այդպէս շապիկից հեռանում օձը: Այդպէս լաւագոյն դէպքում դէմքը պիտի հեռանայ դիմակից: Դիմազերծուած կերպարներ շատ ունի Ա. Վարդանեանը: Անդէմ կերպարներ էլ ունի: Հարցն այն է, թէ ասելիքը ո՞ր կողմն է քաշում իրեն վստահուած իշաբեռը: Շատախօս պիեսներում անգամ կայ խեցի, որի մէջ հարկ է, որ լինի մարգարիտ: Եթէ կայ, բեմադրութեան մէջ այն պիտի փայլի: Նման թաքնուած մարգարիտներով են օժտուած «Հրոտիցը», «Ախացելը», «Պախուրցը», «Ագռաւուկը», «Թոխորը» եւ «Սակուրը»: Գրեթէ բոլոր կերպարները (մեծ թէ փոքր) մղում են ինքնահերքման եւ ինքնահաստատման բախումներ: Սակայն գաճաճների կայսերապաշտութիւնը չի վերաճում-վերածւում բարոյահոգեբանական հսկաների առողջ հասարակութեան: Խպլիկ-թափթփուկները միշտ էլ խանգարել ու առիթ գտնում են: Պահածոյատուփը գլորւում է անարգել: Լիքը եղա՞ւ, ձայն չի հանի: Դատա՞րկ եղաւ, կաղմկի: Անհեթեթի պարունակութիւնը ձայն հանելով-աղմկելով է լցւում-կայանում, իմաստաւորւում-կլրջանում: Աննպատակ դուրս գալ չկայ կաշուից: Դուրս եկա՞նք, արդէն մենք չենք: Որպէսզի միշտ մնանք մենք, պէտք է մեր մաշկը պաշտպանենք: Միջանցիկ գործողութեան ետընթաց չկայ: Հակամիջանցիկ գործողութիւնն է, որ կը ջանայ խանգարել՝ սրելու համար բախումը, առանց որի չկայ նաեւ թատերգութիւն Արիստոֆանեսից մինչեւ Արման Վարդանեանը նոյն գաւեշտն է: Ցոյն հեղինակի «Իշամեղուներից» ու «Ամպերից» մինչեւ հայ հեղինակի «Թոխորն» ու «Սակուտը» նոյն խաղն է, նոյն դատարանը, նոյն ապաշխարանքը: Փոխուած են արտայայտչամիջոցները: Իսկ միջոցներն ընտրում է նպատակը, միջոցներն էլ իրենց հերթին պարտաւոր են արդարացնել նպատակը: Մարդկութեան միջատացումը քսաներորդ դարում են հիմա՝ քսանմեկերորդի շեմին, ածանցւում է պատերազմական Մերձարեւելքում, Աֆղանիստանում, Քոսովոյում, այլուր: Զանգուածային ոչնչացման արհաւիրքն է կախուած Դամոկլեան սրի հետ միասին մարդկութեան գլխավերեւում: Հետն էլ էն տնաւեր թուչնահարբուխը: Համահարթեցման մամլեւկը սկսել է ճզմել երկրագունը: Զրկել կլորութիւնից ու ձուաձեւութիւնից, շուտով կը նմանուի դդմազանգուածի... Միջատը միջատին է ոչնչացնում, ինչպէս մարդը՝ մարդուն: Քարիւղի քաշքշուկը վերջապէս կը հասնի անհեթեթութեան: Արեան տեղ շուտով կայսերապաշտների երակներով նաւթը պիտի հոսի: Վայ նրան, ով կրակին կը մօտենայ: Մի գեղեցիկ օր ոչնչի ոչնչացման գործընթացով կը յաղթանակի Ամենինչը: Վարդանեանի բերած գրական-բեմական Ոչինչը մեծ հեռանկար ունի: Այսօր այն միայն ահազանգ է, տագնապ, մարտահրաւէր: Դադար ապրող ընթացքի հարկադրուած արձագանք: Պայթիւնավտանգ մի գործընթաց, որից մինչեւ անհեթեթութիւնն ու ապաշխարանքը կէս քայլ է: Հարկաւոր է, որ անտարբերութեան պախուրցը քաշուի, սանձահարուի երրորդ համաշխարհայինի օճախ հանդիսացող կակրուկը, թանգարան դրուի սակուրը... Հոգեւոր համերաշխութիւնը, փրկարար մշակոյթը պահպանուի, արիւնը չստրկանայ, խիղճը նորից չբռնաբարուի: Ահա Արման Վարդանեանի համամարդկային հոգսը: Նա վաղուայ մունետիկներից մէկն է մեզանում: Անսանք նրան այսօր, որ վաղը չյապաղենք: Գնանք նրա մատնանշած ուղիով: Դիմանանք ապաշխարանքի կտտանքին: Վարենք իրական կեանք մը, որ բոլորինս է իբրեւ պատիժ: Քարշ տանք Անցեալ մը, որ պատիժ է մեզ հասցէագրուած: Նշմարենք Վաղ մը, որ պատիւ ու արժանապատուութիւն է բերելու հայ-հաւաքական գրականութեանը, իրովսանն անձնուրացութիւն է քարոզելու...*

*Եղիցի պատուախնդրութիւնն այդ, որ մեզ պիտի մարդ պահի պաշարանքից յետոյ էլ: Ընդմիշտ:*

*(Վերջ)*

# ՄԵՆՔ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

*Շարունակուած էջ 16-էն*

*ները եկեղեցի, դպրոց, ակումբ, մշակոյթ եւ հայրենիքն են: Այս մատնանշումները նորոգութիւն չեն: Նորութիւնը առանց ընկերային ու քաղաքական աշխարհայեացքի խտրութեան անոնց շուրջ համախմբուելու վճռակամութիւնն է, միասնական ու բոլորանուէր ջանքերով ծաղկեցնելու անոնց վաստակը ու երիտասարդութեան տալու դիրք ու հեղինակութիւն, որպէսզի ժամանակակից սերունդի փորձառութեան հետ գործակցաբար եւ հաւաքական ճիգերով հասնին գերագոյն նպատակին:*

*Զգտիլ՝ հասնիլ ու իրականացնել չի նշանակեր տակաւին: Ասոր համար անհրաժեշտ է կազմակերպուիլ, ունենալ գիտական պաշար ու ռազմագիտութիւն:*

## ՆՈՒԻՐՏՈՒՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ Վարդան եւ Կարինէ Տէփոյեաններ գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը, առ ի գնահատութիւն $300 կը նուիրեն «Մասիս»ին:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

# ԾՈՒԼՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է

*Շարունակուած էջ 16-էն*

*սպասէն մահուան ժամանումին:*

*Այս ապերջանիկ Կրեսոսները ապրեցան, գործեցին ու շահեցան՝ կեանքի շլացուցիչ մակերեսին վրայ, խաբուած տպաւորութիւններով եւ ախտավարակ վայելքներով:*

*Նախընտրեցին մնալ ու շնչել լեռներու անարեւ ստորոտը թանձր մշուշներով պարուրուած եւ լուսապայծառ երկինքը ամպամած փակեցին իրենց կեանքին վերեւ:*

*Սպաննեցին զԱստուած իրենց մէջ, ջնջեցին աղօթքը իրենց հաւատքէն, դադրեցան եկեղեցի յաճախելէ եւ ոսկեդրամը դարձուցին իրենց պաշտելի կուռքը:*

*Բնական է, որ Տիեզերականին սէրէն ու պաշտպանութենէն որբացած այս մեղապարտները չունէին այս վշտալի աշխարհէն իրենց դագաղները ծանրաբեռնած չյայտնուած ու չհրապարակուած սայթաքումներով:*

*Անոնցմէ ոչ մէկը չմտածեց ժամանակին մէն մի րոպէն վերածելու մշտնջենական արժէքի ու առաքինութեան: Խուսափուկ եւ փախստական շահերու մէջ փնտռեցին իրենց երկրային արքայութիւնը:*

*Անծանօթ մնաց իրենց հոգիին, թէ մարդուն բարոյական սպառազինումը Աստուծոյ սէրն է եւ ոչ թէ անիրաւ շահը, բարեգործութիւնն է եւ ոչ թէ յափշտակութիւնը, մարդասիրութիւնն է եւ ոչ թէ վրիժառութիւնը:*

*Հասկցան, թէ մեղքը յանցանք է, ծանր ու աններելի յանցանք, բայց չուզեցին զրկուիլ անոր մահաբոյր հրապոյրներէն:*

*Ցուսահատութեան մատնուած մարդը կը մնայ ցմահ իր տեղը անշարժ եւ նուազագոյն պայքար չի մղեր դուրս գալու այդ դժոխային անելէն:*

***

*Մարդը լոկ ջիղերով ու ոսկորներով հիւսուած մարմին չէ եւ ոչ ալ միայն հոգի: Սխալ է մէկը սնուցանել ուտելիքով եւ միւսը զրկել հաւատքով: Կեանքը ներդաշնակ ապրելու համար երկուքին համագործակցութիւնը անհրաժեշտ է:*

*Որովայնը մինչեւ կոկորդը լեցնելով, հոգին չի լեցուիր: Երկուքն ալ հաւասարապէս պարտաւոր ենք սնուցանել իրենց իւրայատուկ սննդառութեամբ:*

*Ոչ հոգին կրնանք կենսունակ պահել պարապ ստամոքսով եւ ոչ ալ մարմինը շարժել պարապ հոգիով:*

*Հոգիին ու մարմնոյն գործողութիւնները եւ արտայայտութիւնները կը կատարուին միաժամանակ եւ վերջնական դադար կ՛առնեն միաժամանակ:*

*Մարդուն մահէն ետք, հոգին կը համաձուլուի Տիեզերական հոգիին հետ, ուրկէ ճառագայթած էր եւ մարմինը կը տարրալուծուի ու կը կորսուի հողին հետ, ուրկէ ծնած ու սնած էր:*

*Այս մեծ ճշմարտութիւնը անտարակուսելի ու անհերքելի է, համաձայն մարդուն մտաշխարհին մէջ արմատացած անմահութեան գաղափարին:*

*Կեանքի ամենօրեայ պայքարին մէջ մեր բոլոր յաջողութիւնները եւ ձախողութիւնները կը կատարուին աստուածային օրէնքներուն հանդէպ մեր ցուցաբերած դրական եւ ժխտական տրամադրութիւններով:*

*Եթէ աստուածավախ մարդուն կեանքին նշանակէտը երկնային սէրն է եւ ոչ աշխարհային աղքատիկ սէրը, ալ արքայութիւնը երկնքին մէջ փնտռելու պէտք չունի, երկրի վրայ, արդէն տիրացած է ատոր:*

*Ամէն երիտասարդ, իր երազային տարիներուն, զգացական բռնկումներ կ՛ունենայ դէպի տեսլական ոլորտները սաւառնելու: Ոմանք Աստուծոյ զօրութեան յենած կը յաջողին յաղթանակներ նուաճել եւ ապահովել իրենց երջանիկ ապագան: Եւ ոմանք իրենց նախաքայլերուն դժուարութիւններու առջեւ պարտուած՝ կը զինաթափուին եւ կը հիասթափուին եւ կը կորսնցնեն յաջողութեան թանկագին պատեհութիւններ:*

*Այս յուսալքիչ վախճանին հասած է շատ մը երիտասարդներու կեանքը, զինաթափուելով դժուարութիւններու ճնշումէն, անփառունակ անհետացած են աշխարհի թատերաբեմէն:*

***

*Երեւանի մէջ, Կիրակի առաւօտ կանուխ՝ պատարագելու կ՛երթայի Ս. Սարգիս եկեղեցին: Ցրտաշունչ օր մըն էր, մարմնիս վրայ կը զգայի, եղանակին կծող խստութիւնը, հակառակ սեւաթոյր վերարկուիս մէջ պաշտպանուած ըլլալով:*

*Ցանկարծ ձայն մը հասաւ ականջիս, որ պարոն կը կոչէր զիս: Փողոցին անկիւնը ցուրտէն կծիկ դարձած ծերունի մուրացկան մըն էր: Մօտեցայ իրեն եւ ձեռքս հագիւ գրպանս դրի, որ նուէր մը տամ, կանխեց զիս եւ ըսաւ:*

*- Պարոն, կը խնդրեմ, դրամ մի տաք ինծի, մուրացկան մը չեմ, շատեր այս հնամաշ վերարկուիս մէջ ողորմելի մարդ մը կը կարծեն: Ո՞վ էք դուք, որ ձեռքս սեղմեցիք եւ ինծի հետ կը խօսիք:*

*- Քահանայ եմ, այս մօտիկ եկեղեցին պատարագելու կ՛երթամ:*

*- Քահանա՞յ...: Հասկցայ, որ տարբեր մէկն էք, հաւանաբար սփիւռքէն հայրենիք ժամանած հայրենասէր հոգեւորական մը:*

*- Այո, Ամերիկայէն եկած եմ վեհափառ Վազգէն Ա. Հայրապետին հրաւէրովը եւ վաղը կը վերադառնամ Լոս Անճելոս:*

*- Քահանա՞յ եմ ըսիք, այս ո՞րքան բարի քահանայ մըն էք, որ հետս կը խօսիք: Օրուան մէջ քովէս քահանաներ ու վարդապետներ կ՛անցնին, ոչ մէկը չի մօտենար ինծի, կը կարծեն, որ մուրացկան մըն եմ:*

*Երկրորդ անգամ ջերմօրէն ձեռքը սեղմեցի եւ խոստացայ պատարագէն ետք, հանդիպիլ իրեն:*

*Խոստումս կատարեցի եւ գումար մը պատրաստեցի, որ նուիրեմ իրեն: Բայց հիասթափուեցայ որ հոն չտեսայ զինքը: Բացակայութեան պատճառը հաւանաբար, իր մուրացկան չ՛ըլլալն էր:*

## ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ԾՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-էն 1:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ՀԲԸՄ 100 ՏԱՐԻ • YEARS AGBU

*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:*
*Proud Past, Exciting Future.*

A NEW ARMENIAN EDUCATIONAL INSTITUTION

# AGBU HIGH SCHOOL PASADENA

TO MEET THE SCHOLASTIC, DEVELOPMENTAL AND SOCIAL NEEDS OF OUR YOUTH IN PASADENA, GLENDALE, BURBANK AND SURROUNDING COMMUNITIES IN THE SAN GABRIEL VALLEY

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School, a College Preparatory High School Serving the Greater Los Angeles Armenian Community for 30 Years.

CLASSES WILL BEGIN ON

## TUESDAY, SEPTEMBER 12, 2006

- Enrollment open for students in Grades 9, 10 and 11 for the first year.
- First High School Graduating Senior Class in June 2008.
- Offering a challenging college preparatory academic program in a safe, caring and supportive environment.
- Armenian program to focus on the Armenian identity, culture, history and rich heritage of the Armenian people.
- Experienced and dedicated faculty committed to student learning.
- Small class sizes and low teacher to student ratio.
- Professional guidance and counseling.
- Financial assistance available for qualified families.

For further information and how to register your child, please call (818) 883-5379 or (626) 794-0363

AGBU High School - Pasadena
2495 E. Mountain Street, Pasadena, California 91104
www.agbuphs.org

**AGBU CENTENNIAL SPONSOR**

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA® HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com